

ԵՐԱՐԴՈՒՆ



1966

ԱՆՁԵ
ԻԳ ՏՐԵ


Ապրիլ

ԷՐԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

۳

1966



Ե Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ Յ ՈՒՆ

ԱՄԲՈԳԻՈՒԱՆ—Կյանքի տոնը	3
Փ. կշի երաշափառ և Սույր Հարուրյան տոնի առրիվ Ամենայն Հայոց Սայրազոյն Պատ- րիաթ և Կարողիկոս Նորին Սույր Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Երօվ- պէայի հայոց Նորին Վեհափառուրյուն Հայի Սելասիի Ա-ի միջև փոխանակված ճե- ռագրերը	4
Գրիշի երաշափառ և Սույր Հարուրյան տոնի առրիվ Ա. Յոնայն Հայոց Սայրազոյն Պատ- րիաթ և Կարողիկոս Նորին Սույր Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Ռույր եկեղեցիների նոգեր պետերի միջև փոխանակված ողբույնի ճեռագրերն ու դրույրունները	5
Գրիշի երաշափառ և Սույր Հարուրյան տոնի առրիվ Ամենայն Հայոց Սայրազոյն Պատ- րիաթ և Կարողիկոս Նորին Սույր Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Եվիրապետական Արքոնների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողբույնի ճեռագրերն ու գրուրյունները	6
Գրիշի երաշափառ Հարուրյան տոնի առրիվ հայրապետական հանդիսավոր սույր պատա- րաց և Տարող Մայր Տաճարում	15
Ք. ԱՐԱԿՈՒՑ—Սույր Թաղեսու առաջայի աջի մասունքի հանձնումը Երովաչիայի հայոց Նորին Վեհափառուրյուն Հայի Սելասիին	18
Մ Ա Զ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Խ Մ	24
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գանձակալուրյան տասնամյակի առրիվ Եվերներ Մայր Արքոնին	26
Վ Ա Զ Ա Ն Ե Պ Ա Կ Ո Ռ Ո Ս Տ Ե Բ Ր Ա Ա Ն—Խոր Վիրապի վահեր և ոխտազնացուրյուն	30
Տ. ԱԹԱՅԱՆ—Գրիգոր Նարեկացու «Սայի այն իշաներ» տաղի ծայնազրուրյան մասին	35
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻՒՑ Կոմիտասին ճեռ	41
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ—Գրիգոր Տղա	47
Ա. ՔՈՂԱՆԱԶՅԱՆ—Տաճարիկանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնուրյան պահ- պանելուն համար	51
Պ. ՄՈՒՌՈՎԱՑԱՆ—Պրոֆ. Անճ Մելիքիսեդ-Թեկ	53
ԼՈՒՐԻՔ ՄԱԶՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61

כטבְּרָה

Библиография

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ, ԷԶՄԻԱՇԻՆ

«ՀԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine”, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Արու Ս. Էջմիածնի տպարան, 1966 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՅԱՆՔԻ ՏՈՆԸ

Զատիկի հավիտենական գարնան և հաւերժական կյանքի տոնը, բնության վերապրության և մարդու հոգևոր, բարոյական վերածննդյան տարեկարձը:

Քրիստոնեական Եկեղեցին, ամեն տարի, գարնան, սրտառուչ հավատով, կատարում է իր մեծագույն և համաժողովրդական տոնը՝ Քրիստոսի հրաշափառ հարության հիշատակը:

Գարուն է արդեն: Ամեն կողմ բնության զարթության շերմ շունչն է զգացվում, որ մեռած բնության հաղորդում է կյանք ու կենացակալություն.

«Որ ճորոգեաց զտիեզերա» (Ծարական):

Գարնան, կյանքի ուժերի հայթական պողովական հետ, հալատավոր մարդկությունը բերկանքով է դիմավորում Զատիկը, Փրկչի հրաշափառ, Սուրբ Հարության տոնը.

«Այսօր յարեա ի մեռելոց

Փեսայն անմահ և երկնատոր.

Քեզ աւետիք խնդութեան,

Հարսն ի յերկրէ Եկեղեցի»:

(Ծարական)

Զատիկը, սակայն, բնության տոն չէ միայն Եկեղեցու համար, այլ նաև կյանքի, սիրու և հավատի տոն:

Եկեղեցին գեղեցկորեն ներդաշնակել է բնական և հոգեկան կյանքի ուժերի վերագարյունքի, հարության գաղափարները. երբ բնությունը լցվում է նորոգված կյանքի զվարթ խայտանքով, մարդն էլ բերկում է հոգեկան ճորոգության սուրբ հրճվանքով:

Փրկչի հարության պատմական եղելությունը, ըստ Ավետարանի, Ռանդիսացավ հուսափի սկիզբը մարդու հոգենոր և բարոյական վերածննդյան, հավիտենական կյանքի ուրախության: Քրիստոսի հարության ավետիքով և հավատով վերակենդանացավ հին աշխարհը և կյանքը նոր արժեք ստացավ մարդու համար:

Աշխարհին և մարդկության քարոզված քրիստոնեության մեծագույն բարիքներից մելք հարության հավատն է, որը մի նոր կյանքի և կենդանի գաղափարախոսության սկիզբը հանդիսացավ մարդկային կյանքի և մտածողության պատմության մեջ:

Զատիկը կյանքի ուժերի հայթանակն է աշխարհի մահացուցիչ խավար ուժերի վրա, սիրու հարթությունը՝ ատելության, չարիքի վրա: Եկեղեցին հալատում է Քրիստոսի հարության, ուրեմն և կյանքի հայթանակին: Կյանքի սերը պարտության է մատնում մահվան ուժը, չարիքի զորությունը:

Դարեր շարունակ մահը, որպես անպարտելի բռնավոր, անխնան հարվածել է մարդկությանը, ծանր մղջավանքի նման ճնշել կյանքի ուժերի վրա, տիրել մարդկային մտքին ու զգացումներին: Սարդը միշտ թույլ և անզոր է զգացել իրեն մահվան առաջ:

Քրիստոսն էլ գերծ չմնաց մահվան պատճառած դառնությունից:

Բայց և Քրիստոս միայն հայթեց մահվան իր կյանքով և սիրով, տիրեց կյանքին և ցուց տվեց, որ գերեզմանից այն կողմ էլ կյանք կա, անմահություն կա և ինքն է տերը կյանքի և մահվան:

Արդարն, քրիստոնյա մուծողության համար, գերեզմանով չի վերջանում կյանքը: Եթե այդան լիներ, չեր ապրել այս վշտի և ցայի հովուում»: Մի թե գերեզմանով են վերջանում մարդու ստեղծագործող միտքը, նրա բոցավառ սերը, հույսը, երազներն ու ձգուումները:

Գերեզմանը քրիստոնյա մարդու համար ունայնության փոս չէ, այլ նոր կյանքի, հավերժական կյանքի համարու, մի լուսամուտ, մի անցք՝ բացված անմահության, հաւկերժության վրա:

Որքան միմիթարական, սփոփարա է հարության գաղափարը տառապող մարդկության համար.

Մի լազք, զի խնդրէք զեմդանին ընդ մեռապա:

Կյանքում կա՝ սրանց ավելի սրտապընիչ, սփոփարա միմիթարություն բոլոր նրանց համար, որոնք վաղաժամ հողին են հանձնել իրենց սիրելիներին, իրենց երազներն ու հոգու թոփքները:

Արդարն, ըստ մեր հավատի ու փորձառության, «մեռեալք յառենն»: Քրիստոսի հարությունը հեքիաթ կամ այլաբանություն չէ, այլ ապրված կյանք և իրականություն: Պատուված է մահկան վարագույրը և իրար են շաղկապված դնդմիշտ կյանքն ու հավերժությունը, ժամանակավորն ու հավիտենականը: Երկրախոր այս կյանքը գրավականն է անմահության, հարության:

Քրիստոսի հրաշափառ հարության հավատը ոչ միայն լրում է փրկագործության խորհրդի, այլ նաև հիմնաբարը քրիստոնեական Եկեղեցու կյանքի:

Հեթանուաց մեծ առաքյալը Պողոս այսպէս սուր, վճռական է դեռու հարցը. «Եթէ Քրիստոս չից յարուցեալ, ընդունայն է քառողութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր, և գտանիցիմք սուր վկաքք Աստուծոյ» (Ս. Կորնթ. ԺԵ 14):

Քրիստոսի հարության ճշմարիտ վկայությունը Քրիստոնեական Եկեղեցու եղինազարամյա կյանքի և գործունեության փաստն է և այդ հավատից սնված քրիստոնեական բաղաքակրթությունը:

Քրիստոսի հարության ամենաշերմ հավատացուներից մեկն եղավ նաև մեր ժողո-

վուրդը: Նա ոչ միայն վկայեց Փրկչի հարությունը, այլ ապրեց մամալիան հարության այդ վկայությունը իր համատակրությամբ. «Ձշարշարան Քրիստոսի ի մարմնի հմտութեամ» (Գաղատ. Զ 17):

«Հայ ժողովուրդը,— ասում է Վեհափառ Հայրապետու իր զատկալրան քարոզում,— իր բազմադարյան սլատմությամբ և իր լուղած ժառանգությամբ, կենացնի վկայություն մը եղավ Քրիստոսի հարության ու Անոր Բավիտենական կենացնության»:

Մեր ժողովուրդը խաչի և մամիկան հաւատարիներից անցաւի, հասնելու համար իր հարության այգաբացին, րորվեան հավատաց հարության ճշմարտության. «Յոյս նոցա լի է անմահութեամբ»:

Դարերի ընթացքում շատ է չարչարվել, համատակլել հայ ժողովուրդը:


Հաճախ մեր հայրենի հողը դարձել է մեր ժողովուրդի գերեզմանոցը, ինչպէս 1915 թվականի ապրիլյան Եկեղեցի օրերին: Բայց մեր ժողովուրդը միշտ գիտեցել է խաչի և Պողոգության իր կյանքը պսակել հարության սրտառուչ հակառակ և վերածննդյամբ: «Նա Փրկչի նման հարություն է առել Վճռական կամքով և մահկան դաշտը վերածել հավիտենական կյանքի կանաչ դաշտերի. «Եմուտ ի նոսա շունչն, եղեն կենդամիք և կանգնեցան կացին ի վերայ ոտից իրենց ժողովուրդը բազում յոյժ յոյժ» (Եզեկ. Ա 10):

Մեր ժողովուրդի կյանքի գարունն է այսօր, հարության այգաբացը:

Քրիստոսի հարության հավատի ու հրաշքի մեջ անձ ու պայծառակերպված, երեկով մեր համատակլ ժողովուրդն այսօր, իր հայրենի հողի վրա, վառել է իր հավերժական կյանքի խարուկը, տեր է դարձել իր հողին ու ճակատագրին, և նոր կյանքի ապահով ու խաղաղ պայմաններում, Վեհափառ Հայրապետի քարոզի ճշմարիտ բնորոշմամբ, դարձել է իր Եկեղեցիով, իր մշակույթով, «ոգեկան առաքելություն մը կողոյ ու կենսագործող առաջադեմ ազգություններեն մին»:

«Փառք հրաշափառ յարութեան քո, Տէր:

Ես առավել փառք հրաշափառ հարության քո, Եկեղեցի Հայրատուանայց և ազգ իմ սիրելի, ժողովուրդ հայոց:





ՓՐԿՉԻ ՀՐԱԺԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕՇՈՒԹՅՈՒՆ S. S. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ
ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ Հ Ա Ց Լ Ե Ս Ե Լ Ա Ս Ի Ե Ա -Ի
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՑԼԵ ՍԵԼԱՍԻՆ Ա -ԻՆ

ԱԴՐԻՍ-ԱԲԵԲԱ

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Հայ Եկեղեցու անոնից շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության
Ս. Հարության ավետիստվ, մալյխելով Ձեզ երկար, խաղաղ տարիներ՝ իբրև
սուրբ հավատի պաշտպան, ի փառս Եթովպիայի և համայն քրիստոնեության:
Հարգալիր ողջույններ Ձերդ Վեհափառության Ս. Էջմիածնից և Մեր
սրբի խորքից:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՇՄԻԱՇԻՆ

*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԷՇՄԻԱՇԻՆ

Ձերդ Սրբության հայտնում ենք Մեր անկեղծ շնորհակալությունները
Զատկի առքիվ Ձեր հոգած օրինությանց, ողջույնների և բարեմաղթությունների
համար: Ձերմորեն փոխադադում ենք Ձեր բարեմաղթությունները:

ՀԱՑԼԵ ՍԵԼԱՍԻՆ
ԿԱՅՍՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ

ԱԴՐԻՍ-ԱԲԵԲԱ





ՓՐԿՉԻ ՀՐԱԺԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
 ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ
 ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
 S. S. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ
 ԵՎ ՔՈՒՑՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ
 ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՑՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
 S. S. Պ. Ա. Վ. Ղ. Ո. Ս. Զ. Պ. Ա. Պ. Ի. Ն. (Հոռմ),
 Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
 Ա. Թ. Ե. Ն. Ս. Գ. Ո. Ր. Ս. Ս. Ի. Ն. (Ստամբուլ),
 Մոսկվայի և Համայն Ռուսատանի Պատրիարք Նորին Սրբություն
 Ա. Լ. Ե. Ք. Ս. Ի. Ի. Ն. (Մոսկվա),
 Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
 Ք. Բ. Ի. Ս. Տ. Ս. Ա. Փ. Ո. Ր. Բ.-ի. ն. (Ալեքսանդրիա),
 Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
 Սրունա Կ. Յ. Ո. Ի. Ր. Ե. Ղ. Զ.-ի. ն. (Ալեքսանդրիա),
 Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
 Բ. Ե. Ն. Ե. Դ. Ի. Կ. Տ. Ո. Ս. Ի. Ն. (Երուսաղեմ),
 Ալեքսանդրիայի և Երուսաղեմի Պատրիարք Նորին Սրբություն
 Մ. Ա. Ք. Ս. Ե. Մ. Ո. Ս. Գ.-ի. ն. (Կահիրե),
 Ամսիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
 Թ. Ե. Ո. Դ. Ո. Ս. Ի. Ո. Ս. Զ.-ի. ն. (Դամակոս),
 Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և Համայն Արևելքի Պատրիարք Նորին
 Սրբություն Ի. Գ. Ն. Ս. Ի. Ո. Ս. Հ. Ա. Կ. Ո. Բ. Բ.-ի. ն. (Դամակոս),
 Համայն Եթովպահայի Պատրիարք Նորին Սրբություն
 Բ. Ա. Ս. Ի. Լ. Ի. Ո. Ս. Ի. Ն. (Արդիս-Արեքա),
 Հնդկաստանի և Արևելքի Մայաքար Եկեղեցու Կաթողիկոս Նորին
 Սրբություն Տ. Ի. Մ. Ո. Թ. Ե. Ո. Ս. Ի. Ն. (Կերալա),
 Համայն Վրաց Պատրիարք-Կտթողիկոս Նորին Սրբություն
 Ե. Փ. Ր. Ե. Մ. Բ.-ի. ն. (Թրիլիսի),

Ոումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԺՈՒՍԻՆԻՆ (Բուխարեստ),
Բովզար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),
Լիրանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ՊՈՂՊԻՆ (Անդրկապուտ),
Քենտրոնական Սրբապահություն, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄԶԻՆ (Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՏՈՍՈՄՈՍԻՆ (Աթենք),
Սէրբիայի և Համայն Հարավավալիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄՈՆԻՆ (Բելգրադ),
Հայ Կաթողիկէ Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՆ (Բեյրութ),
Կիպրոսի Արքապահություն Նորին Սրբություն
ՄԱԿԱՐԻՆՈՍԻՆ (Նիկոպիա),
Նորին Ամենապատվություն Կարդինալ ԱՂԱՋԱՆ ՑԱՆԻՆ (Վատիկան),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարաուղար
դոկտ. ՎԻԼՅՈՒՄ ՎՈՐԴԻՆ (ԺՈՒՖՏԻՆ) (Ժըն),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՈՆ ԼԵՎԻՆ ԳՈՍՈՆ ՍՔԵՅՖԻՆ (Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքապահություն
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏՈՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքապահություն
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՅՏԻՍԻՆ (Տալլին),
Զեխոպակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
դոկտ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻՆ (Պրագա),
Միջին Արևելքի Հայ Ավետարանական Եկեղեցիների միության նախագահ
Վերապատվելի Հ. Ա. ՀԱՐՈՒՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միարանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊԻԻՆ (Երևանակամ),
ԱՄՆ-ում Քրիստոնի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ
Գերարդանապատիկ Հայր ՌՈՒԲԵՆ ՄՅԱՅԻԼ ԵՐԻՆ (Նյու-Յորք),
Մոնակոյի Եպիսկոպոս Գերաշնորհ ՇԱՆԻԼ ՌՅԱՆՊԻՆ (Մոնակո),
Միխարյան ուխտի Աքրահայր Գերիարքելի Հայր
ՀՄԱՅԱԿ Վարդապետ ԿԵՍԻԿՅԱՆԻՆ (Վեճետիկ),
Միխարյան ուխտի Աքրահայր Գերապահ Հայր
ՄԵՍՐՈՊ Վարդապետ ՀԱՊՈՁՅԱՆԻՆ (Վիեննա):

*

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Մեր սիրոց լեցուն Փոկչի յուսափայլ հարության ուրախությամբ, Հայ
Առաքելական Եկեղեցւուն անունով կողջունենք Զեզ և Զեր մեծ Եկեղեցին, Մեր
աղոթքը միացնենով Զեր աղոթքներուն, որ Քրիստոսի հարության յուլմը առա-
տապես ճառագայթե աշխարհի վրա և բոլոր Եկեղեցիներն ու ժողովուրդները
գտնեն ճանապարհը ճշմարտության, արդարության և խաղաղության:

Զերմապես կմաղթենք նաև, որ Տերը պարգևեն Զեզ լիակատար առող-
ջություն և զորավիր լինի. Զեզ, որպեսզի շարունակենք Զեր սուրբ առաքելու-
թյունը՝ ի մխիթարություն մեր օրերու մարդկության:

Մնամք հարգալից սիրով Զեր եղբայրը ի Քրիստոս

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՑՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐՈՒԱՐ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ

*

Ի քրիստոս սիրով միացած, եկը մի անգամ ևս միասին տոնում ենք Նրա հաղթական հարությունը, ջերմորեն ողջունում ենք Զերդ սիրեցյալ Սրբությանը, բարեմաղթելով Զեզ, Զեր հոգևորականության և հավատացյալներին գատկական առոր օրինություններ:

ԱԹԵՆԱԳՈՐԱՆ

Տիեզերական Պատրիարք Հովհաննես

*

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Քրիստոսի հարության լուսավոր և ուրախալի տոնի առթիվ, քրիստոսավանդ սիրով ողջունում եմ Զերդ Սրբության եղբայրական ողջագործմանը ու բերկրանքով սրտագին մաղյում, որ հարուցյալ Աստվածը միշտ իր հովաննեն տարածի մեր եղբայրական սիրո ու համագործակցության վրա և օրինի այն գործը, որին կոչված ենք ծառայելու իր հրամանով:

Հայցելով Զեր սուրբ աղոթքները, մնամ Զերդ Սրբության նվիրված ի Քրիստոս,

Ա. Լ. Ք. Ս. Ի.

ՄՈՍԿՎԱ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

*

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

«Արդարն, յարեան Տէրն ի մեռելոց»:

Փրկչի հարության ավետիսը լցնում է մեր սրտերը բերկրանքով, սիրով և հավատով:

Աստուծո մասնավոր արտոնության շնորհիվ, մենք ծառայում ենք Նրան այն սրբազն վայրերում, որ Նա պատարագվեց մեր փրկության համար, և տոնում ենք Զատիկի հազարավոր բարեպաշտ ուխտավորների հետ, որոնք Ավագ շարժվա մեջ լցրել են Եղուաղեն սուրբ քաղաքը:

Ս. Հարության Տաճարից մեր խոնարի աղոթքներն ենք վերառաքում աշխարհի խաղաղության, քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և բոլորի միության համար:

Թո՞ղ հարուցյալ Փրկչու օրինի մեզ բոլորիս իր հարության շնորհներով և զորացնի իր Եկեղեցու Գլուխներին՝ գործելու իր փառքի համար:

Զերմորեն փոխադարձում ենք Զեր զատկական շնորհավորանքները և մնում ենք լավագույն բարեմաղթություններով Զեր եղբայրն ի Քրիստոս,

ԲԵՆԵՑԻԿՑՈՒ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հովհ Օրթոդոքս Պատրիարք Երուսաղեմի

*

Օրինյալ լինի Աստված, Հայոք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի և Հայոք ամենայն միմիշարությանց, որը մեզ բերեց ուրախությունը Զերդ Սրբությունից համար ատանալու: Եվ այս համակը հասնում է մեզ Զատկական տոների առթիվ, բերելով մեզ այն բարեմաղթությունները, որ անում է Զերդ Սրբությունը, որպեսզի Քրիստոսի հարության լույսը փառի աշխարհի և եկեղեցիների վրա, որպեսզի մարդիկ գտնեն ճշմարտությունը, արդարությունն ու խաղաղությունը:

Այս փաստաթուղթը, իր ազնիվ կեցվածքով և իր արտահայտած գագամունքների վեհությամբ, մեզ համար պատմական դեպք է, նշանակելով շփման սկզբավորությունը—կամ վերսկսումը—մեր երկու եկեղեցիների միջև: Ծշմարիտ է, որ մենք բարեկամական փոխարարերություններ ենք պահպանում Կիլիկիայի հայոց Կաթողիկոսության և Երուսաղեմի հայոց Պատրիարքության հետ, բայց աս առաջին անգամն է, եթի Ամենայն Հայոց Գերագույն Կաթողիկոսը թղթակցության մեջ է մտնում մեզ հետ: Սա վստահարար էկո-

մենիկ սքանչելի շարժման հետևանքը է, մեր ժամանակներում երևան եկած Ս. Հոգու կողմից, վերջապես մերձեցնելու համար բաժանյալ քիստոնյաներին: Սիրո այս փոխադարձ բացումը մի պարզ է, որ, շնորհիվն Աստոծո, կաճի և ի վերջո մեզ բոլորին կամրջացնի Միության մեջ, ի՞նչպես, ե՞րբ և ի՞նչ միշոցներով որ Աստված այդ կամենա:

Ալղոթում ենք մեղքին և մահվան հաղթահարող Տիրոջ, որպեսզի Զերդ Սրբության, Զեր նիշրապետության, Զեր հոգևորականության և Զեր բաջ հավատացյալների սրտերը լցնի ուրախության, լուսի և ուժի շնորհներով, որոնք բխում են Փրկչի փառապանն Ս. Գերեզմանից:

Սիրալիր հարգանքներով և եղբայրական սիրով, ի Քրիստոս նվիրյալ Զեր եղբայրը,

ՍԱՀՍԻՄՈՍ Գ.

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի,
Աղեքսանդրիակի և Երոսաղեմի,
Կարդինալ Ս. Եկեղեցու

ԿԱՀԻՐԵ

*

«Քրիստոս յարենի ի մեռելոց»:

Այս ուրախ առիթով, որը թամն է յուրաքանչյուր քրիստոնյայի սրտին, ողջունում և շնորհավորում ենք Զերդ Ս. Օծության, անկեղծորեն մաղթելով Զեզ արևատություն, Զեր Եկեղեցու հոգևոր դասուն և աստվածառաջաշտ հայ ձողովրդին խաղաղություն, բարօրություն:

Եղբայրական սիրով ի հարուցյալ Քրիստոս,

ԹԵՌՈՂՍԻՄՈՍ Զ.

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

*

Սրտանց ողջունում և շնորհավորում ենք Զերդ Սրբության մեծ տոնի առթիվ, երբ Փրկիչը հարյալ ի մեռելոց, հայոց մահվան և իր իշխանությունը սփոնց համայն մարդկության լրա: Սեր Փրկչի հարության շնորհներով, ազատվեցինք սատանայի և մեղքի լծից և որդեգովեցինք նրա աստվածային թագավորության մեջ: Քրիստոսի Հարության տոնը հիշեցնում է մեր Վերջնական փրկությունը, երբ նրա երկրորդ գալստյամբ րոլոր հավատացյալները ժառանգելու են երկնային թագավորության փառքը, անվախճան ուրախությամբ:

Զերդ ի Քրիստոս,

ԻԳՆԱՑԻՄՈՍ ՀԱԿՈԲ Գ.

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

*

Մենք և մեր Եկեղեցու Ս. Սիմոնը սիրով ողջունում և շնորհավորում ենք Զեզ Քրիստոսի սուրբ հարության տոնի առթիվ:

«Քրիստոս յարենի ի մեռելոց»:

Ալղոթում ենք առ Աստված, որ գորանան Զեր հոգեկան և մարմնական ուժերը, որպեսզի կարողանաք շարունակել Զեր բազմաբեղուն գործունեությունը Հայ Եկեղեցու պայծառության և հոգիների շինության համար:

«Օրինեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Հանձնելով Մեզ և մեր հավատացյալ հոտը Զերդ Սրբության աղոթքներին, մնում ենք հարգանոր, շերմագին սիրով և աստվածային ողորմությամբ եղբայր ի Քրիստոս,

ԵՓՐԵՄ Բ

ԹԲԻԼԻՍԻ

Պատրիարք-Կաթողիկոս համայն Վրաստանի

*

«Արդարք Քրիստոս յարեան ի մեռելոց: Ալելուիա»:

Քրիստոնյամերի այս հաղթական ավետիսը արձագանքում է դարերի միջուկ: Այս տարի Սրբների և Արևմուտքի եկեղեցիները միասին են տոնում Զատիկը, և ուրախալի այս դեպքը սրտագին է հնչում, քանի որ բոլորս համատեղ ենք աղոյում Տիրոց:

Մենք բոլորս, կաթոլիկ և առաքելական եկեղեցիներս, առաքելությամբ, որպես կենացի խորհրդանշան մեր Փրկչի մահվան և հարության, պատկանում ենք Քրիստոսին:

«Քրիստոս յարեան ի մեռելոց, առաջին պտուղն ննչեցելոց»:

Ս. Պողոս առաքյալի այս խորենը կազմում են Զատկվա օրվա ամայական պատարագի մասը և գեղեցկորեն բացատրում, թե ինչո՞ւ եկեղեցական սովորություն մեծարում է այսօրն ավելի քան մյուս օրերը: Քրիստոս հաղթեց մահվան և նա երեք չի կարող մահանալ նորից: Նրա հարությունը գրավական է մեր ամենական հարության:

Թո՞ղ ամենակարողն Աստված օրինի Ձեզ, սիրելի՝ Եղբայր, և թո՞ղ Ձեր բոլոր հոգևորականները և հավատացյալ ժողովորդը ուժ ստանան Քրիստոսի հարությամբ:

Եղբայրական սիրով և շնորհավորանքներով, Ձեզ սիրող եղբայրն ի Քրիստոս,

ՄԱՅՔ ՌԵՄԶԻ

Արքեպիսկոպոս Քենտրոնիի,
ԼՈՆԴՈՆ Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիայի

*

Ձերմապես հոդում ենք Ձերդ Սրբության մեր եղբայրական շնորհավորանքները մեր Տիրոց Հարության տոնի առթիվ և մեր հոգին սուրբ ուրախությամբ լի, սրտեռանդն ավետում ենք.

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

*

Ողջագուրում եմ Ձեզ մեծ սիրով և ամբողջ սրտով շնորհավորում եմ գոռչելով.

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Հարություն առնելով մեռյալներից, մեր Փրկիչը իր վրա վերցրեց աշխարհի մեռքերը, մեզ արդարացրեց, հաշտեցրեց մեզ Աստուծո հետ և վերացրեց բաժանումը մարդկանց միջև:

Ձերմեռանդ կերպով աղոյենք առ հարուցալ Քրիստոս՝ լուսավորելու ճշմարտությամբ բոլորին, որպեսզի համությունն ու խաղաղությունը տիրեն համայն աշխարհում, ի փառ Աստուծո և հուրախություն մարդկանց:

Հայցելով Աստուծոց Ձերդ Սրբության համար ուժ և առողջություն, մնում ենք կարոտ Ձեր աղոյքներին և միշտ հավատարիմ Ձեզ,

ԿԻՐԻԼ

ՍՈՖԻԱ
Պատրիարք Բուլղարիայի

*

Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ, խնդությամբ լեցուն սրտով դիմում ենք Ձերդ Սրբության, շնորհավորելու և գոչելու.

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Թո՞ղ հարության ուրախ ավետիսը համակի ու լիացնի Հայաստանյաց քույր Եկեղեցու հոգևոր դասի և համայն հավատացյալների սրտերը ու զորացնի մեր բոլորի հավատն ու նվիրումը հարուցալ Քրիստոսի հանդեպ:

የኢትዮጵያና ከሳይንስና

גַּתְתָּאָבָה

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

վլեզվու տոշ մզր դ յոթեւամը նազ հվիշմաք մզր կոմիտու Ամպցցաց հվիմց
-դիտող դ Ամպցցամունք յոթեւանունք դ Ամպցցրստունք ամզր դ Ամպցցամունք
և յոտպազ մզր ժայռուցուստ Դաշտամասու շոկամանակ հկյուծաց

*

Յարու պիվնաւոհ Ժմովմտով
Դուռը Ռայոն Ծք ՈՍԱՏԳ ՈՍԿՐՈՒԿՎ

ଓ'ପ'ା'ବ'ନ'

‘Եվկուսն յունեամզ ստիլոց
-պէս և նաև ժբույր խամ ‘Աճվուռոյից վժյումոքը և վժյութեմոց դ Աճյունուն և
-և մզր ամփ բազ յուհումուն կիյսնչ ‘Աճ ստիլոցի ‘Ժղճղոց’
:Ժղճղոց
-յոց տար մզ ուսե ‘Աճմօ յուհումուն վիլ դ Աճյունուն մզր վշջուու
-ը Շ Ո դ վժյումոց միու տշկր ժյղճկի խատու վ ժյունուն կիյումաց
:Եվկուսն կի յուհումորք դ Աճունուն յուհումուն դ Աճ
-վշջուու վիզմու մզր տակմուտո վեզր դ վեզր զյծ յուհունուն կունունու
-ու դ կունուն մզիմք յուհումուն մզր ս ‘Հաւեւնուր «Բնակոք վ տագուն
ուստովմէ» ժյղճեմ վուվո յուհումուն քան ամփ յուհումուն վակու :Աճյունուն
-նոր ջնկիյու դ Աճյունուն մզր յուհումուն վեզր տակմունու վեզր յուհումուն
ժյղճեմու կիյուն ամփստ յուհումուն ս կ միունուն զյու վուվո

*

ՎԻՌԱՆԱԼՂԴՅ ՍԻՄՐՄՅ Դ ՎՃԵԳՅԵՂ ԽԱԽԱՀՈՎԻՂՄՅ
ԸՆԸՆՏԾՈԽՈՎՎԿ

દૃગ્ય

Ամսշ Վիստ

-ոված ուսով Այս քոյլուրի մյույլմատսուի յումզմակը դ բոհակը Վերղևուն
‘Այս աւելացած ձևակ Խմբաւմոց յ վակալիսաք մզոռուստով դ յութեայդիմ ս-
ստաց մզ ‘Եզ մյու բաւուր դ Այտմաւօք ։ Ո նազ մզ կ մյու բայսն ս
դ բամսից կայ իվելու կատ յութեաւմ ։ Ո ստիոնուց կատուվմ ։

*

Աճեղնագիր ցոլիկունուպնշ ժմովմտուն
հոնուսն իւնուսսպուն Տհուն

۱۰

‘Լոմմավիյ ստելամմը նևճզ խամփո ևցոլուստովմէջ
:«Վոստովմժ սցվելումով կ լողցցմօ»
:Այստշոհի ատոյուղիուտողի մղջ աւղիլոցյամթ քան սոլիդնաց
η սյանելածնաստ եղջ աւղցամաց ուստովմժ լոմբաւմոյ ստ բդ բաւանալ
:Ալրույ աւղցամադո սյանելակունոյ դ մգո դձվու
նցուկնամոր ‘ումի վակմզ Ամպյութեստու ումշ աւղցուստու դ աւղեամթ Ամրույ
եցր սյանելայցիուտումուն յոթեմմն դիմ ։Կ սյուկիտմի վցցմի սոկորմադի
-ու սմովը Հա միութեստոց զյուկուստովի գումտու փուտովէ բդն սոհկու
:«Ենկազը կ լողմով ուստովմժ»
:իվուս

*

ՎՐԱՎՃԵՐՈՒ ԵՐԿՐՈՒ ԺԱՄՎԱՆԴԵՐԸ

ପ୍ରକାଶକ

‘Թվիդյաստղեան դ ուստովմէջ կ մոռակ
ՆՊԾ տՆկի Տյզ բայր ‘Դվագյանքան մասն մէց Ազգ Խաղաղություն’
: Հյութեանմը Նպէց Լիմանքու համար Եղիշեալման Ճայտ Անաօ

*

Երկնքի և երկրի Արարիշը, մեր փրկության համար մարդացած և խաչված Փրկիչը, եղրորդ օրը հարություն առնելով, սկզբու դրեց բոլոր մարդկանց հարության:

Փրկչի հարությամբ վերջ տրվեց դժոխքի թագավորությանը, մահը մահացավ և մարդկությունը կոչվեց հավիտենական կյանքի:

«Որպէս Աղաման ամեներին մեռանին, նոյնպէս և Քրիստոսի ամեներին կենանացացին» (Ա. Կորեթ. Ժ' 22):

Երկինք և երկիր ուրախության մեջ են, իրեշտակները և մարդիկ ուղղունում են Տիրոջ հրաշափառ հարությունը:

Մենք ևս նոյնակի ուրախությամբ և տոնականորին տրամադրված մտածումներով ողջունում ենք Ձերդ սիրեցյալ Սրբությանը և ավետում:

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Ամբողջ պրտով աղոթում ենք Ձեր քաջառողջության համար, որպեսզի բարձրյալն Աստված հոգեպես և մարմնապես զորացնի Ձեզ Հայաստանյաց Ս. Եկեղեցու առաքելության և պայծառության նվիրված Ձեր աստվածահան աշխատանքներում:

Մասմ միշտ Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս,

ՄԱԿԱՐԻՈՒ

Արքեպիսկոպոս Կիպրոսի

*

Թո՞յ Զատկի տոնի ուրախությունը լինի Ձեր և Ձեր բոլոր հավատացյալ ժողովրդի հետ:

ՎԻՍՍԵՐ Դ ՀՈՒՖՏ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտողար

*

Երբ այս տարի ամբողջ քրիստոնյա աշխարհը՝ Արևելքը և Արևմուտքը միասին տոնում են մեր հաղթական Տիրոջ հրաշափառ Հարության տոնը, այս ուրախ աղոթով շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը, հանուն Եպիսկոպոսական Եկեղեցու:

Զատիկը մեզ համար նշանակում է, որ մենք ազատվել ենք մեր վաղեմի թշնամոց:

Քրիստոսի Հարության տոնը նոյնպես մեր հաղթանակն է: Այս օրենին, երբ չար մարդկում են տապալել Աստուծո թագավորությունը, քրիստոնյա ժողովուրդը իր Տիրոջ հարությամբ ցույց է տալիս իր միասնությունը: Մինչ քրիստոնեությունը միասնաբար տոնում է Հարության տոնը, մենք հրավիրում ենք Ձերդ Սրբությանը միանալու մեր աղոթքներին, որպեսզի հարուցալ Փրկչի խաղաղ իշխանությունը թագավորի ամբողջ աշխարհում:

Ձերդ Սրբության առողջության և Ձեր Եկեղեցու ու Ձեր ժողովրդի բարորության լավագույն ցանկություններով աղոթող,

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ

Ն Ց Ո Ւ -Ց Ո Ր Հ

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

*

«Քրիստոս յարեան ի մեռելոց»:

Խնդրում եմ Ձերդ Սրբության լուղունել իմ շերմագին ողջույնները Քրիստոսի հարության լուսապայծառ տոնին առթիվ:

Քրիստոսի հաղթանակը մահվան հանդեկ՝ հավերժական լույսի հաղթանակն է խավարի դեմ: Հավերժական կյանքի նկատմամբ բոլոր քրիստոնյաների ունեցած հույսն է այն:

- յնայ մաս մա վեցտ ՚զգր վագյութեածոտիկո մզր դ մզր դ վշվ Ամէց Խմբաւ - ոց մա ՚բաւծւստ դ ուկի վագմոնչո մասա բաւսփո դ ուսւ մա ՚Ամ վշստ ուն յգոռովք տղա վամիսնաք մզց ժցդ բայցորդուս ժցդը ՚հասոտիկո Կոստովէ՛ ուսուշ ՚զկմֆ յդ բայցով նազտու մզր յշշստ մաստ ուն յմեւսւտ ՚

*

յութեավր տամպյանքնեղի
յոհկացումուտզի՛ղ նոշ վժնկղմն՛ Ասիտչմզ.Ո յոթեռովող,
Ն՛ուշնսյոնլո՛ց Փ օդշշունուշ Վ'լինտունոյցն

ପ୍ରକାଶନ

-Ժյութեմու և շմզո շոկամոմանգ մղբ դոց ոգիշչյվ ‘Ամպյուտավելոր շոմենս
-ու’ Ո սինդոկակ շոկամոմատպիղ լու՝ ‘մղՏ ստփուղդի ՚Ժղճպաւսնց’

ողիշյակ 'ոմի վմիկ վիմտտոհ նժրող սգատող վեռդիմս 'զյօթումս եղը. 'ՄիԱ
-պյատ յամենամոց նշմկյլկապը փատովմէ ուսովշ և քրիմս վեցը և 'Արուաց
վյունացի յլ՛ը : Ճշր յոթենակձեւում Ալիյուռուուվմէ մաշ մայամենամս յամեն
-ամոց Ժշգննարի իվելու յաշտ մաս յոթենամշ փատովմէ ուսովշ

*

ՀԱՅԵԱՀՈՎԻՂՋՄԱՆ ԽԱՆՉԱՂՋ ԵՄԿՈՎԵԼԻՆԴ-ԵՄԿՈՎԵԼԱՊԻՂ ՎՐՈՒՄՍՏՈՎ ՏՎՈՒՑՎՀ ՀԱՇ

ט' חורב

‘Նմեց սկզբանդիյու ժայռեմբու սվասով
:Առողջությունը ողովություն է մոհայ սաքրման վմշութի
յոհերքագիւղ դ յոթելամախութեալ սկզբանդ ճպտուսությ ձյր վաղակիս և
վագումն մզր մմս ‘սմելայ վմղոյսայշ յոթելամբու վչկմֆ մզր մմղոյսամեւսությ
-զմուճ յիսեմիմլ դ օնկիյու բկ եպյանայն յոթելամբու նմեց բգ րասանյու ։
«Ենկազար կ լրգմու ոստովագ»
·իսայնաւան տոեմբությունը դասու վմղոյնասույմթ

Հայնածնու տուեմսոց պատմով վաղարշատով
Մարտի Ապութեամսու նազը ոչ բացածն իւթեամ նու ո կ իւտոց ճվամաց

*

ոսկեպահագալ տաճակից
յոհանական-յոհայումատափիր վմովիտո՞ւն

ପ୍ରାଚୀ

պես Բամախամրված եք ամբողջ աշխատացյալների հետ, որոնք
երկրպագում են նրան:

Ի Քրիստոս Բախատարիմ Զերդ,

ՌՈՒԲԵՆ Հ. ՄՅՈՒԼԵՐ

ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների
ազգային խորհրդի նախագահ

Ն Ց Ո Ւ-Ց Ո Ր Ք

*

Զատկի նախօրյակին, հղում եմ Զերդ Սրբության իմ ամենաչերմ մաղթանքները: Աղոթում եմ Բարուցյալ Փրկչին՝ Զերդ Սրբության պարզեցնելու բազում ուրախությունները և քրիստոնյա Հայաստանին ու նրա բոլոր զավակներին՝ իր օհնությունները:

Ես անոռանալի հիշատակներ եմ պահում Եջմիածնի սուրբ հողի վրա իմ անցկացրած օրերի առթիվ: Դարձյալ հուս ունեմ այցելել Եջմիածնին, Զերդ Սրբության ճշիրելու համար իմ առաջիկա գիրքը, որի բովանդակությունն է այդ սուրբ ուղևորությունը:

Բարեհաճեցեք հաղորդել իմ երախտագիտությունը Զերդ Բախատար Սորբ, եպիսկոպոսներին, քահանա հայրերին և վանքի պաշտոնեության:

Համբուրում եմ Զերդ Բայրապետական մատանին, շնորհակալ եմ Զերդ Սրբությանը այն պատկերազարդ գոքի համար, որը բարեհաճել էիք ինձ ուղարկել, և մնում եմ Զերդ Բախատարին և սիրող ծառան ի Քրիստոս:

Սրբազն Պապը սիրով և հաճությամբ լսեց իմ նկատմամբ Զերդ ցույց տված ուշադրության մասին:

ՇԱՌԻ ՌՅՈՒԹ
Եպիսկոպոս Մոնակոյի

*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա-ԻՆ,

Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

Ծնորհավորում ենք Զեզ, Հայ Բախատացյալ եղբայրներ, Ս. Զատկիա սուների առթիվ: Ցանկանում ենք Զեզ քաջառողջություն և հաջողություն խաղաղության պայքարի գործում:

Եպիսկոպամ ՀԱՅԻՄԶԱՐԵ
Մուֆտի՝ ՎԱԼԻԶԱՐԵ

Բ. Ա. Զ Ո Ւ

*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՒԽՈՒՄՍԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՇԵՅԽՈՒԿԻՍԼԱՄ ՀԱՔԻՄԶԱԴԵԻՆ,
ՄՈՒՖՏԻ ՎԱԼԻԶԱՐԵԻՆ,

Բ. Ա. Զ Ո Ւ

Անկեղծորեն շնորհակալ ենք զատկական շնորհավորագրի համար:

Ցանկանում ենք անձամբ Զեզ և Զերդ ամբողջ հոտին աստվածային շնորհներ և քաջառողջություն, ինչպես նաև հաջողություն Զերդ աստվածահան գործունեության մեջ:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԽԱՅՐԱԳՈՒԹՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն





ՓՐԿՉԻ ՀՐԱՃԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԵՆԵՐԻ
ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՑՆԻ ՀԵՇԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱԽՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
S. S. Խ Ո Ր Ե Ս Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
S. Ե Ղ Ի Ծ Ե ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
S. Ծ Ո Ր Հ Ք ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՍ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այս մեծ ավետիսով Փրկչի տոքք հարության շնորհները վերսահին կրաշխավին մեր Եկեղեցին, մեր ժողովուրդին, մեզի ամենուն:

Այսօր կշատնա լույսը աշխարհին և հույսի նոր ծիածաններ կամար կկապեն մեր հոգիներեն հերս:

Այս լույսին և այդ հույսին պաշտամունքն ու ծարավը ունին մանսվանդ զավակները մեր ազգին, որոնք հիտուն տարիներ առաջ մահվան անապատ-ներեն հարություն առին և վերադարձան դեպի արևը կյանքին, իրենց նախ-նաց Մայր Հողին վրա:

Այսօր մեր ժողովուրդը ամբողջ, որ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, առավել քան երբեք կնապատա Քրիստոսի հարության լույսին և իր ազգա-յին վերածնունդին ու իրականացմանը իր արդար հույսներուն:

Մեր սիրտը լեցուն այս ուրախությամբ, Մսպր Ալեռո Ս. Էջմիածնեն Մեր ելքայրական ողջովնը կրերենք Զեզ, Ս. Ալեռուլիդ և եկեղեցեաց ուխտանվեր սպասավորներուն և համապն հավատացյալ մեր հարազատ ժողովուրդին, մաղթելով, որ Տերը և Փրկիչը մեր Քրիստոս բաշխե Զեզի բոլորիդ շնորհները իր լուսափալ հարության և պահե ու պահպան զնեզ քաջառութ, Ավիրված Զեր եկեղեցւնեն գործոց, ավետարանական սիրո և միունեան ոգիով գոտեպիտ:

Փառք հրաշափառ հարության Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի:

Փառք վերածնած հայ ժողովուրդին և անոր Առաքելական Ս. Եկեղեցին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

Վ Ա Զ Գ Ե Ն Ս.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

*

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական հիմնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին (Լիսապոն), Արգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտուրտառուն), Կաղկայացի հայկական ընկերության վարչության (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զամագան կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ծեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ս.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

Աշխարհի Փրկչիմ՝ Հիսուսի Քրիստոսի հրաշափառ հարության սուրբ տոնին առթիվ, կիրութանք Զերդ Սրբության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորց սրտի կաղոթենք, որ ամենաբարին Աստված անվորձ և անսովով պահե ու պահպան Հայոց Ս. Եկեղեցին, Ավիրակետական Ս. Ալեռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամն մարդասիրության յուրու, և Զեզի պարզեն մշտատն առողջություն և երջանկալից երկար կյանք:

«Զեզ և մեզ մեծ աւետիք. Քրիստոս յարեն ի մեռեղոց»:

Մնամ օրինաձայն սիրո շերմ ողջունիվ,

Աղօթակից

Խ Ո Ր Ե Ն Ա

Կաթողիկոս Մեծի Տաճա Կիլիկիո

Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս

*

Սեր Փոկչի լուսապայծառ և սուրբ Հարության տոնի առիթով, կշնորհավորենք Զերդ Վեհափառության Ս. Զատիկը մեր և մեր միաբանության անունով, հայտնելով մեր անկեղծ շնորհավորությունները: Զերդ Ս. Օծության լրադրենք քաջառողջություն, երջանկություն և բարգավաճում Մայր Աթոռին:

**ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի**


*

Տյառն մերո և Փոկչին Հիսուսի Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին առիթով, կուգանք Ս. Օծության շնորհավորել մեր, հոգևորական դասի, պաշտոնական մարմիններու և համայն հավատացյալ Բոտին անունով, մադրելով Մայր Աթոռ Ս. Եջմիածնին անսասանություն, Վեհափառությանդ յանկագին կենաց արևշատություն: Մատչելով Օծելույդ Ս. Աշին, խոնարհ աղոթակից,


**ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո**

*

Փոկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաշերմ և բարգալից զգացմունքներով գեղուն շնորհավորական այլ հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, ինչպես նաև հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



Ա. Հ Ա Յ Ա





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊՈՏԱՄԱԳ. ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Ապրիլի 10-ին, կիրակի, «Զատիկ», Յարութիմ Տեղան մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Գորնանային ջերմ ու պայծառ օր է: Ուխտավորների հոծ բազմությունը լցրել է մայրավանքն ու Մայր Տաճարը:

Առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, քահանայապետական լրիվ գգեստավորման մեջ, Եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, առաջնորդվում է Մայր Տաճար, մատուցելու զատկական հայրապետական սուրբ պատարագը:

Մայր Տաճարի աշակողմյան և ձախակողմյան գասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, Ճեմարանի գասախոսական կազմը, Մայր Աթոռի միաբանությունը և այլ հրավիրյալներ:

Սուրբ պատարագին ներկա են նաև բազմաթիվ ուսմտավորներ Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից և Ստամբուլից:

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը:

Վեհափառ Հաղթական ու սրաառուշ հնչում են «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Գովեա Երուսաղէմ զՏէր» մեղեղիները:

«Ճայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը.

«Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց, Մահուամբն զման կոխեաց, Եւ յարութեամբն իրով Մեզ զկեան պարզեաց»:

«Մեծ հրաշքեն հետո, լուսաբացին, բարի հրեշտակները վկայեցին. «Եւ աստ, քանզի յարեաւ»: Աշակերտներն ու լույսաքեր բոլորները տեսան Յիսուսի դատարկ գերեզմանը միայն ու համատացին»:

Այս հավատքն է, ահա, որ աճեցավ ու պայծառացավ, և իբրև ոգենեն արեգակ, լուսավորեց մարդկային կյանքը համայն, երկու հազար տարիներ շարունակ:

Եվ ամեն տարի, Ս. Եկեղեցին մեծ ավետիսը կուտա աշխարհին և մեզի բոլորին, թե Քրիստոս հարություն առաջ մեռելնեն, իր մահով մահը կոխելով և մեզի կյանք պարզելով:

Մենք մեր մարմնական աչքերով չենք տեսներ դատարկ գերեզմանը մեր Տիրոց, սակայն գուցե այսօր առավել ստուգությամբ կհավատանք Քրիստոսի հարության, քան մարդիկ երկու հազար տարիներ առաջ, վասնակի ստուգապես գիտենք, թե Քրիստոս իր հարությամբ իրապես կյանք պարզեց մեզի: Հայ ծողովուրդը, իր բազմադարյան պատմությամբ և իր թողած ժառանգությամբ, կենդանի վկայություն մը եղավ

Քրիստոսի հարության ու Անոր հավիտենական կենդանության:

Եթե Քրիստոս ճշմարտապես հարություն առած չըլլար և իր հարությամբ կյանքի ուժեր պարզեցած չըլլար հայ ժողովուրդին, անտարակոյս, հագիկ թե հեռավոր հիշատակ մը միայն մնացած ըլլար մեր ազգի մասին:

Դարերու ընթացքին քանի՞-քանի՞ անգամներ մեր ժողովուրդը մահվան տանշանքները ապրեցավ ու գերեզման իշան, բայց ան միշտ վերածնաւ շնորհիվ իր հավատքին, թե մահը կապարտվի հարությամբ: Փրկիչը մեր Քրիստոս «Այնայի մահուամբ փրկեաց զմեզ և փրկեացէ, քանզի յուացեալ եմք եթէ տակաւին փրկեացէ» (Բ Կորնթ. Ա 11):

Քրիստոսի հարության ավետիսը, նաև հայոց համար, եղավ վայլատականմը երկրորդ «եղիցի լոյս»-ին, եղավ հաղորդությունը ընդունեած մահու, եղավ սկիզբը փրկության, եղավ ճանապարհը հավիտենական կյանքին:

Եկ տակաւին, հայ ժողովուրդը Քրիստոսի հարության մեկ նոր վկայությունը գտավ Ա. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ, որով առավել պայծառացավ իր մեջ հավատքը Միածնին Որդիվոյն հարության նկատմամբ: Փրկչի իշման խորհրդով, Վահագնի հրեղեն ոգին, այլակերպյալ ու պայծառակերպյալ, վերստին ծնավ հայ ժողովուրդի հոգփոյն մեջ, և առավել շիլացավ ու միաձուլվեցալ քրիստոնեական նոր հավատքը:

Եկ ահա, որպես վիհանքերու վկա Քրիստոսի հարության և Անոր իշման ի Հայատան աշխարհ, բարձրացավ անկրկնելի կորողը այս, Մայր Տաճարը ամենայն եկեղեցաց հայոց՝ Ս. Եշմիածնին:

Դարերու հոլովովով, հայ ժողովուրդը, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը դավանեցավ իրեւ պատմական անհերքելի սոուգություն, որպես ոգեկան բացարձակ արժեք:

Մեր նախնիք, Քրիստոսի հարության հավատքը, առավել հավատացին Լուսավորչի տեսիլքին, և իշման տեսիլքով առավել հավատացին Քրիստոսի հրաշալի հարության:

Հայոց քրիստոնեությունը ազգային եղավ ի սկզբանե և այդպես ալ մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերու գյուտով և Ս. Վարդանի արդարության ու ազատության շնորհումով:

Այսպես և միայն այսպես է, որ մենք հայեր կավերապես քրիստոնյա մնացինք և պիտի մնանք, և իրավ ու հարազատ ապ-

րումով պիտի հավատանք Քրիստոսի հարության հրաշքին, աշխարհի բոլոր քույր եկեղեցիներով հետ անքաժանորեն եղբայրացած Քրիստոսի սիրույն մեջ:

Հայ հավատացյալ ժողովուրդը, Քրիստոսի հարության շնորհներով, հավատաց իր կյանքի ուժերուն, հավատաց իր հոգիի լույսին, հավատաց հավերժության, ու այդ հավատքով կառուց և ստեղծագործեց:

Մեր ժողովուրդը այսօր ալ ստուգայես կզգա, թե նոյն հավատքով է, որ պիտի ապրի իր նախնայաց ոգիով, պիտի շարունակելու իր ստեղծարար առաքելությունը այս աշխարհի վրա և պիտի հասնի իր ազնիվ ու արդար երազներու իրականացման: Մարդու կյանքը, առավել ևս ժողովուրդի մը կյանքը, և իրավ մարդկայինը այդ կյանքին մեջ, որից բան չէ, եթե ոչ ոգեկան առաքելության մը իրագործումը այս արևին ներքին:

Հայ ժողովուրդը այլ բանի չի տեսնար, բայց միայն ունենալու ափ մը ազատ հող, բաժակ մը լուս և խաղաղ կյանք, շարունակելու համար իր առաքելությունը, արդարացնելու համար իր կոչումը աշխարհի ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ: Այս նվիրական իդենքը, մեր օրերուն, կյանքի կոչվին ահա մեր վերածնած Մայր Երկրին մեջ ու հետզհետեւ կամրապնդվին անոնք վճիռ ու վճռական:

Վկա է Աստված, վկա է աշխարհն ամբողջ, թե անցյալի մեջ նահատակված մեր ժողովուրդը, այսօր իր Մայր Երկրին մեջ տերը դարձած իր հողին ու ճակատագրին, կյանքի ապահով ու խաղաղ պայմաններու մեջ, ինչպիսի լուաչող իմացականությամբ, ինչպիսի ազնիվ ու ստեղծարար կիրքով և կառուցելու տեսնոլ սողորված, կերտու իր կյանքը, վերստին պատվու տեղ մը գրավելով մշակույթ ստեղծող ժողովուրդներու կողքին: Հայոց հինավորց ազգը, իր նոր կյանքով, հայրենի սուրբ հողի վրա ստեղծած նոր արժեքներով, անտարկույս թե կիանիդիսանա մեր ժամանակներու ոգեկան առաքելություն մը կրող ու կենացործող հառաջադեմ ազգություններեն մին:

Հայ' ժողովուրդ, դուն աճած ու պայծառակերպված ևս Քրիստոսի հարության և իշման շնորհներով, և դարերու ընթացքին ապրած ևս ու անմահացած արհության բազում գործերով:

Եկ ինչան անցյալի փառքի օրերուն, այսօր ալ կատնվիս նոյն արհության գործերու իրականացման լուապիր ճամբուն վրա:

Հայ ժողովուրդ, ուրեմն ծանիր զքեզ և հավաքական գիտակցված միասնությամբ, իրավես մեկ ու անբաժան, սիրով եղբայրացած ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի, հավատարիմ մնա քու նախնաց սորը հավատքին, քու կյանքի ուխտին և մեր օրերու քու նոր վերածնունդին և քու առաքելության:

«ԵՌ մարտիր զբարուք մարտն հաւատոց. և բուռն հար զկենացն յախտենից՝ յոր կոչեցարն» (Ա. Տիմ. Չ 12):

Նախախնամուլթյան ձեռքով մեր ազգին շնորհված ու պատմականորեն նվիրագործված ոգեկան առաքելությունը դրոշմված է Քրիստոսի հարության հավատքով և Անոր իշման խորհրդով ի Հայաստան աշխարհի:

Փառք Քրիստոսի լուս հարության:

Փառք հայ քրիստոնեության:

Սուրբ Զատկի լուսաշող այս ժամին, երբ հարության շնորհները նորեն կիշտեն հայ աշխարհին և մեր ամենուս հոգիներուն մեջ, Սենք, ծունկի եկած Խնման այս հրաշք Տաճարին մեջ, կաղոթենք, որ այդ ափ մը հայոց հողը միշտ ապատ, միշտ ապահով և միշտ բերի մնա, որ հայոց սրտերուն բաժակներն ամեն միշտ լեցուն ըլլան իմանալի լուսով և միշտ խաղաղ մնա կյանքը մեր ազգին և վերածնած երկիրը մեր հայրենի:

Ավելի լոյս և խաղաղություն հայ ժողովուրդին, Մայր Հայաստանին:

Ավելի լոյս և խաղաղություն համայն աշխարհին, բոլոր ազգերուն:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ամեն»:

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, երեանի ուղղուկայանից ձայնասփովում

Վեհափառ Հայրապետի գատկական քարոզը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Հանդիսավորապես առաջնորդվում է Վեհարանի գահասրահը՝ շնորհավորություններ ընդունելու:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի գատկական տոնը շնորհավորում է լուսարապետ գերազնորհ Տ. Տուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը:

Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում է նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բարձրաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը:

Խոսք առնելով Հայոց Հայրապետը, շնորհավորում է Հայ եկեղեցու և Հայ ժողովրդի մեծագույն առնը՝ Զատկից, և օրէնելով բոլոր ներկաներին, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ Ս. էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, Մայր Հայրենիքի՝ Սովետուկան Հայաստանի և Հայ ժողովրդի բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է գատկական իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության և Հյուրերին:

Շնորհավորության և բարեմաղթության բաժակաճաներ են արտասանվում Մայր Աթոռի անսասանության, Վեհափառ Հայրապետի կենաց արեշտության, Մայր Հայրենիքի և Հայ ժողովրդի բարօրության և բարգավաճան համար:

Խմբվին երգված Տերունական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ փակում է գատկական տոնի Հանդիսության նվիրված ընդունելությունը:







• ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱԶԻ ՄԱՍՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ
ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՄՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
Հ Ա Ց Լ Ե Ս Ե Լ Ա Ս Ի Ե Ի Ն

1966թ թվականի փետրվարի 14-ին, երկուշաբթի, Հանուն Ամենայն Հայոց Կեչափառ Հայրապետի, Եթովպահայի Հայոց հոգևոր Հովհակ Հոգեծնորհ Տ. Կորյուն ծայրագույն վարդապետ Մանվելյանի գլխավորությամբ մի հանձնախումբ, որի կազմում էին Եթովպահայի Հայոց գաղութային ժողովի պատվարժան անդամներ և ազգայիններ Սամվել Պեհսոնիլյանը, Մարտիրոս Տարագյոյանը, Լեոն Երգնակացյանը, Գևորգ Սվաճյանը, պաշտոնապետ Նապես Ներկայացան Ազգիս-Արերայում արքայական պալատ և Հանդիսասպոր իրադրության մեջ Եթովպահայի Կայսր Նորին Վեհափառություն Հայլ Սելասիեին Հանձնեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Նոյեմբեր 13 թվակիր Կոնդակը և Ս. Թաղեռս առաջարի մի մասունքուն

Նախապես հանձնախմբի կողմից պատրաստվել էր Հայրապետական կոնգակի համար ոսկեզօծ մի տուփ, իսկ աջի համար՝ կապույտ թագչւա գեղեցիկ մասնատուփ, որի վրա փորագրվել էր մասունքի վրա գրված Հոյերեն հիշատակարանի եթովերեն թարգմանությունը:

Առավորտյան ժամը 10-ին, նախապես
խնդրված կայսերական ունկնդրության հի-
ման վրա, Հանձնախոսմբը ներկայացավ
պալատ և շերմորեն ընդունվեց օթովակիայի,
բարեկազմ կայսրի նորին Վեհափառություն
Հայութ Սելամիկ Ա-ի կողմէց:

Հարգանի մթոնորդական նորին Վեհափառությանն է մատուցվում սուրբ մասունքը, Հայոց Վեհափառ Հայրապետի Տետելյալ կոնդակով.

«ԿԱԶԳԵՆ ԾԱՐԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՒ,
ՈՂՈՇՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒՑՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՒ
ԵՊԻԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՐԱՋԳԱԿԱՆ ՍԱԽԱՄԵՆՆԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՐԵՈՅ ԿԱԹՈՂԵԿՈՒ ԷԳԻՒՄԵՆՆԻ».

Ն ԵՐԱՌՈՒՅՆ ՕԳՎԱԾԱՓԱԿ ՄԵԽՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԺԱՆՑԵՐ ԿԱՑԱԽԵՐ ԷԹՈՒԼՊԻՒՅՑ
ԵԿ ՊԱՅՏՈՎԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԻՆ ՀԱԽԱՏՈՑ ՀԱՑԼԵՒ ՍԵԼԱՏԻԵՒ ԱՌԱՋՆՈՅ

«Սեզի համար, իրու Հայ Եկեղեցի Գերագույն Պետ, բացառիկ հաճովք է և պատիկ ողջունել Զերդ Կայսերական մեծությունը սույն Մեր գրով, և մաս թել Զեզի աստվածային օգնականություն և արևշատություն, որպեսզի շարունակեր Զեր քրիստոնեական մեծ առաքելությունը Զեր երկրին և ամբողջ աշխարհին մեջ:

Աւար Սեր սիրտը անգամ մը ևս լեցուն է երախտագիտական օդը՝ զբա-
շտմաներով դեպի Զերդ Վեհափառ թյունը, որովհետև և եր զամանակության
10-րդ տարեդարձի առիթով Ս. Էջմիածին եկամ Սեղ շնորհաւոր թյունը Զ. թ.
Ե. Եկեղեցւոն ներկայացուցիչ նորին Գերաքանություն Արք ևս Պետ ու Եհա-
րապոյտը և Աղդիս-Աբերայի Հայ Եկեղեցւոն ներկայացուցիչներ հոգեւորքի
Տ. Կորյուն ծարագոյն վարդապետ Մանուկյանը և տիստը Մամիկոն Պետրոս-
նիշյան, Մարտիրոս Տարագիան և Լևոն Եղանեակացյան, որոնց ներկայությունը
և եզի պատճառեց անիդիարինելի ուրախություն:

Իրեն խորհրդանիշ քրիստոնեական սիրո և հարգալիր շնորհակալության՝
ու ուն Սեր գորով Զերդ Վեհափառության կրիտերիա, ձեռամբ հոգեւորքի Տ. Կորյուն
ծարագոյն վարդապետի, սեր Ս. Աթոռի ամենանվիրական սրբություններին
Ո. Թադեոս առաքյալի մասունքներնե մին, պահպանված դարերն ի վեր
Ո. Էջմիածին մեջ:

Սեր Տիրոջ և Ֆրկչի աշակերտներն Ս. Թադեոս առաքյալ առաջինը
եղավ, որ եկավ Հայատան և իր քարոզությամբ Ավելատարանի լույսը տարա-
ծեց հայ ժողովուրդի մեջ: Ան իր հավատքին և առաքելական գործունեության
համար նահատակվեցալ իսկ այստեղ, դառնալով պաշտամունքի առարկան
հայ հավատացյալ ժողովուրդին:

Առա այդ մեծ Սուրբի և Առաքյալի աճյուններն մասնիկ մը կառաքենք
Զերդ Վեհափառության, աղոթելով, որ աստվածային օրինությունը և շնորհնե-
րը առատապես բաշխվին Զեզի, Զերդ կայսերական ընտանիքին և Զեր Եկե-
ղեցին ու ժողովուրդին:

Ս. Թադեոս առաքյալի սույն նշխարը նաև թող առավել ամրապնդե սիրո
և եղբայրության դարավոր կայերը Զեր և մեր եկեղեցներու միջև:

«Զի ամենայն որ յԱստուծու ծնեալ է, յաղթէ աշխարհի. և այս է յաղթու-
թիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր» (Յովհ. Ա. 54):

Վ. Ա. Զ Գ Է Ն Ա

Տառա կոնհակս յ-18-Ա Շոյեմբերի

1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց Ո՞նժ-Ծ.
ի մայրավանս Սիրոյ Էջմիածինի»:

ՇԽԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՌՈՒՐՈՒ ՄԻ ԿԱԹՈՂՈՒԿՈՒ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կայսրը հավատով ու բարեպաշտությամբ,
երկյուղածորեն ընգունում է Հայոց Հայրա-
պետի նվերն ու կոնդակը:

Կայսրի ցանկությամբ, եթովպիսի հայոց
զաղության ժողովի անդամ Դեսորգ Սվաճ-
յանը ընթերցում է Հայրապետական սրբա-
տառ կոնդակի եթովպերեն թարգմանու-
թյունը:

Առա, հանուն Հայոց Հայրապետի, ող-
ջուղնի խոսք է արտասանում եթովպիսի հայոց
հոգեւոր Հովիկ Յ. Կորյուն ծայրա-
գույն վարդապետ Մանվելյանը.

«Զերդ Կայսերական Վեհափառություն.

Անցյալ տարվա նոյեմբերին մեր քույր ե-
թովպական Եկեղեցու ներկայացուցիչ Գե-
րազնոր Արունա Պետրոսի և եթովպիսի հայ
գաղութի երեք ներկայացուցիչների
հեա, Ս. Էջմիածնում ներկա ենք եղել Ամե-
նայն Հայոց Հայրապետի գահակալության
տասնամյակի հանգիսություններին, նորին
Սրբությունը իր տասնամյա գործունեության

բնդանուր զեկուցագրում, մասնավոր կա-
րուրությամբ և սիրով նշեց 1965 թվականի
հունվար ամսում այս ղեգեցիկ երկիրը՝
աստվածաշնչական եթովպիսի իր այցելու-
թյունը և Զերդ Վեհափառությունից ստացած
իր հիանալի սովագորությունը, որպես Հա-
վատի պաշտպանի և ժամանակակից քագա-
թական պետական մեծ գործչի, Հայոց Հայ-
րապետը նաև իր մասնավոր շնորհակալու-
թյունը հայտնեց եթովպիսի հայոց՝ Զեր
Հավատարիմ հպատակների՝ հանդեպ Զեր
ցույց տված արքայական ուղագրության և
հոգածության համար:

Երբ Աբունա Պետրոսի հետ վերադառնում
էինք եթովպիսի, Հայոց Հայրապետը քաղցր
պարտականություն գրեց մեզ վրա՝ Հայրա-
պետական իր օրհնությունների հետ Զերդ
բարեպաշտ Վեհափառությանը հանձնելու Ս.
Թադեոս առաքյալի Աջի մասունքը, որպես ի-
սիրո և երախտագիտառթյան առհավատշան
Զերդ Վեհափառության»:

Կայսրը պատասխանում է իրեն փոխանցված Հայոց Հայրապետի ողջայնի և օրհնության խոսքին ասելով.

«Ենորհակալ եմ վարդապետին, որ այնքան հեռու երկրից, աստվածաշնչական Արարատի երկրից, բերել է ինձ այս քանկազին մասունքն ու Ամենայն Հայոց Հայրապետի ողջոյնեներն ու օհնությունները, զեղեցիկ կոնդակի միջոցով, որոնք խորապես ինձ հոգում են: Ես անձամբ գրելու եմ նորին Մրրության, հայտնելու համար իմ խորունկ շնորհակալությունն ու երախտագիտությունը այս նվիրական, քանիկազին սուրբ մասունքի համար, որն այսուհետև մեր եկեղեցականների և նավատացյալ ժողովրդի

բարեվաշտության առարկան պիտի դառնա մեր եկեղեցիներում, և որով է՛լ ավագի պիտի ամերապետին բալանակից Հայ և Երավական երկու նույր պատմական եկեղեցիների նղայրական միուրյունն ու սերը»:

Կես ժամ տևող կայսերական այս ունկընդությունից հետո, Եթովպիայի Հայոց գաղութի հոգևոր հովիվը և պատվարժան ազգայինները մի անգամ ևս ողջունելով Կայունին, հրաժեշտ են առնում նորին Վեհափառությունից:

Փետրվարի 14-ը մի նոր էջ է ավելացնում Հայ և Եթովպական եկեղեցիների պատմության նորագույն տարեգրության մեջ:

ԹՂԹԱԼՈՅՑ





ՄԱՅՐՈՒԹՈՒՆԻՄ

Ապրիլի 2-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգեւոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ արտասանական մրցման երեկո, որին մասնակցում էին 11 ուսանողներ, Պարտադիր կարգով բոլորին հանձնարարվել էր Հովհաննես Թումանյանի «Հին օրնություն»-ը, իսկ մի այլ արտասանություն՝ ըստ ցանկության:

Ներկա էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներով, Մայր Աթոռի միաբանությամբ և զասախոսական կազմով:

Երեկոն անցավ շերժ և ուսանելի մթնոլորտում:

Վերջում արտասանական մրցման մեջ առաջին, երկրորդ և երրորդ հանդիսացողները ստացան մրցանակներ:




Ապրիլի 3-ին, կիրակի, «Մաղկազարդ»: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Ներսես ծայրադուլն վարդապետ Պողապալյանը և քարոզեց Ռուզան առջև, որ Հայոց եկեղեցու անուամբ Տեղապահ բնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 4-ին, ավանդական սովորությամբ, Մայր Տաճարում կատարվեց «Դոնքացէք»-ի արարողությունը, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ:



Ապրիլի 5-ին և 6-ին, երեխաբքի և շորեխաբքի, զատկական առներին մասնակցելու համար, Հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Մերայդարյանը մեկնեց Բաքու, բարեշնորհ Հովհաննես սարկավագ Հակոբյանը՝ Արմավիր, իսկ ուրարակիր Հովսեփ Հակոբյանը՝ Թրիլիսի: Նրանք ապրիլի 12-ին վերադարձան Մայր Աթոռ:



Ապրիլի 7-ին, Ավագ հինգաբքի, «Յիշատակ ընթրեաց Տեղան մերոյ Յիսուսի Քրիստոսի և Աւեաւուն Ս. Աստուածածնի»:

Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբեյանը:

Հետմիջօրեի ժամը 4-ին, հանդիսավորապես տեղի ունեցավ «Ոտնալուա»-յի արարողությունը, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ:

Երեկոյան ժամը 7.30-ին սկսվեց Քրիստոսի շարչարանաց հիշատակը խորհրդանշող արարողությունը, որին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Թարոզեց Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը՝ «Հիշատակ հալածեցին զիս ի նանիր» բնարանով:



Ապրիլի 8-ին, Ավագ ուրբաթ, «Յիշատակ շարչարանաց և խաչելութեան Տեղան մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Առավուայան ժամը 9-ին Մայր Տաճարում կատարվեց խաչելության կարգը:

Երեկոյան ժամը 4.30-ին մեծ թափորով կատարվեց թալման կարգը: Հանդիսադիրն էր Վեհափառ Հայրապետը: Քրիստոսի խորհրդանշական դագաղը երեք անգամ պատեցվեց Մայր Տաճարի շուրջը:



Ապրիլի 8-ին, Ավագ ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ ժամանեց գերազնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը Ամերիկայի Միաբյալ Նահանգներից: Հանուն Վեհափառ Հայրապետի, սրբազն հյուրին գիմավորեցին Հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը և դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը:

Մայր Տաճարում իր ազոթքն ու ուխտը կատարելուց հետո, գերազնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը ընդունվեց Վեհափառ Հայրապետից:



ԱՍՏՎԱԾԱՄԱՑԻ

(Նկարիչ՝ Հրանտ Ավագյան)

* * *

Ապրիլի 9-ին, Ավագ շաբաթ, «Հրազդալոյց Ս. Զատկի»: Երեկոյան, Մայր Տաճարում, պատարագեց լուսարարապետ գերաշնորհ S. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրիսնոր և Ներկա էր Վեհափառ Հայրապետը: Հավարտ սուրբ պատարագի, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգեոր Ճեմարանի ուսանողությունը Վեհափառ Հայրապետին թափորով ուղեկցեց Վեհարան:

* * *

Ապրիլի 11-ին, Ավագ երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»: Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ S. Մուշեղ վարդապետ Պետիկյանը: Հավարտ սուրբ պատարագի, կատարությունը Վեհափառ Հայրապետին թափորով ուղեկցեց Վեհարան:

* * *

Ապրիլի 11-ին, Ավագ երկուշաբթի, Հոգեոր Ճեմարանի ուսանողությանը տրվեց մեկ շաբաթով զատկական արձակուրություն:

* * *

Ապրիլի 15-ին, ուրբաթ, Հոգեշնորհ S. Նարեկ վարդապետ Շաբարյանը մեկնեց Բաքու և տեղի հայոց եկեղեցում, ապրիլի 17-ին, կիրակի, պատարագեց և քարոզեց «Մարգարէ գերազոյն և մեծն ի ծնունդս կանանց» բնաբանով, Հայր սուրբը ապրիլի 19-ին վերապրածավ Մայր Աթոռ:

* * *

Ապրիլի 17-ին, կիրակի, «Էրեխնազատիկ»: Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ S. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Ճի լուսցին պատերագմունք դադարեցին յարձակմունք թշնամեաց, անկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի» բնաբանով:

* * *

Ապրիլի 18-ին, երկուշաբթի, զատկական արձակուրզներից հետո, վերսկսվեցին Հոգեվոր Ճեմարանի դասընթացները:

* * *

Ապրիլի 19-ին, երեխաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն Հոգեոր Խորհրդի նիստը, որին որպես հյուր ներկա էր նաև գերաշնորհ S. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը:

* * *

Ապրիլի 23-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգեոր Ճեմարանի հանգիսարահում, տեղի ունեցավ հերթական գրական-գեղարվեստական երեկո: Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կտաարեց «Արք զարգարեցին» շարականը, Կոմիտաս վարդապետի «Թագվոր բարով», «Հարսի երգը», «Առնել երթամ» և Մակար Եկմալյանի «Ո՞վ Հայոց աշխարհ» խմբերգերը, Բարեշնորհ Եղիշե սարկավագ Բաղրամյանը արտասանեց մի հատված Կոստան Զարյանի «Տաճարագոմի հարսը» գրքից, իսկ Գ զասարանի ուսանող Արարատ Գալստյանը զաշնամուրի վրա նվագեց Վերերի «Խոնդոս»-ն:

Օրվա գիխավոր բանախոսն էր ուխտավորար Մայր Աթոռում գտնվող գերաշնորհ S. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, որին վերատեսուլ Հոգեշնորհ S. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը ներկայացրեց չերմ և հարզալիր խոսքերով: Գերաշնորհ S. Տիրան արքեպիսկոպոսը ներկայացրեց Հյուսիսային Ամերիկայի հայ զաղութի եկեղեցական-մշակության կյանքը, շատ հետաքրքրական և խանգավառ ավալներով:

Բանախոսության վերջում Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայանեց գերաշնորհ S. Տիրան արքեպիսկոպոսին հետաքրքրական և շահեկան դասախոսության համար: Հանգիսությունը վերջացավ Վեհափառ Հայր սուրբը իր զեղեցիկ քարոզի մեջ ոգեկոչեց հիշատակը ապրիլյան եղեւոնի մեր ըյուրավոր նահատակների:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ, Մայր Տաճարում կատարվեց Հոգեհանգիստ ապրիլյան եղեւոնի մեր անմոռանալի նահատակների խնկելի հիշատակին: Այնուհետև նորին Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվեց նահատակաց հողարձանի մոտ, որաեղ տեղի ունեցավ Հոգեհանգստյան հատուկ արարողություն, հոծ բազմության ներկայության:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԼԻ ԱՌԹԻՎ ՆՎԵՐՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

ի լրացումն աէջմիածինս ամսագրի 1965
թվականի նոյեմբեր—դեկտեմբեր միացյալ
համարի նյութերի, հայրապահակում ենք մի
շարք կարևոր նվերներ ևս, որոնք սաացվել
են Վեհափառ Հայրապետի գահակալության
տասնամյակի առթիվ:

Խմբագրությունս շնորհակալությամբ նշում
է նախ արժեքագոր նվերները Միլանոյի
հայոց գաղութային գարշության նախագահ
մեծահարգ տիար Ստեփան Սրապյանի՝ ժե
ղարի նշանավոր ձեռագիր նկարագարդ լա-
ահիներեն Աստվածաշնչի՝ «La Bibbia di Bo-
rgo D'este»-ի երկու մեծադիր հատորները,
լուսատիպ օրինակներով, և իտալական եկե-
ղեցական արգեստի նմուշ ոսկեզօծ մի սկիճ։

Պր. Ստեփան Սրապյանը միաժամանակ
հանդիսանում է Մայր Աթոռի քարերարներից
մեկը՝ ի պայծառություն Ս. Էջմիածնի կա-
տարած իր կարեոր նվիրատվությամբ, որի
համար նա պարզեարգել է Ամենայն Հա-
յոց Վեհափառ Հայրապետի կողմից Ա. Գրի-
գոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ա-
ղամանդակուր շքանշանով։

Հաճույքով նշում ենք նաև այսաեկ ոումի-
նահայ տաղանդագոր նկարի պր. Հրանտ

Ավագյանի 8 յուղաներկ նկարների նվերը,
Վեհափառ Հայրապետի գահակալության
երջանիկ առթիվ Մայր Աթոռ ուղարկված,
որոնց մեջ է գտնվում Ասավածամոր մեծա-
դիր նկարը հայկական մանրանկարչության
ոճով նկարված։

Նման ուրախ առթիվ նշում է նաև Ռու-
մինիայի հայոց թեմի ուղարկած նվերը՝ ար-
ծաթյա լկրտության գեղեցիկ ավագան, ժղ
գարից, գործ երեմնի հայաշատ քաղաք
Ռումանի հայ վարպետների։


Ծնորհակալությամբ արձանագրում ենք
նաև Վեհափառ Հայրապետի գահակալու-
թյան տասնամյակի առթիվ երեանից նկա-
րի Արա Բեքարյանի նվերը՝ «Վազգեն Կա-
թողիկոսի օծման պահը Մայր Տաճարում»
(1955 թ.) նկարը, ինչպես նաև Մայր Աթոռի
միաբանության և պաշտոնեության նվերը՝
«Մայաթ-նովա», ոնիսկի վրա արծաթ փո-
րագրված, գործ ոսկերիչ վարպետ Հ. Հա-
կոբյանի։

Ծնորհակալություն բոլոր նվիրատունե-
րին։

«Երանի՛ որ ունիցի յիշատակ ի Ս. Էջ-
միածնն»։




ՂԱՌԱՆԵՐԵՆ ԶԵՐԱԳԻՐ ԽՎԱՐԱԶԱՐԴ ԱՍՏՎԱԾԱԾԻՒ
„LA BIBBIA DI BORSO D'ESTE.“ -Ի ՂՈՒՄԱՆԻԴ ՄԻ ԷՋԸ (ԺԵ ԴԱՐ)



ՂԱՌԱՆԵՐՆ ԶԵՐՈՎԳԻՐ ՆԿԱՐԱՁԱՐԴ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ
•LA BIBBIA DI BORSO D'ESTE.-Ի ՂՈՒՄԱՆԻԴ ՄԻ ԷԶԸ (ԺԵ ԴԱՐ):



ՈՍԿԵԶՕՇ ՍԿԻՀ
(Խորական եկեղեցական արվեստի գործ)



ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹՅԱՆ Ա.ՎԱԶԱՆ
(Գործ Ռումանի Բայ ոսկերիչների, ԺԼ դար)



Ս Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա
Օճիսկի վրա արձայթ փորագրոված
(Գործ ոսկերիչ Հ. Հակոբյանի)



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Փոխանորդ Արարատյան թեմի)

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարտի 26-ին, շաբաթ, «Տօն է Սրբոյն Դրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարշարանացն և մտին ի Վիրապն»:

Հայաստանյայց եկեղեցին լուսավորչի հիշատակը կատարում է տարին երեք անգամ, հետեւյալ առիթներով. «մուտն ի Վիրապն», «ելն ի Վիրապէն» և «գիւտ նշխարաց»:

Հսու մեր դարավոր ավանդության, հայ հավատացյալ ժողովորդը ուխտի է գնում ևոր Վիրապի վանքը և աղոթում այն վայրում, որաեղ Գրիգոր Պարթևը, իր շարչարանքների և աղոթքի շնորհիվ, դարձավ լուսավորի հանուր Հայաստանի:

Այս աարի ևս, մարտի 25-ին, ուրբաթ օր, կեսօրից հետո, մեկնեցինք ևոր Վիրապի վանքը, որտեղ մեղ դիմավորեցին վանքի վանահայր արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Զափտեյանը և Տ. Հարություն քահանա Տերտերյանը, Մեր ուխտի աղոթքն անելուց հետո, նախազահեցինք երեկոյան նախատոնակին: Վանքի բակը և ներսը հավաքվել էր խուռներամ հավատացյալ ժողովորդ: Սկսում ենք երեկոյան ժամանակությունը, և ապա կատարում նախատոնակը: Հինավորց վանքի տաճարի կամարների տակ հնշում է լուսավորչին նվիրված «Այսօր զուարձացեալ շարականը, մինչ արեք արդեն թերվում է գեպի Հայկական պարը և Արարատ սարը զգենում երփներանգ գույն: Արարատյան գաշտը գարնան շնչով է տրոփում, իսկ Մայր Արաքսը հանգարտաքաղ հոսում է: Հուզիչ է տեսարանը, հոգեղմայի ժամասացությունը ևոր Վիրապի վանքում, Արաքսի ափին, Արարատի ստորոտին:»

Ուխտավորները զիշերում են վանքում:

Շաբաթ օր, մարտի 26-ին, երկանից և կեռու ու Արտաշատի գյուղերից ուխտի են գալիս բաղմաթիվ հավատացյալներ:

Թրվա տոնի առթիվ մատուցում ենք սուրբ պատարագ վանքի միաբանության, Արտաշատի շրջանի քահանա հայրերի և երեանի Ս. Սարգիս եկեղեցու երգեցիկ իմրի մասնակցությամբ:

«Հայր մերա-ի ժամանակ քարողում ենք Ս. Գրիգոր լուսավորչի կյանքի և գործունեության մասին, շեշտելով, որ Ս. Գրիգոր լուսավորիչն իր շարչարանքները վերածեց հավատի և գործի, հաղթանակի, ապա բարեմաղթություններով վերշացնում ենք մեր քարոզը: Հավարա սուրբ պատարագի, շարականով և սաղմոսերգությամբ, հավատացյալների հետ իշնում ենք Վիրապը՝ մեր ուխտն ու աղոթքը կատարելու:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, իր սկզբնավորությամբ և նվիրապետությամբ, պարտական է իր մեծ խոստովանող և երկրորդ լուսավորիչ Ս. Գրիգոր Պարթևին, ումերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուին (Խորենացի):

Խոր Վիրապի վանքը գտնվում է Երևանից մոտավորապես 40 կմ. Հեռավորության վրա, պաամական Հայաստանի երրեմնի Դառնի գավառում, իսկ այսօրվա Խորհրդացին Հայաստանի Վեդու շրջանում, Արարատի ստորոտին, Արաքսի հուսիսալին մասում, Արարատյան գաշտավայրի սրտում:

Խոր Վիրապը, Արշակոնյաց թագավորության օրոք, ինչպես վկայում է Ագաթանգե-



ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ՊԱՀԸ ՄԱՑՐ ՏԱԺԱՐՈՒՄ
(Նկարիչ՝ Արա Բեքարյան)

զոս պատմիշը, հանցապարտների պատժավայրն էր, բանտը:

Հուսավորիչը Անակ Պարթև իշխանի որդին էր Անակը, Արտաշիր թագավորի թելադրանքով, որսի ժամանակ դավաճանությամբ սպանեց Հայոց Խոսրով թագավորին 240 թվականին: Մանուկ Սուրենը, ապագա Ս. Դրիգոր Հուսավորիչը, իր քրիստոնյա ստուփի միջոցով փախցվեց Կեսարիա, ուր մեծացավ և ստացավ քրիստոնեական կրթություն ու դարձավ նոր կրոնի խանգավառ քարոզիչը:

Տարիներ հետո, հավանարար 287 թվականին, Գրիգորը վերագրածավ Հայրենիք, իր հոր, գավաղիր Անակի մեքքը քավելու ողայրենեաց հասուցանել պարտիսն: Ի դին տառապանքների, Գրիգորը Հանդիսացավ մեր երկրորդ Հուսավորիչը: Տրդատ իմացավ նրա քրիստոնեության մասին: Տրդատ նոր կրոնը անարգանք էր Համարում Հայոց աշխարհի հին ասավածներին: Տրդատ թագավորը ուժաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօթ և կապեալ պարանոցաւ խաղացանել զնա (Գրիգորին): Արարատ գաւառ, և տալ զնա ի դդեակ Բերդին Արտաշաա քաղաքին, և իշուցանել ի վիրապն ներքին որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեռցիք¹:

Ս. Գրիգոր Խոր Վիրապից դուրս գալուց հետո, ոնստեալ յաթող Արքոյ Առաքելոյն Թագէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանին: Յետ լուսաւորելոյ գամենայն Հայս լուսով աստուածգիտութեանն, և զնիւլոյ զիսաւար կուսպացառութեանն, և լնլոյ զայենայն եպիսկոպոսօթ և վարդապետօթ²:

Այդ օրերից սկսած, Վիրապը դառնում է Հայ եկեղեցու Հանգույն ուխտավայրը, ոյուոյ վերայ թերես շինեցաւ և եկեղեցի ընդայլ եկեղեցեացն Արտաշատու՝ զորս կործանեցին ընդ քաղաքին զօրքն Բ Շապիոյ արքային պարսից, այլ անդքէն նորոգեաց զեկեղեցին Վահան Մամիկոնեան որդի Հմայեկալ, իսկ Վահան շինեաց զեկեղեցին Արտաշատու զաւերեալսն ի պարսից³:

Հստ պատմական ավյաների, Խոր Վիրապում առաջին անգամ եկեղեցի է կառուցում ներսես Գ Շինող իշխաննցի (641—661) կա-

¹ Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910, էջ 224:

² «Ազաթանգեղայ պատմութիւն», Թիֆլիս, 1882, էջ 80:

³ Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», էջ 248:

⁴ Հովհաննես եպիսկոպոս Շահնշաբունյան. «Ստորագրութիւն» Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառաթիւն Արարատայք, Բ, էջմիածին, 1842, էջ 278:

թողիկոսը: Այդ մասին վկայում են Հովհաննես պատմարան կաթողիկոսը և Կիրակոս Դանձակեցին. «Եինէ տաճար սրբութեան և ի վերայ Վիրապի Սրբոյն Դրիգորի, ուր ի մէջ թունաւորացն թաղեալ առաքելանուէրն այրն Աստուծոյ զկամակոր վիշապին ջախշախեաց զգլուխ, ի մեռելութենէ խորոց կուպաշտութեան վերածելով զշայաստանեայս ի լոյս փառաց Որդուոյ Աստուծոյցն: իսկ Կիրակոս Գանձակեցին նույնպես վկայում է. «Ճետ եզրի առնու զկաթողիկոսութիւնն Տէր Ներսէս ամս քասան. շինեաց և զՎիրապն՝ զտեղիս Սրբոյն Գրիգորի...»⁴, իսկ Հ. Մ. Զամշանը, Ներսես կաթողիկոսի Խոր Վիրապի եկեղեցին կառուցելու փաստը նշելուց հետո, ավելացնում է, առանց աղբյուրը նշելու, որ Ներսես Գ-ը թաղվել է Խոր Վիրապում:

Խոր Վիրապի այսօր գոյություն ունեցող վանքը, եկեղեցիները և նրա պարիսպները կառուցել է թիֆլիսեցի Դավիթ Վարդապետը 1661 թվականին: Դավիթ Վարդապետը վախճանվել է նույն վանքում և թաղվել վանքի րակում: Այդ մասին մանրամասն նկարագրում է Հովհաննես եպիսկոպոս Շահնշաթունյանը, տալով նաև հիշյալ վարդապետի զերեցմանի տապանագրությունը. «Այժմեան շէնք մենաստանիս՝ եթէ երկուց եկեղեցեացն և եթէ պարսպին և սենեկացն են աշխատութեամբ Դաւիթ Վարդապետի ուրումն տիփիսեցոյա»⁵:

Խոր Վիրապում այսօր կան երկու եկեղեցիներ, առաջինը Ս. Աստվածածնի անվամբ, մյուսը՝ Երկնարկանի Վիրապը, Ս. Լուսավորչի անվամբ: Ս. Լուսավորիչը եկեղեցին կառուցված է կոփածո սրբատաշ կարմրավուն տուֆ քարից, օրորոցածե, անսյուն, կից հարավային պարսպին, որտեղ հիշատակություն կա եկեղեցու շինության ծախքը տվողի մասին: Արձանագրությունը գտնվում է Հյուսիսային դռան որմի վրա.

«Ի բուին Ռժձ և յաւուր Ցակոր հայրապետին, ի յառաջնորդութեան Տէր Դաւիթ Վարդապետին նորոգեցի զսուրբ եկեղեցին»

⁵ Յովիաննու կարուղիկոսի Պատմանակերտցոյ, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 83:

⁶ Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 60—61:

⁷ Հ. Մ. Զամշան, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1785, Բ, էջ 360:

⁸ Հովհաննես եպիսկոպոս Շահնշաբունյան, «Ստորագրութիւն», Բ, էջ 279 (Հիշյալ էջում տրվում է Դավիթ Վարդապետի տապանագրությունը):

խօնայ Շամօնն Ագուլցի, և խօնայ Արքան-
դիլը թիֆլիզեցի, յիշեցէք ի Քրիստոս Աս-
տուած»:

Այս փոքրիկ եկեղեցին, հանուն Լուսավոր-
ի կամ Խոր Վիրապի, երկու հարկանի է,
վերևի մատուռը ունի սեզան և վեմբար,
իսկ ներքնաջարկի մուտքը հարավային պա-
տի միջից աստիճաններով բեմի կողքից,
որտեղից իշնում են Վիրապի, որտեղ այսօր
կա նաև պատարագի մի փոքրիկ վեմբար,
ինչպես նաև Հարավային փոքրիկ սեղանի
վրա կա հետեւյալ արձանագրությունը.

«Յիշեալ լիցին առաջի Քրիստոսի խօնայ
Սիմոն և իր Բ ամուսին Գովում խարունին
իր նեցեցեալք՝ որք նորոգեցին Սուրբ Վի-
րապի. թին ՌՃԺ (1661):»

Ժամանակին Խոր Վիրապում գոյություն է
ունեցել որձաքարից փայլուն, մաշված մի
վեմբար, իրեւ Լուսավորչի երկու ծնկների
մաշված տեղու Ավանդությունն ասում է, թե
Լուսավորիչ Հաճախակի ծնրագրեց 13 տա-
րիներ այդ վիմբարի վրա, որի հետեւնքով
քարը մաշվել է:

Այս եկեղեցու հյուսիսային դռան մուտքի
առջև կա այլ մի փոքրիկ անցք՝ «Պառակի
անցք»-ը, որտեղից, ըստ ավանդության,
Հավատացյալ մի պառակ կին Լուսավորչին
սնունդ է մատակարարել:

Այս եկեղեցու տանիքը և սալահատակը
լրիկ քայլքած էին, Նորին Ս. Օծություն
Տ. Տ. Վաղգեն Ա-ի կարգադրությամբ, ամ-
բողջությամբ սալահատակեց և փրկվեց
եկեղեցին: Նույնպես Վեհափառ Հայրապետի
օրոր Հարթիկեց վանրի բակը և սալահա-
տակեց: Վերանորոգվեցին նաև Աստվածա-
ծին եկեղեցու հարավային պատերը, նախա-
գավիթը, արեւելյան շքամուաքի կամարը
սրբատաշ բարերով:

Խոր Վիրապի գլխավոր եկեղեցին, Ս.
Աստվածածին անվան, կառուցված է պա-
րիսպների մեջտեղում, սրբատաշ քարերից,
և իր շափով և մեծությամբ ավելի ընդարձակ
է, քան Լուսավորչի անվան եկեղեցին: Ս.
Աստվածածին եկեղեցին ունի գեղեցիկ կա-
թողիկե և զանգակատուն, վայելու գավիթ,
ոգատարագի սեղան, երկու ավանդուտուն և
մի դռու արեւուտքից, լուսամուտներ թե'
կաթողիկեի վրա և թե' հարավային, հյու-
սիսային և արեւելյան պատերի վրա:

Այս եկեղեցին ևս Տ. Տ. Վաղգեն Ա Հայ-
րապետի կարգադրությամբ հիմնովին վերա-
նորոգվեց: Կատարվեց եկեղեցու տանիքի
սալահատակումը, կաթողիկեի խախտված
քարերը փոխվեցին, ինչպես նաև դրվեց կա-
թողիկեի խաշը: Խոր Վիրապի վանքի, երկու
եկեղեցիների և այլ նորոգությունների ժամ-

բը հողացել են Կայիփոռնիալից հայ հավա-
տացյալներ:

Վանքի բառակուսաձև պարիսպները կա-
ռուցված են հասարամ բարերից, կրով և բա-
վականաշափ բարձր: Պարիսպներն ունեն
հասաւատուն բուրգեր, մի մեծ զուր արեւել-
քից, և մի փոքր զուր հյուսիսից:

Վանքի մոտակայքում, «Արտաքոյ պարս-
պին յարեմուտս նորա ի լանջս արեւելակող-
ման բլրոյն, են բանի մեծ ապառաժ վէմք
կից յիրեարս. ի վերայ միոյն են նշանք եր-
կուց բառաթեն խաչից դրոշմեալք ի վէմ անդր
հնագոյն ձևացութեամբ. և աւանդեն ոմանք
լինել այնմ՝ օրեաց խաշ, զոր Բարդուղիմէոս
և Ցուդա Թաղէոս ի հանդիպումն միմեանց ի
բրին Արտաշատու և յօթելն անգէն զմի գի-
շեր առ վիման՝ գրոշմեցին դայն և անուա-
նեցին՝ Օթեաց խաչաց⁹:

ԺՈՂ դարում, ինչպես նկարագրում է Սի-
մոն կաթողիկոս Երևանցին, «Վանքս այս
ի բառու թագաւորութեան պարսից, յամս
բանիս ամայացաւ (որպէս և այլք բազումք),
զորոյ եկեղեցին և զպարիսպն, զոմ խա-
շանց և համբարք զարշութեանց էին արա-
բեալ տաճիկը, և մեք յաջողմամբն Աստու-
ծոյ, ի բաց վանեալ զտաճիկսն, մտքրեալ
զվանքն, բերաք ի շինութիւն, և կարգեցաք
զառաջնորդ և արարաք վանք միաբանա-
կեաց՝ որպէս յառաջն, ի փառ Աստուծոյ և
Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի ՌՄՇԴԴ
թուուն մերում: Որ և է շէն և հաստատ ի
մերում ժամանակից¹⁰:

Ըստ Սիեմոն Երևանցու վկայության, Խոր
Վիրապի վանքը «Ունի վիճակս յերկրոչս
Երևանու զկեթի, զԱրկուգի, զԱրտաշատ,
զՄուշաղիկ, զԶգուն, զՎանստան, զՄան-
կուս, զԱւանիկ, զՎանիկ, զԴեղնավանք և
զՈւռածածորն բոլորս»¹¹:

ԺԹ զարի սկզբներին վանք է այցելում
նշանավոր Մանվել վարդապետ Կյումյուշ-
խանեցին և գրում է «Ուրպիսութիւնք Վիրա-
պին» և «Ենոր Վիրապի վանահայրութիւն
յանձնի ժամասաց Սիմէօն վարդապետի
Երևանցոյ»¹², գործերը, որոնցում մանրա-
մասն նկարագրում է վանքի դրությունը և
ցանկություն հայտնում դնալու Խոր Վիրապ,
վերականգնելու այն: Սակայն, ինչպես հե-
տադարձում պարզվում է, 1830-ական թվա-

⁹ Տավիանես եպիսկոպոս Շահիարաւելյան, «Սոռ-
րագրութիւն», Բ, էջ 181—182.

¹⁰ Սիմոն կաթողիկոս Երևանցի. «Ճամրոս, Վաղար-
շապատ, 1873, էջ 280—281.

¹¹ Նույն տեղում:

¹² Գյուտ ավագ հանաւան Աղանյանց. «Դիվան Հայոց
պատմության», գիրք ԺԹ, էջ 110—115:

կաններին Ս. էջմիածնի Սինոդը Մանվել վարդապետի կարիքն զգալով Ս. էջմիածնում, վանահայր է նշանակում էջմիածնի վանքի ժամասաց Սիմեոն վարդապետին, որը, երբ վերջինս Խոր Վիրապ է դուռմ վանահայրության պաշտոնի, վանքում ողինչ չի գտնում։ «Ու խոցը բնակութեան դոնէ միայն ինքեան կայր, ոչ մշակ և ոչ սպասաւոր, ոչ հաց օրական և ոչ աման ջրոյ ջրկիր, ուստի պարտաւորեալ վանահօրն ի գիւղորայս վիճակին անցուցանէր զաւորս»¹³։ Այս բոլորը նկատի առնելով, Մայր Աթոռ Ս. էջմիածնը սկսում է վանքը բարեկարգել և 1840-ական թվականներին Խոր Վիրապի վանքի վանահայր է նշանակում Գալուստ վարդապետին։

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ԴՊՐՈՑԸ

Խոր Վիրապի վանքը, սկսած ^Ժ դարից, հայտնի է գտնում նաև որպես մշակութիւններուն։ Այդ դպրոցի հիմնադրումը իրավամբ կապվում է Հայունի իմաստասեր, անվանի մատենագիր և հայ մանկավարժության փայլուն ասաղ Վարդան վարդապետ Արևելցու անվան հեաւ։

Հովհան Ռոբոտնեցին, թվարկելով Արևելյան Հայաստանի դպրոցական մեծ գործիշներին, որոնք հաջորդաբար աշակերտել են միմյանց, գրում է. «և զաշխարհալոյս վարդապետսն, զԳոշն, զՎանական, զՎարդան, զՆերսէս, զՅսայի, որ կան շիրիմք նոցա առ գուրս սուլր եկեղեցոյ, որով այժմ արդիւնաւորի եկեղեցի ի բանից նոցա»¹⁴։ Մի ուրիշ, արդյունաշատ եկեղեցական գործիք է՝ Գրիգոր Տաթևացին, հիշատակելով ուսուցիշների նույն շարքը, հայտնում է. «Վանական վարդապետն, աշակերտ Միխթար վարդապետի, որ Գոյ անուանի, և է սայ վարդապետն Վարդանայ, և Վարդան ներսեսի և նա ծսայեայ վարդապետին, որ և Յովհաննու Ռրոտնեցոյ լուսաւորշին»¹⁵։

Արևելյան Հայաստանի ամենապայծառ հոգևորականներից մին էր Վարդան Արևելցին, որը հանդիսացավ Խոր Վիրապի դպրոցի հիմնադիրը։

Վարդան վարդապետ Արևելցու աշակերտներից մեկը, Գևորգ Լամբրունացին, 1267 թվականին իր դրած տոնապատճառի հիշատակարանի մեջ խոսում է Վարդան վարդապետի՝ Խոր Վիրապի ուսուցչական գործու-

նեության մասին. «Որ ընդ այն ժամանակս ի վերայ ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաքինութիւն, և զուսուցչապետն ևս զգործ ի կիր արկեալ. ընդ առնելն լծակցելով, որ ի գուն Սրբոյն Գրիգորի նստելով՝ զամեայն եկեալսն յաստուածայինսն ուղղէր ճանապարհ»¹⁶.

Առավել ուշադրավ և հետաքրական է Խոր Վիրապի վանքի դպրոցի մի ուրիշ աշակերտի՝ Գրիգոր Բալուեցու վկայությունը դպրոցի և ուսուցչապետ Վարդան վարդապետի մասին. Այդ վկայության մեջ կա նաև տեղեկություն Խոր Վիրապում սովորող աշակերտների մասին. Գրիգոր Բալուեցու վկայությունը 1290 թվականին Խոր Վիրապի դպրոցի և վերատեսուչ Վարդանի մասին հաղորդում է, որ աշակերտների թիվը բառասուն է. «և գնացեալ (Գրիգոր Բալուեցին) դադարէր յԱրևելս՝ յԱրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի Սրբոյն Գրիգորի կուսաւորշին, առ հուակաւոր իմաստասէր վարդապետն հայոց Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նօրա և (40) աշակերտաօք»¹⁷. Այստեղ Բալուեցին մնում է վեց տարի և ապա վարդապետական զավազան ստանում Վարդանից վարդականի աշակերտներն էին Հովհաննես Եղիշեցին և Գրիգոր Բջնեցին. Վերջինս իր մասին հայտնում է. «Սնեալ և վարձեալ առ ոտս տիեզերալոյս, սուրբ և երանաշորհ բարունապետին Վարդանայ»¹⁸.

Խոր Վիրապի դպրոցը այնքան հոշակված է եղել, որ նրա վերատեսուչ Վարդան վարդապետ Արևելցին «զամենայն եկեալսն ուսուցանէր, ուղղէր ճանապարհ»։ Հեղինակը Խոր Վիրապի դպրոցը համարում է «տիեզերահուակ», որաեզ ինքը գնացել է սական կրթութեան»¹⁹.

Խոր Վիրապի հոգեկոր բարձր տիպի դպրոցը 16 տարի շարունակ մեծ ձեռնհասությամբ ղեկավարել է Վարդան վարդապետ Արևելցին. Այդ դպրոցը համարվել է Արարատյան զավառի փառքն ու պարծանքը. Խոր Վիրապի դպրոցում դասավանդվում էին, աստվածաբանական առարկաներից բացի, մեկնություններ, ինչպես նաև արտաքին փիլիսոփայական գիտություններ և այլն. Ահա այդ մասին ինչ է վկայում Մատենադարանում պահպանվող

¹³ Գյուտ ավագ ժամանակ Աղանձանց. «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԲ, էջ 110—115։

¹⁴ Գարեգին արքեպիսկոպոս Հովհանիսիան, և հաղորդականներ, Հովհանոր կենտրոններ և Գլածորի բարձր դպրոցը, Երևանագեմ, 1944, էջ 191։

¹⁵ Խույն տեղում, էջ 192։

¹⁶ Անայան, Մանանյան. «Հայոց նոր վկաները», 1903 թ., էջմիածն, էջ 104։

¹⁷ Կարեգին եպիսկոպոս Հովհանիսիան, «Խաղաղական կյանք...», Բ, էջ 192։

¹⁸ Ենողակաթ, Հայագիտական ժողովածու, էջմիածն, 1913, էջ 31—33։

ձեռագիրը. «Հնդ որս երկեալ Ազքանազեան ազգիս ի տանէ Թորդոմայ, փառ և պարծանք Այրարատեան գաւառիս և իբրև զարեգակն փալիք յաշխարհի սքանչելի այրն Աստուծոյ և մեծանուն Հոետորն Վարդան վարդապետն, վարժելով զրասումս ի կրթասիրաց և ի գիտութիւն Աստուածաշունչ Կտակարանաց, և գիտանկանս այլ և յոյժ ըղձալի փափազմամբ մեկնեալ զսաղմուն Աստուածահօրն Դապի, թողու գանձ անհամեմատ սուրբ եկեղեցոյ, և ինքն առ անձկալին թիսուս վերափոխիս²⁰: Հասկանալի է, որ Խոր Վիրապում զսավանդվող վերոհիշյալ բազմազան առարկաները մի անձի գործ չէին կտրող լինել, և բնականաբար, կային նաև այլ դասախոսներ:

Խոր Վիրապի դպրոցի ուսման տեսողությունը եղել է 6—8 ամրի: Շասերը եկել են Խոր Վիրապի դպրոցը իրենց ուսումը կատարելագործելու և վարդապետական ասաիճան ստանալու համար:

Խոր Վիրապի դպրոցում Վարդան վարդապետ Արևելցուն աշակերտության են գալիս բազմաթիվ սաներ Կիլիկիայից, ինչպես նաև սղամական Հայոստանի բոլոր գավառներից: Մարանցից նաև կերպարան Սշանցից՝ ներսես Մշեցին, ծասյի նշեցին, Գրիգոր Բալուեցին, Հովհաննես Երզրունիացին, Գևորգ Լամբրոնացին, Գրիգոր Բշնեցին և ուրիշներ, իրենց դարի ամենազարգացած վարդապետներն են Հանդիսացել, ինչպես նաև գիտուն և հայտնի զպրոցտկան գործիներ և գրիշներ:

Այդ դպրոցի հուշտկը ալնբան մեծ է եղել և ազդեցություն թողել այլ զպրոցների վրա, որ հայ մանկավարժության և դպրոցի պատմությամբ գրադարձները գնահատել են հետեւյալ ձևով. «Խոր Վիրապի դպրոցը հայոց դպրոցների համար զեկավար գործիշներ, դպրապետներ պատրաստող օջախ է եղեւ, Կարելի է վստահ կերպով ասել, որ հայոց միջնադարի ամենամեծ և փալուն դպրոցի՝ Գլածորի դպրոցի բացումը այստեղ նախապատրաստվեց, այստեղ վերջեականապես կատարելագործվեցին վերոհիշյալ դպրոցի

²⁰ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 2522, էջ 333ր:

տաղանդավոր դպրապետներ ներսես Մշեցին, նսայի նշեցին և ուրիշները²¹:

Վարդան վարդապետ Արևելցին, 1267 թվականին Խոր Վիրապից գնում է Սաղմոսավանք, իսկ այնտեղից՝ Աղջոց Ս. Ստեփանոս, որանու ավարտում է Դանիելի մեկնությունը: 1270 թվականին նա մեկն էր Զագավանից Ժողովով զեկավարներից, որի աշխարհիկ կանոնները, ոյսուրահասկանալի լեզվով խմբագրում է Խոր-Վիրապում: Վարդանը բացի իր հայտնի Հայոց պատմությունից, գրել է նաև այլ աշխատություններ, որոնք լուրջ ուշադրության են արժանացած մեր բանասերների կողմից: Այս արդյունաշաաց և գիտուն վարդապետը վախճանվում է Խոր Վիրապի վաճեռում և այնաեղ թաղվում համաձայն իր աշակերտներից Մազարիայի վկայության. «Ի թուականին հայոց Զի (1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց Վարդան և Կիրակոս²², Աշխարհացույցի տեղեկությամբ, նա թաղված է Խոր Վիրապում. «և ի բերան վիրապին հանգուցեալ կան շիրիմ սուրբ, մեծահոլակ և եռամեծին տիեզերալոյս վարդապետին Վարդանալյան²³:

Այսպես, Խոր Վիրապի վանքը հանդիսացել է հայոց ամենակարեւոր սրբավայրերից մին և անջնջելի հետքեր է թողել հայոց բաղմադարյան մանկավարժության պատմության մեջ,

Այսօր, Խոր Վիրապի վանքը նորից հայ ժողովրդի կանգուն և պայծառ սրբություններից մեկն է:

Խոր Վիրապի վանքի ամբողջական վերակառումը ազգին Վեհափառ Հայության ուշադրության կենտրոնումն է եղել միշտ: Նորին Ս. Օծության իշճն է էլ ավելի պայծառացնել մեր համագայային սրբավայրերից այս հնագույն ուխտավայրը և հայ մշակութի հին կենտրոնը:

²¹ Ա. Մավորական. «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958 թ., էջ 271:

²² Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղականական թագավորության պատմության», Բ. էջ 192—193:

²³ Նույն տեղում, էջ 193:





ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՍԱՅԼՆ ԱՅՆ ԻԶԱՆԷՐ» ՏԱՂԻ ԱՌՄԻՏԱՍՅԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

«Սայլն այն իշանէր» Հարության տաղը հայկական միջնադարյան տաղային երաժշտության լավագույն նմուշներից է, Կոմիտաս վարդապետի անտիպ նյութերի մեջ այդ տագի մեղեդին գրի առնված գտնվել է երեք ձեռագրերում։ Այդ ձեռագրերը երևան է ուղարկել Կիլիկիայի Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը։ ստացվել են 1952 թվականին։

Զեռագրերից մեկը, № 344, Սպիրիդոն Մելիքյանի ձեռքով է, և դատելով արխիվի այլ նյութերից, արտագրված է Կոմիտասի գրառումից, որի բնագիրը չի պահպանված։

* Վեճափառ Հայրապետի կարգադրությամբ այս տարի ապրիլի 10-ին, զատկական հանդիսավոր սուրբ պատարագի առթիվ, Մայր Տաճարում Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը երգեց Գրիգոր Նարեկացու «Սայլն այն իշանէր» Հարության նշանագործ տաղը, որ գրի է տուել Կոմիտասը, և նկարագրված է երտծառադիտ Ռ. Աթայանի «Ալբեքքտվոր ներդրում Հայ երաժշտական ժառանգության մեջ» Հողվածում (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», «Հա-

գրվածքը հայկական ձայնանիշերով է, մեղեդին փոքր ինչ պարզունակ, հաճախ՝ հավասարաչափ տեղության հնչյուններով և ոիթմը միապաղադի Զեռագրի վրա կան Կոմիտասի մատիտով համեյումներ։

Երկրորդը, № 334/3, Կոմիտասի ձեռքով, սկաթանաք, լայն-լայն գրված, դարձյալ հայկական ձայնանիշերով է, իր իսկ բաղմաթիվ ուղղումներով և փոփոխություններով։ Մեղեդին նախորդից լրիվ է և հարուստ։

Երրորդը, № 335/10, Կոմիտասի ձեռքով, սովորական ձայնանիշերով, իր խմբագրած

սարակական գիտություններ, № 6, 1953)։ Աչքմիածինս ամսագրի խմբագրությունը, մտադրվելով տպագրել այդ տաղը, դիմեց երաժշտագետ Ռ. Աթայանին, ինդրելով Կոմիտաս վարդապետի ձեռագրից զուրու գրել այն և տալ անհրաժեշտ ժանոթություններ։

Այստեղ ներկայացվում են Գ. Նարեկացու Հարության տաղի կոմիտասյան ձայնագրության վերծանությունն ու ժանոթագրությունները։

Խմբագրություն «Էլմիրածին» ամսագրի

և արտադրածն է, թեև դարձյալ խմբադրական պակասներ ունի, բայց նախորդ երկուսից անհամեմատ կատարյալ և ամբողջական է, Հենց այդ տարրերակն էլ ներկայացված է այստեղ:

Թնագրերից ոչ մեկի մեջ գրված շէ, թե տազն ո՞ւմ երգածից է գրի առել Կոմիտաս վարդապետը (այդպիսի նշումներ կան համանման մի շարք այլ երգերի վերաբերյալ): Առաջին բնագիրը պետք է գրված լինի ոչ ուշ, բան 1904 թվականի աշունը, մյուսները հավանաբար նույն ժամանակ, համենայն դեպք 1906-ից ոչ ուշ:

Բոլոր երեք ձայնադրություններն էլ նարեկացու բանաստեղծության բնագիրը լրիվ չեն ընդունված: Դուցք պետք է բացարել նրանով, որ դանդաղ, հանդարտահոս մեղեդիով մոտ 60 տողանոց բանաստեղծությունը ամբողջությամբ երգելը շափազանց երկարատև կլիներ, ուստի խոսքը լրիվ գրելն անհրաժեշտ չէր: Բայց գրված տողերն էլ, մասնավորապես առաջին երկու աարբերակում, որվանգակության կապակցված ամբողջություն չեն ստեղծում: Առաջին ձայնադրությունն ընդհատված է բանաստեղծության ու ահա շխազայրա տողով, մինչ այդ նույնպես խոսքը թերի է, երկրորդն ավարտվում է «Երուսաղէմ» բառով և գարձյալ խոսքի կապակցությունը թերի է: Երրորդ խմբագրված տարրերակը համեմատաբար բարվոք վիճակում է: Տես ի վերայ ու հաջորդ տողերի համար եղանակի մեջ կրկնության նշան կա: օգտվելով դրանից, հեարավոր է խոսքերի մեջ ավելացնել կապակցություն ստեղծելու համար անհրաժեշտ տողերը: Նույն նպաաակով ու ահա տողերի մեղեդին հնարավոր է կրկնել:

Կոմիտասն այս տարրերակը սկզբնապես ավարտած է եղել, ինչպես նախորդը, «Երու-

սաղէմ» բառով, բայց նշում է արել «Փառքոհատվածը կրկնելու մասին: Հետո հենց ինքն էլ ավելացրել է բանաստեղծության նախավերշին տողը, որի համար մեղեդին լրացրել է էջի ներքեւում հայկական ձայնանիշերով գրված մի հատվածով, որն այստեղ մենք ընդգրկեցինք ամբողջության մեջ:

Մեղեդիի ամբողջ ընթացքում (բացի առաջին երկու նախադասություններից) հայկական ձայնանիշերով Կոմիտասի մատիտագիր նշումները կան, որոնք երկածայն երկարածիք ու սակավ փոփոխվող ներդաշնակության անավարտ մի փորձ են ներկայացնում («նշումների տևողությունը մեծ մասմ նշված չէ»): Դատելով բնույթից, ուրվագծված է ոչ թե երգախմբի, այլ զործիքային, մասնավորապես երգեհոնի կամ ֆիզիարմոնի ընկերակցություն:

Գեռագրերում տաղի կատարման արագության, կերպի և երանգների մասին որևէ ցուցում չկա (բացի Ս. Մելիքյանի ձեռքբով գրված տարրերակից, որտեղ սկզբում զրված է միայն շափակոր-միջակ նշումը): Խոսքի և երաժշտության բնույթից դժվար չէ, սակայն, կոահել, որ Կոմիտասն այդ տաղը պետք է երգած լինի՝ խաղաղ, տեմպն ազատ փոփոխելով, տեղ-տեղ արտասանության նման, բայց ընդհանուր առմամբ սահուն կապակցված:

Կոմիտաս վարդապետի այս ձայնագրությունը, իր խմբագրական թերություններով հանդերձ, ինչպես մեծ վարպետի մի շարք այլ ձայնագրությունները, գեղարվեստական և դիտական ակնառու արժեք ունի: Բացի դրանից, դա նարեկացու նշանավոր տաղի երաժշտության միակ աղբյուրն է մեզ համար:

Ռ. Ա. Ա. Յ. Յ. Ա. Ն.

ԱԱՅԼՆ ԱՅՆ ԻԶԱՆԵՐ

- ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԱ

ԶԱՅԹԱՎՐՄԱՐԺԱՌ ԿՈՄԻՏԱՋԵՏԻ

Ապյալ այնի ի - շա - ներ, ի լեռ - նէն ի լու - - սաւց;
Խ ի լի - բայ նն - - զա - բայի ու - կա - յի ար - լու - զայ;
սը լր - գէ - ի լու ա - սէ - ի լու;
Փառի թիս - սն - սի;
Ա - մն նն զօր յն - րու - թիսնի;
Ած - նալ նն, ած - նալ զայ - լիկն ած - նալ.

mus - hui lii, lpo - gni - gleui s, lpo - - gni - gleui.

la - m - him նպ - սաւ մեր սոյ - լիկի այն,

la - m - him չխա - դայր ա - նիւն այն, ա - նիւն այն:

la - նը - սրի - չա - լոյ զայր սպ սա - նէր

լի - բու - սա սա - պէմ սա պէմ.

la - սր - դի մու սպ սա - նէր

A musical score page featuring three staves of music. The top staff consists of two measures of vocal music with lyrics: "fine le - qü - più" and "qua - m - ub quid, m ub quid.". The middle staff consists of two measures of vocal music with lyrics: "q m' n'l" and "trum - su ob" followed by a fermata. The bottom staff consists of two measures of vocal music with lyrics: "que" and "ju - rna - plus". The music is written in a style with eighth and sixteenth note patterns, and the lyrics are placed below the notes.

ԳՐԻԴՈՐ ՆԱԽԵԿԱՑԻ**Տ Ա Ղ Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ս Ն**

Փառըք Քրիստոսի ամենազօր յարութեան:
 Սայլն այն իշանէր ի լեռնէն Մասեաց,
 և ի վերայ նորա ալոռոք են կարգեալ,
 և ի վերայ նորա գահոյք ուկեղէնք,
 և ի վերայ նորա բեհնձք ծիրանիք,
 և ի վերայ նորա որդի առքայի,
 և յաջմէ նորա վեցթևեան սերովքեքն,
 յանեկէ նորա բազմաչեայ քերովքեքն,
 առաջի նորա մանկունք գեղեցին,
 ի գիրկս նոցա խաչն տէրունական,
 ի ձեռին նոցա սաղմուարան և քնար,
 որք երգէին և ասէին.
 Փա՛ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:
 Ածեալ են, ածեալ զայլիկն,
 ածեալ են կացուցեալ.
 և ահա չշարժէր սայլիկն ա՛յն,
 և ահա չխաղայր անին ա՛յն:
 Եթէ հարիւր բարդ խալըրձան, վեց
 կորընկան,
 մին մանուշակ՝ իրձադիզեալ.
 ի Մասեաց յաջ կողմանէն
 սայլիկն ածեալ են կացուցեալ.
 և ահա չշարժէր սայլիկն ա՛յն,
 և ահա չխաղայր անին ա՛յն:
 Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
 և սամուխիքն ապրիշիմի.
 Վիոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ.
 և ահա չշարժէր սայլիկն ա՛յն,
 և ահս չխաղայր անին ա՛յն:
 Այն ճորտն ճոճ էր և ճապոկ,
 ուուամիշակ, հաստաքագուկ,


լալամաթիկունք, խարտիշագեղ, ամեղագոշ՝
 նա ձայն ածէր եզն ամոլին
 կանչին առնէր այսոսակին:
 Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,
 ծաղկախալուոցք, արագաքալլք,
 ընթացականք,
 եղջերն ամէն խաչանման,
 և մազն ամէն հոյլ մարգարիտ.
 և ահա շարժէր սայլիկն ա՛յն,
 և ահա խաղայր անին ա՛յն:
 Ի յառեղէն առեալ շարժումն կոյծն սայլիհ՝
 նա ձայն ածէր եզն ամոլին:
 Սայլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր

Մովսէսի:

Եւ այն հարիւր բարդ խալըրձանն՝
 այն նահապեաքն են, մարգարէք.
 Եւ այն վեց բարդ կորընկանն՝
 վեցօրեայ գործքն Աստուծոյ.
 Եւ այն մին մանուշակ՝
 միաւորեալ Երրորդութիւնն՝
 Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
 այն Յովհաննէն էր Մկրտիչն.
 Եւ այն չորս կուրծքն սայլիհ՝
 Ահետարանն էր Քրիստոսին:
 Ի գիլ գայր ի գիլ, սայլիկն ի գիլ,
 ի Ասսեաց յաջ կողմանէն՝
 սայլիկն ի գիլ գայր ի գիլ
 և ճորնչալով գայր մտանէր յԵրրուսաղէմ,
 և որդիք նոր Սիովնի նոր երգէին զալս
 ասելով.

Փա՛ռք Քրիստոսի:





Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն Հ Ե Տ *

VII.—«Սպիտակ կղզին»

Եզիպտոս պետք եղածեն ավելի խլեր էր իր ժամանակեն. Կոմիտաս ատեն շունեցավ Երուսաղեմ և այցելելու և ուղղակի մեկնեցավ Փարիզ:

Ան թարմացնելու կերթար իր խոնջ զիդերը: Այս անգամ զասախոսությանց ու Համերգներու հոգր չուներ, ինչպես ունեցեր էր երկիցս, 1901-ին և 1906-ին, և ինչպես պիտի ունենար ավելի հետո, վերջին անգամ գեմհանդիման գալու ատեն Եվրոպային հետ:

Հիմա կազզուցրի պետք ուներ հոգին, հինգ ամբողջ տարիներ լարված ու պրկված մնալի հետո: Ու Փարիզի մեջ ան ուներ իր բարեկամները, որոնք զինքը հհասկնային ու կսիրեին և որոնց մտերմության մեջ պիտի կարենար հոգին թեթևնալ պահ մը: Օրիորդ Մարգարիտ Բարայան, ինքն ալ երաժշաագետ, մեկն էր եղեր անոնցմե, որոնք զորավիդ եղեր էին Կոմիտասի, ու պիտի ըլլար այս անգամ ալ, երբ ան, 1911 հունիսի վերջը, հհայտնվեր հտնկարծ Սենի ափերում վրա:

Երբ 1913-ին Վարուժանի հետ հիմք կդնեինք ռնավասարգություններին, մեր առաջին մտածումներեն մեկը եղավ օրիորդ Բարայանին տպավորություններն ունենալ Կոմիտաս վարդապետի անձին ու դործին վրա,

* Շարունակված ռէմիածինս ամսագրի 1965 թվականի Խ-Ա-ից, Ե-Զ-Է-ից, Ը-Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի Խ-Ա-ից, Բ-ից, Բ-ից և Գ-ից:

Կցելու համար վարդապետին մեկ ուսումնասիրության, որ լույս պիտի տեսներ ռնավասարգությունն գրքին մեջ: Մեզ ուզարկած իր հոդվածին մեջ, հետեւյալ կերպով կպատմեր օրիորդ Բարայան Կոմիտասի 1911-ի այդ այցը Փարիզ:

«1911 թիվն էր⁷⁰, հուլիս ամսի մեջ, Փարիզում: Սոսկալի տաք օրեր, երբ նոր պատրաստվում էի ամառանոց երթալ: Անսպասելի կերպով դուռը բախում են, Կոմիտասն է՝ նոր եկած ու շափազանց հոգնած՝ Տաճկահայաստանի և Եզիպտոսի ճանապարհորդությունից: Հազիվ բարեկած՝ վազում է գեպի գաշնամուրը և ոգեռությամբ սկսում է երգել, ցույց տալ նոր երգերը, որ գեռ չեմ լսած, որոնց գեռ ծանոթ չեմ:»

Նույն ամառ հանգամանքները հաջողեցնում են ինձի երկու շաբաթ անցնել նրա հետ անզիական ռԱպիտակս կոշված կղզում, որոնց առավել ևս առիթ եմ ունենում հիանալու իր վրա:

Այդ խորապես հոգնած երաժիշտը հանգըստանալու տեղ մի տեսնազեղ երաժշտական հրաբուխի գրության մեջ էր. առավոտից գիշեր գաշնամուրի առջև նստած մեկ երգում, մեկ գրի էր առնում, մեկ նվազում էր երգերը. որոնք նրա հիշողությանը մեջը չէին ուզում ավելի ևս քնել:

Այսն տուն գալուս, մի նոր երգ էր ինձի երգում: Որքան աղաշում էի, որ գա զրունե-

⁷⁰ «Նավասարգություն» մեջ սխալ մամբ տպված է 1910,

լու, տեսնե կղզու սքանչելի բնությունը. բոլոր խոսքերս զուր էին. միայն երիկունները հոգարում էր հետո գնալ ծովափ. այնտեղ երկար ու ունկնդրում էինք ալիքներին և նա բացատրում, պատմում հայու մեկ վայրագ, մեկ քնուշ լեզուն. Ավագի վրա նստած նորու նոր երգեր էր երգում՝ զարմացած անդմիական սառ լուսնի առաջ, որ ապշած չէր հասկանում, թե այս տաք երգերը ո՞ր աշխարհից են գալիս. ու նրա միակ ունկնդիրը ես էի, և խոժոռ-խոժոռ ժայռերն ու մեղմիկ ալիքները:

Ուրիշ անդամներ նա ոգևորված պատմում էր ժողորդվական առածները, սովորությունները և մի ահագին աշխարհ բաց անում առջև և առավել ևս հոգիս ուժեղացնում իր հայրենասիրական երաժշտության ձգտումների մեջ:

Նույն այս Սպիտակ կղզիին մեջ Կոմիտաս անգամ մը երգած է նաև «Կոռունկ»-ը, այնպես ինչպես միայն ինք զիտեր երգել, հուզվելով և հուզելով, բայց և կախարդելով ունկնդիրները Օրիորդ Թարայան ինքն է, որ կպատմե նույն այգ հոգվածին մեջ:

«Երբեք չպիտի մոռանամ նույն կղզում պատահած մի սրտաշարժ դեպք: Անգլիական հյուրասեր, կոկիկ, փոքրիկ պանդոկում, ուր ապրում էինք նրա հետ, ի միշտ այլոց մի համակրելի անգիտական գույք էր բնակվում երկու սիրունիկ խարտյաշ որդիներով. Հայրը մի պաղարյուն կատարյալ բրիտանացի էր, իսկ մայրը սեալյա, ծիծաղկոտ իռլանդուհի:

Հայտնի է անգիտական երի հարգանքը գեղի հոգեկոր անձինք. նորա բոլորը՝ թեև շափականց հետաքրքրված երբեք չէին համարձակվում նույնիսկ ընդհանուր դահլիճը մտնել, երբ վարդապետը այնտեղ պարապում էր:

Հասնում է ընտանիքի արձակուրդի վերջին օրը և բոլորս պսպղուն թեյի սեղանին ջուրջը նստած՝ մի ժամից պիտի րաժանվենք:

Տիկինը սիրու առնելով շտապում է ինձ հարցնել, թե արդյոք շատ անհամեստություն ապիտի համարենք, եթե իր փափագը հայտնե լսելու վարդապետին՝ նրա ազգային երգերը երգելիս:

Վարդապետը հոժարությամբ վեր է կենում, մոտենում դաշնամուրին և սկսում «Կոռունկ»-ը: Հազիկ ավարտած նայում եմ տիկնողը. — ի՞նչ տեսնեմ. այդ զվարթ դեմքը ամբողջապես գողում է, այլևս հուզմունքը չի կարող պահել և աղի արտասուրով լալիս է....

Ամուսինը մոտենում է ինձիւ և Այս ի՞նչ արիք կնոցս: Տասը տարի ամուսնացած, կնոցս այս վիճակին մեջ չեմ տեսել...»

Բայց հրաժեշտի ժամը վրա է հասնում և տիկինը աշքերը սրբելով հրաժեշտ է առնում և նորից հեկեկալով ասում. «Այս ի՞նչ երաժշտություն էր, որ ամրողը էությունս տակնուզրա արագ. երբեք չպիտի մոռանամ նրանց»⁷:

Զե՞ր զիտեր հեք իրավանդուհին, որ բովանդակ ժողովուրդի մը զարավոր կոկիծն ու կարուտն էին, որ կխորանային այդ երգին մեջ, ու կխարազը, որ գայն երգեր էր իրեն, աշխարհ էր եկեր, որ զանոնք պատմե աշխարհին:

Սպիտակ կղզին ազգոր պահ մըն է Կոմիտասի կյանքին մեջ: Ան հոգեպես կազզուրցեցավ հոն, և երբ 1911 գեկտեմբերին կղառնար Պոլիս շարունակելու համար իր ընդհատված առաքելությունը, նոր տեսիլքներով բռնկած էր իր հոգին:

VIII.—Կոմիտաս և Եկեղեցին

Կոմիտաս հիմա կրկին Պոլիս է, շուրջ յոթը ամսվան բացակայութենե մը հետո:

Հոգվով թարմացած, եկեր էր վերստին նվիրվելու իր աքնազան պարապմունքներուն:

Լուծը, զոր հայ ժողովուրդը գրեր էր անոր ուսերուն, շատ էր ահավոր, որպեսզի միակ մարդու մը ուժերը անոր բավելին: Պետք էր դեռ շատ տքներ Կոմիտաս, որպեսզի հայ երաժշտությունը իր բովանդակ զաղտնիքը ըսեր, որպեսզի հայ ժողովուրդը լսեր իր երգը, որպեսզի օտարը ևս զայն ճանչնար: Ու պետք էր, որ գեռ հայ երդը գտվեր իր խորթ տարրերեն ու թուրք ոշարքիւներու ճիրաններեն ազատվեին հայ շարականները:

օ օ օ

Կոմիտաս Պոլսու մեջ երկցեր էր պահու մը, երբ տիրացուները դեռ կշարունակին իրենց անփառունակ գեղգեղը Հայ եկեղեցվո կամարներուն ատել: «Հուրդրիթյունը նոր գրադում բերած էր մարդոց, ու անոնք եկեղեցիներու մասին ևս մտածելու ատեն շունեին: Տիրացուները, որ քանի մը տարի առաջ պահ մը շփոթեր էին բազմաձայն պատարագը եկեղեցի մտած ատեն, կոկին դարձեր էին սանձարձակ: Իրենցմով հետաքրքրվող շկար:

Կոմիտասի հայտնությունը Պոլսու մեջ դարձյալ շվարեցուց հանկարծ գիրենքի կղզային, որ իրենց ահրապետությունը արգեն կսարսի հիմեն: Խլրդային աշխատանքները, որոնցմով անոնք մթնոլորտը թունա-

վորել ջանացին պահ մը, և սմսեղուկ պայքարը, որ «Ժամանակա»-ի, «Տաճար»-ի նման թերթերու էջերեն փորձվեցալ Կոմիտասի գեմ, Հուսահամ մարդոց հուսկ ճիգերն էին լոկ:

Հայ Եկեղեցին թուրք «շարքի»-ներեն փրկելու մտահոգությունը, որ Համբիդի վերջին տարիներուն պահ մը ոզնորեր էր դաս մը մարդիկ Պոլսո մեջ, Հանկարծ բռնկեցավ կրկին, երբ Հազիկ Պոլիսո ոտք կոնխեր էր Կոմիտասու Ան Հայ շարականները տիրացուներու կոկորդեն ազատելու չէր եկած. ավելի կենսական ու ավելի անմիջական ուրիշ հոգեր կհափշտակեին իր առարելությունը, ու անոնց անգամ դժվար պիտի հասներ միս-մինակը. ուժեր շկային դեռ շուրջը, որոնց վրա կոթներ, ան ստիպված էր այդ ուժերը ստեղծել նախ:

Եվ սակայն Կոմիտասի վրա խուժեցին, երբ Հազիկ ոտք դրած էր սովորականներուն բաղաքը: Ուզեցին, որ Եկեղեցիներեն սկսի ան իր առարելությունը:

Սերաստի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոս Գուշակյան էր նախ, որ «Բյուլղանգիոն»-ի մեջ լույս ընծայած իր ընդարձակ մեկ հոդվածով ազգային վարչական մարմիններու ուշադրությունը կհրավիրեր Հայ Եկեղեցական երաժշտության հարցին վրա, և կշեշտեր նախախնամական գերը, որո կրնար ունենալ Կոմիտաս վարդապետ բարեկարգելու համար Հայ Եկեղեցական երաժշտությունը:

Անոր արձագանք կուտար դոկտ. Պազիլ Խան ճիշտ նույն Հարցը շոշափելով «Բյուլղանգիոն»-ի մեջ, «Կոմիտաս վարդապետեն ինչպես կրնանք օգտվիլ խորագրով հոդվածով մը:

Դոկտ. Պազիլ Խան, Կոմիտաս վարդապետի Պոլսո առաջին համերգեն քանի մը օր հետո, կրկին կանգրադառնար միենույն խնդրին նույն այդ թերթին մեջ՝, արդեն մեղագրելու համար մեր ազգային հաստատությունները, որոնք գրնավ միջոցներու շեն դիմեր անոր տազանդեն ու արաքրո կարգի ձիրքերեն օգտվելու համար, ու կավելցներ. «Անոր ձայնը ընածին, բացառիկ ձիրք մ’ է, դուցե դարերու պեաք ըլլա, որ կրկին մենք անոր նմանք կարենանք տեսնելու Մեղք է, եթե չօգտվինք առիթեն ու անոր հետ համաձայնության մը լՀամսինք մեր կարենոր դպրոցներուն և Եկեղեցիներուն մեջ բարվոք երաժշտության խնդրին հիմնական կերպով մը լուծելու Անցյալ կիրակի մեզմե շատեր տեսան անձամբ, որ մեր Եկեղեցական և ժո-

ղովդական երգերն ինչ վեհության կը նան հասնիլ Կոմիտաս վարդապետ գործնական անապես ցուց տվավ Պոլսո հայլայի գալաքին արդու մը ինչեր կրնա ընել կարճ ժամանակամիջոցի մը մեջու Թարգման ըլլալով աշխարհական թե կղերական բազմաթիվ մարդոց փափագին, Պազիլ Խան կառաջարկեր, որ Կոմիտաս վարդապետ կրկնե իր համերդին Եկեղեցական մասը Պոլսո զիխավոր Եկեղեցիներուն մեջ, ինչպես նաև կթելադրեր Քերայի Ս. Երրորդություն Եկեղեցի թաղականության կամ էսայան վարժարանի հոգաբարձության, որպեսզի նախաձեռնությունն ստանձնեին, ուրիշ թաղերու մարմիններուն գործակցությամբ, երգախմբեր կագմել Եկեղեցիներու կողքին ու զանոնք դաստիարակել Կոմիտաս վարդապետին Հակողության ներքեւ Շարկավ այս խումբերը. — Կըսեր, — պիտի մշակեն նոր ազգային երգերն ալ և խեզմ տաճկաստանցին դարերու սարկութենե վերջ դարձալ պիտի և հիշե, թե մեր նախաջայերն ինչ խանդավառությամբ Հեղեղի նման կթափեին իրենց հոգվույն րուսն զգացումները մեր ազգային բանաստեղծությանց մեջ:

* * *

Թորգոմ եպիսկոպոս և զոկտ. Պազիլ Խան կմոնային սակայն, որ Կոմիտաս Պոլսո հէր եկած պայքար մղելու տիրացուներուն զեմ և անոնց ճիրաններեն ազատելու հայ շարականները: Ան իր ուսերուն վրա բեռը ուներ այլապես ծանը և նվիրական հոգերու, որոնք առ այժմ կլանենին իր բովանդակ ուժերն ու ժամանակը: Անոր գերազույն ժամանումն էր գլուխ հանել երաժշտանոցի մը սաեղծումը Պոլսո մեջ, Հայ երաժշտությունը լրիվ լույս աշխարհ հանել, և պատրաստել իր ձեռնասունները: Աղկե հետո այլնս զյուրին պիտի ըլլաը գոհացում տալ այն մյուս բոլոր հոգերուն, զորս ճակաապիրը հանձներ էր իրեն: Եվ սակայն Կոմիտաս, իր այդ սուզ պայմաններուն մեջ անգամ, չէր կրնար Հայ Եկեղեցին լրել իր բախատին: Չէր ուղեր անշուշտ ճակատ ճակատի տալ մարդոց խավարամաության հետ, և խարազանը ձեռքը պատաիլ Հայ Եկեղեցիները գուրս քշելու համար անկեգինեառներու հերոսները: Փոխարեն, ան փորձեց ինքն իսկ Հայ Եկեղեցի մեջ բերել անոր հարազատ երգեցողությունը, ու առաջին հերթին երգել հոն իր հորինած բազմաձայն պատարազը:

Հավագույն ուղին պիտի ըլլար այդ՝ Հայ Եկեղեցական երաժշտության բարեկարգման դիմելու

⁷² Աննանի երգ, մեռյալ կանոն, «Բյուլղանգիոն», 1910 նյուեմբեր 28 (դեկտեմբեր 12), թիվ 4297.

թազմածայն պատարագ վազուց հորինած էր Կոմիտաս, ու տարիներով զայն երգած էջմիածնի մեջ, Ավելին. ուներ բազմածայն պատարագի այլազան փոփոխակները: 1909-ին Վենետիկ՝ Հ. Ղեոնդ Տայանի ուղղած իր նամակին մեջ Կոմիտաս ինքն իսկ հճայտարար, թե «Հայկական պատարագն ունիմ 7 տեսակ բազմածայն դաշնակած»⁷³:

Թծախնդիր արվեստագետը, որ Կոմիտասն էր, չէր ուզեր վերջնական սեպել երկ մը, որուն վրա դեռ կրնար տքնիլ: Պատարագի այդ ? փոփոխակները, — որոնք, ավա՞ղ, դեռ Հայտնվեցան ցարդ, — չէին դոհացներ զինքը: Ան Պոլսու մեջ նոր մշակման մը ենթարկեց իր պատարագը, և քանից երգեց իր «Գուսան» երգախմբով: «Պոլսահայությունը, — կգրե Գուսան վարդապետ, — երեք անդամ միայն լսեց աննման պատարագը, Ղալաթիո եկեղեցին, վարդապետի առաջնորդությամբ»⁷⁴:

Ինք չեմ հիշեր Կոմիտասի վարած պատարագներուն թիվը ճշտիլ: Բայց դիտեմ, թե անոնցմե երկուքին անձամք ներկա եղած եմ Ղալաթիո եկեղեցվո մեջ, և մինչև այսօր ալ կվերապիմ հուզումը զանոնք հիշելու ատեն Կոմիտասի վարած պատարագները մեյմեկ հոգեոր համերգ էին և հոգեկան ճշմարիտ վայելք, և անոնց պատճառած արքեցությունը ժամանակը չէր կրնար մարել. ան ավելի ևս պիտի քաղցրանար տարիներուն հետ, ու կրկին մեզ պիտի գինովցըներ ամեն անդամ, որ մեր մտածման մեջ բերեինք անզուգական վարպետը:

Իղուր չէր որ Կոմիտաս կնախընտրեր Ղալաթիո Ս. Լուսավորիչը իր վարած պատարագներուն համար: Այս եկեղեցին բազմածայն երգեցողության միջնաբերդ էր եղեր հորմեհետե Զիլինկիրյան գպրապետ էր եկեր հոն և երգել ավեր էր իր եռաձայնը, երգչախմբով մը, որոն կորիզը Կեդրոնականի աղաքն էին եղեր: Հիմա Կոմիտասի խումբին մեջ ևս, Կեդրոնականի երբեմնի այդ սաներուն հետ, Կեդրոնական հաճախող նոր աշակերաներն ալ կային, որոնց երգի ուսուցիչը ինքը Կոմիտասն էր հիմա: Եվ վերջապես Ղալաթիո դպրաց դասը, նոր օրերու մեջ, իբր ղեկավար ուներ Կոմիտասի վեց սաներեն մեկը՝ Արտաշես Ապաճյանը:

Գուսան վարդապետ մոռցած է հիշել և այն պաամական պատարագը, զոր Կոմիտաս վարդապետ վարեց Մայր Եկեղեցվո մեջ, 1913 հոկտեմբեր 12/25-ին, հավետ հիշա-

տակելի այն օրը, երբ Հայ ժողովուրդը կուզեր աշխարհին ցուց տալ տասնինգ գարերը, որոնք կակսեին Սահակեն ու Մեսրոպեն, լուսավոր ճետքեր ձգելու համար իրենց ճամբուն վրա: Այդ օրվան պատարագը եկեղեցական արարողություն մը չէր միայն, այլ ամբողջ ժողովուրդի մը գոհարանության ճիզը սուրբերու մեծագույնին՝ Մեսրոպին համար, որ զիտակցություն պարզեց էր իրեն և կյանքի: Ու ի՞նչ լսեմ էր պահը, երբ երկու մեծ առաքյալներ իրենց հոգին կգրկախաննեին, մեկը գարերուն խորեն մեր մեջ կաթեցնելու համար իր տառերությունը, և մյուսը մեր սրտերը բանալով այդ զգիանքին:

* * *

Կոմիտաս եկեղեցվո մեջ այլևս գուրսի մարդը չէր. կզգայիր, որ սրբավայր մը մտած է ան: Զէիր կրնար դուն ալ չպատկառիլ հետը:

«Եկեղեցվո մեջ իր ընթերցումը կամ երգելը խորունկ կերպով կազմեին ամենասկեպտիկ մարգու վրա իսկ, — կգրե Կարո Ուշագլյան: — Անդիմագրելի էր իր ձայնին ազդեցությունը: Ես Կիշեմ, 1910-ին, երբ առաջին անգամ Կուտինա՝ իր ծննդավայրը այցելեց, իր մկրտված Ս. Թորոս եկեղեցվո մեջ, շաբաթ երեկո մը, երգեց «Լոյս զուարթ»-ը, կանգնած իր սկ վեղարով, ատյանին մեջտեղ: Հոգեկան խոռվով մը պատեց մեզ ամենքս, նույնիսկ շունչը կրոնեիր զինք խանգարել վախնալով: Նույն օրը կարծես իր ծննդավայրին կարուտը կառներ, իր ծննդին կորուստին, իր որբության ու մարդկության տառապանքներուն հիշողությունն էր, որ զինք կալեկոծեր, ու այս բոլորը երածըշտություն դարձած՝ հեղեղի պես կհոսեին կամ ինչպես փոթորիկ՝ կբարձրանային եկեղեցվո գմբեթն ի վեր...»

... Հետեւյալ օրվան պատարագի ատեն ծննդապի երգած «Բազմութիւնը հրեշտակաց» սրբասացությունը, ուրիշ առթիվ երգած «Բաց մեզ, Տէրք-ը, պատարագած միջոցին Շնուքը, կերէք-ը, «և սրբութիւն սրբոց-ը և այլն և այլն, որոնք մեկ-մեկ հոգեկան թանկագին ու քարձը վայելքներ էին ունկնդիրներուն համար»:

Կոմիտասի երգած շաբակաները երգեր չէին, ազոթքներ էին միայն: Ան մեղեղիներուն բառերն էր որ կոգեկոչեր, և ոչ եղանակները: Իր համոզումով երգերն էր, որ պետք է հեակեին բառերուն, և ոչ թե բառերը երդին:

«Հաճույք կամ ժամանց չէր երածշտությունը այս մեծ հավատացողի համար, —

⁷³ Հ. Ղեան Տայան, «Կոմիտաս վարդապետ», Վենետիկ, 1936, էջ 35:

⁷⁴ Թեոդիկ, «Ամենուն տարեցուցը», 1926, էջ 444.

կշարումակե Ուշագլյան,— լրջություն մը կառներ ամենապարզ երգի մը առջև իսկ եվ պետք էր տեսնել այս շենշող ու կատակող մարդը երգարեմի վրա մանավանդ եկեղեցվո մեջ, ուր լուրջ էր ծայրահեղ կերպով, վերացած մը, մաղնիսացած մը: Ոչ միայն երգելու միջոցին, այլև Ավետարանի պարզ ընթերցումը երաժշաություն էր անոր բերնին մեջ, իմաստին համաձայն եղանակ, շեշա ու շափ կուտար ընթերցումին ու երգերուն: Եղանակն ու խոսքերը համընթաց կբալեն:

Իսկ իր մատուցած պատարագները պակուցման պահեր էին ուղղակի:

Օրիորդ Աղավնի Մեսրոպյան կգրե իր հուշերուն մեջ:

«Անմոռանալի են այն հինգշաբթիները, երբ Կոմիտասը իր երգախումբով Ղալաթիոն լուսավորիչ եկեղեցին արարողությանց կմասնակցերը: Երգախումբի փորձերուն հաճախ ներկա եմ եգեր: Կոմիտասը բացի իր աշակերտներն, մեծ բժախինդությամբ կպատրաստեր նաև քահանայից և դպրաց դասու բաժինները: Որքան անմոռանալի պիտի մնա Ղալաթիո դարավոր եկեղեցվո 1914 թվի Ավագ հինգշաբթի քառաձայն պատարագը, որուն թե՝ հեղինակը, թե՝ օրվան պատարագին էր Կոմիտասը: Այդ պատմական օրվան Կոմիտասյան քառաձայն պահապահին համար՝ մարոզ Մեծ պահքի յոթ երկար շաբաթները թե՝ իր երգախումբին մնայուն տեղը (Բերայի Էսայան վարժարանի սրահը), թե՝ Կեդրոնական վարժարանին մեջ հեղինակը հրավիրեց Պոլսո զանազան արվարձաններն դպրապետներ՝ զանոնք մարզելու համար քառաձայն երգեցողության մեջ»⁷⁵:

Ճիշտ է Կոմիտաս Հաղվարեպորեն կպարագեր: Բայց անոնք որ ներկա եղած են անոր մատուցած պատարագին, չեն կրնար վերացած շրպալի տես հոգեկան այն հափշտակության, որուն անձնատուր կրլար վարդապետը Տիրողը սեղանին առջեւ:

Կարկառուն մեր հոգեռականներեն շատերուն պատարագն եմ տեսեր: Ոմանց համար ան հոգեռոր ծես մըն էր, զոր կկատարեին երկյուղածությամբ ու բարեխղությամբ, իբրև Հայ եկեղեցվո ամեննեն նվիրական արարողությունը: Այդպես էր, օրինակ, պատարագը, զոր կմատուցաներ Օրմանյան: Եղիշե Դուրյան կվերանար պատարագած աւաենը, կաննյութանար գերագույն հափշտակության մը մեջ, ու անծանոթ ոլորտներ կփխադրեր քեզ ալ մեկտեղ: Կոմիտաս ինք ևս աղոթք կդառնար, ու կստիպեր, որ դուն ալ աղոթքս հետը:

Հատվածը, որ եկեղեցվո հետ Կոմիտաս վարդապետի կապը կալատմե, ամբողջական պիտի լըլլար, եթե շտնգրադառնայինը իր ունեցած կապերուն ալ հայ եկեղեցական իշխանությանց հետ:

Մայր Աթոռոն իր բաժանման պարագաներուն մասին խոսելու ատեն, ըսինք արգեն անգամ մը, թե Կոմիտաս իր ուխտեն չէր որ կհեռանար, և թե ան ինքինք միշտ սերտ կապված կզգար անորու Հիմա, որ կարգն է խոսելու Հայ եկեղեցվո հանգեալ իր ոռւնեցած շահագրգոռության մասին, շնոք կրնար շանդրագառնալ իր զգացումներուն ալ գեսի Հայ եկեղեցին:

Գիտենք, որ Կոմիտաս էջմիածնեն հեռացավ սրտնեղ. այնտեղ ստեղծված նոր մթնուրտին մեջ զգացեր էր, որ ռկիմեղգվի հոգինս, մանավանդ երբ Արևմուտք կատարած շրջագայություններեն հետո տեսեր էր, թե գործունեության նոր դաշտ մը կբացեր իր առջև, որուն պիտի չկրնար հասնիլ էջմիածնի պայմաններուն մեջ:

Արդ, այդ պայմանները այլևս անհանդուրժելի էին Կոմիտասի համար:

Ալեքսանդր Շահվերդյան, անդրադառնալով այն փաստին, որ Կոմիտաս ավելի ևս դառնացած էր իր առաքելության համար նոր հնարավորություններ զգալով էջմիածնի պատերեն դուրս, կրբե:

«Բայց եթե առաջ նա հաճույք էր զգում էջմիածնի իր մենակեցությունից, ապա տյժմ խեղդվում է վանքի նեղ շրջապատում, սակավաթիվ մարդկանց միշավայրում, որոնց մեծ մասը անտարբեր կամ թշնամար էր վերաբերվում նրա արվեստին: Էջմիածինն արդեն թվում է նրան մի քանտ, որտեղ ինքը լի կարող լիովին ծավալել իր ուժերը: Մյուս կողմից հետզհետե ավելի են սկսում նեղել նրան սոսուր հայրերը, որոնք նախանձ ու անբարյացակամ էին նրա հանդեպ: Կոմիտաս իր հետաքրքրություններով, մտահղացումներով ու ստեղծագործական խոյանքներով օտար, անհասկանալի ու ավելորդ մտրդ էր նրանց համար: Հետզհետե ավելի ցայտուն է երեսում Կոմիտասի և էջմիածնի կրոնական հիմքերը շանասիրաբար պաշտպանողների միջև առաջացած ներհակությունը, որ վերածվելով բացահայտ հալածանքի՝ անտանելի գրություն է ստեղծում Կոմիտասի համար ու մզում նրան փախչելու էջմիածնից»⁷⁶:

⁷⁵ Ալեքսանդր Շահվերդյան, «Հայ երաժշտության պատմության ակնարկեր», Երևան, 1959, էջ 363:

Հստ Շահվերդյանի, այդ «հալածանք»-ն էր, որ Կոմիտասը էջմիածնեն փախչելու մղեց, և կարծե, թե խզեց նաև անոր հոգեկան կապերը Հայ Եկեղեցվո հետ.

«Էջմիածնից հեռանալը ինքնին նշանակում էր, որ Կոմիտասը կապերը խզեց Եկեղեցուց, թեև դա տեղի չունեցավ պաշտոնական կարգաթողությամբ ու Կուսակրոնությունից հրաժարվելով։ Այդ խզումը, որ վաղուց էր պատրաստվում, անխոսափելի էր, որովհետև Կոմիտասի ամբողջ գործունեությունը խորթ էր Եկեղեցվո՝ երաժշտության ասպարեզում ունեցած պահպանողական-հետադիմական քաղաքականությանը»⁷⁷:

Անոնք, որ Կոմիտասի հետագա կյանքը գիտեն, հազիվ թե համաձայնին անվանի երաժշտագետին եղրակացովթյանց հետ, և հիմնվելով Հայ Հոգեռականների ումանց կողմեն հետագային ցուց տրված լկամության վրա, տարպին ենթադրելու, թե Եկեղեցին ևս, Կոմիտասեն հուսախար, շարունակեց զայն հալածեն նաև հետո, ինչպես կհասատե Շահվերդյան։

«Էջմիածնի կղերի պաշտոնական շրջան-ները Կոմիտասին համարում էին ուխտադրուժ։ Այդ հիման վրա էլ երաժշտագետի շուրջն ստեղծվեց Հայածնիքի, հետապրնդման, զրպարտությունների ու դավերի մթնոլորա, որը շափաղանց ճնշում էր Կոմիտասին և բազմաթիվ ու բազմակողմանի խոշընդուածներ առաջացնում նրա աշխատանքի մեջ... Հիշելով այս կետը, մենք պետք է կորականապես ետ մղենք Եկեղեցական գործիչների փորձերը, որով նրանք զանում էին հետին թվով, Կոմիտասի հիշվանությունից հետո արդեն, սվաղել, մոռացության տալ մեծ երաժշտագետի ու Եկեղեցու խոր կոնֆլիկտն ապացուցող բազմաթիվ փաստերը։ Ո՞ւ Կոմիտասը Եկեղեցուն չէր պատկանում, որովհետև պատկանում էր ժողովրդին։ Ժխտենք, ուրեմն, որոշ կենսագիրների հնարած այն առասպելը, թե անքակտելի միասնություն կար Կոմիտասի ու Եկեղեցու միշեն»⁷⁸։

Մոտեն աեղակ Կոմիտասը շոշապատող պտյմտններուն, շենք կրնար շրաժնել այն

⁷⁷ Ալեքսանդր Շահվերդյան, «Իշլած աշխատությունը, էլ 363,

⁷⁸ Անդ, էջ 363—364,

խոր վրդովումը, որով տոգորված է Շահվերդյան, վերհիշած ատեն խոշընդուածները, զորս գտավ Կոմիտաս իր ճամրուն վրա։ Բայց իրականութենք հեռացած պիտի ըլլայինք, եթե տարվեինք նաև ենթադրելու, թե Կոմիտաս վարդապետ այդ խոշընդուածներին խրտնած, այլև չէր պատկաներ Հայ Եկեղեցին։

Կարո Ուշագլյան, Կոմիտասի հայրենակիցը, որ շատ մոտեն ճանչցավ զայն անոր Պոլսո տարիներուն, դիտել կուտար «Զվարթնոց»-ի մեջ։

«Կոմիտաս վարդապետ դուրս եկավ վանքին ոլ թե որովհետև մարած էր իր մեջ Եկեղեցական սապարեզին հմայքը, այլ իր շրջապատը անջնջելի զարձած էր իրեն համար և իր մեծ ձեռնարկն էր, որ պիտի տուժեր հոն մնալով։ Այդ շրջանին շատեր զինք տեսան միայն եղանակնեսներու ատեն բեմի վրա և զաղափար կազմեցին իր մասին. սակայն ան՝ նույնչափ կարող և արժանավոր էր Եկեղեցական բեմի վրա ևս՝ իրը ժամարար և իրը պերճարան քարոզիչ»։

Կարո Ուշագլյան սապես կընդգծե հոգեռականը, որ կշարունակեր ապրիլ Կոմիտաս վարդապետի մեջ, ուխտի մարգը, որ միշտ կմնար անոր մեջ՝ հակառակ իր կրած բոլոր դառնություններուն, և որ հեռու էր սակայն խարիսխել կույր հավատքի մը մեջ։

«Կոմիտաս վարդապետ կրոնական կույր հավատքի հետ գործ չունեցավ երբեք. ան իմաստասեր էր և խորհրդապապաշտու Եկեղեցական սապարեզը իր մեջ դրավ երդի ու եղանակի ճաշակը և ապագա Կոմիտասի խորքը կազմվեցավ տաճարի խնկարույր ու խորհրդավոր մթնոլորտին մեջ։ Ան պահեց իր կրոնավորի ուխտը, իր սքեմը և դիրքը արժանավոր կերպով։ Ապրեցավ վանական կրոնավորի կյանքով՝ պարզ և անպաճույն նվիրվելու համար իր երաժշտական առաքելության, որուն խորունկ հավատացող մը եղավ մինչեւ վերջ»։

Կոմիտաս միշտ սքեմ կրեց. շպտիկցնենք զայն, ենթադրելով, որ զանիկա կրեց ակամա. Կոմիտաս կեղծել չէր գիտեր. ան սքեմը պիտի նետեր ուսեն, եթե զայն ծանր դտներ ուսերուն վրա»։

(Շարունակելի)

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

(Անդամ Կերպարային Հոգևոր Խոշեղի)

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ղ Ա *

Այս երկի արժեքավոր կողմերից մեկն էլ այն է, որ ժամանակակից կյանքի տարրեր կողմերը, ուզմական գործողությունները դրսեղավել են ոչ միայն գեղարվեստորեն, այլև հշմարտացի: Իրականությունը ներկայացնելու համար բանաստեղծը վերցնում է հասարակական կյանքի տարրեր կողմերը՝ իրենց առանձնահատկություններով. Թշնամիների ուղղմական գործողությունները նկարագրելու մեջ նա առարկայական է և անաշուու: Մահմեդականների և քրիստոնյանների բանակները բախվում են. հաջողությունը Սալահեղինի կողմն է: Այդ գործողություններն էլ վերին աստիճանի անաշառությամբ են տրված¹⁶⁴.

Գրիգոր Տղան իրական կյանքի և ուզմական գործողությունների միայն պասիվ նկարագրող չէ: Նա միաժամանակ ցույց է տալիս իր գրական կամ բացասական վերբերմունքը. Օրինակ՝ Սալահեղինի գաղանաբարող զինվորները բնորոշվել են որպես «շուն» և «գայլ».

Պայծառ և ճշմարտացի են տրված երուսաղեմի երրեմնի խաղաղ կյանքի ու կենցաղի տարրեր կողմերը:

Նախրան Սալահեղինի գրավումը, երուսաղեմը նման է եղել զուգված-զարդարված մի հարսի: Բայց այժմ, ալդ նույն քաղաքը բոլորովին այլ պատկեր ունի.

«Եւ թագոնկեց զիս արարին,
Ըշմարսնութեան քողն բարձին,
Ըզպատմումանն իմ հրաշալին
Ցինէն ի բաց մերկացուցին»¹⁶⁵:

Նրանք, որոնք մի կերպ կոտորածներից ազատվել են, նույնպես ողբալի վիճակում են: Սրանց տանջում են, ենթարկում անլուր

* Շարունակված ռէշմիաժին ամսագրի 1964 թվականի № Ժ-ից, 1965 թվականի № № Ա-ից, Ե-Զ-է-ից, Ը-Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի № Բ-ից և Գ-ից:

¹⁶⁴ Dulaquier, "Documents arméniens.., p. 275.

¹⁶⁵ Անդ, էջ 287.

կտտանքի: Սրտաճմլիկ է գերեվարություն նկարագիրը.

«Դողան ոսկերքս և սասանին,

Լոյս իմ քաղի, սիրտըս ճըմլին.

Քանգի ալօք իմ տեսանին.

Ողորմագին հարուածք նոցին,

Իշխանք բազումք ի տանշելին.

Եւ ի լընչից պարապեցին,

Եւ հետիուրս տանէին.

Տղայք ի մէջ ճանապարհին,

Ի յոշ կոշել գնալ մեռանին...»¹⁶⁶,

Գերիները շատ վաս պայմաններում են ապրում: Նրանք ասնչզվում են սովից, մերկությունից, տապից և հիվանդություններից.

«Կարօտք հացի մերկ շրչէին,

Եւ բոկ ոտամրք հետևէին,

Քաղաքացին և դեղացին...»¹⁶⁷,

Ողբի մոտ մեկ լորրորդը նվիրված է Լեռն Բ-ի՝ Սալահեղինի զեմ մզած պատերազմներին ու տարած հաղթանակներին:

Ներսես Շնորհալին «Ողբ Եղեսիու» պոեմում իր հայրենասիրական տրամադրություններն արտահայտում է Անիի, Վազարշապատի և ընդհանրապես Հայաստանի անցյան ու ներկան հակառելու միջոցով, ուշագրությունը սկեռելով միայն պատմական անցյալի վրա, իսկ Գրիգոր Տղան իր Ողբում աշքաթող շանելով պատմական անցյալը, զիսավոր ուշագրությունը դարձնում է ներկայի, իրական անցուղարձի վրա՝ առնչելով դրանք Կիլիկիայի և Լեռն Բ-ի հետ: Երուսաղեմի գրավումից գեռ մի ամիս շանցած, Սալահեղինն հարձակվեց Սիրիայի և ապահիլիկայի վրա: Ավերելով արշավանքի ճանապարհին գտնվող բոլոր երկրները, նահասնում է Կիլիկիա:

«Մըտին յաշխարհըն Կիլիկին,

Ուր իշխեցող էր Հայկազնին

Մեծահաղթող լեռն արին...»¹⁶⁸,

¹⁶⁶ Անդ, էջ 304.

¹⁶⁷ Անդ:

¹⁶⁸ Անդ, էջ 298.

Հեռնր անձամբ առաջնորդում է հայոց բա-
նակը և գենքի ուժով կասեցնում Սալահեղ-
դինի առաջացումը.

«Ե՞ս ի դաշտ լայն անդրստին,
Ասպատակաւ զօրու նոցին.
Լեռն իշխան Կիլիկիցին...
Էառ ի ձեռոս երկսայրին,
Զայնեաց զանուն սրբոյ խաչին,
Կայթեաց ի մէջ պատերազմին,
Պրաքէս զարծիւ իսկ յերամին»¹⁶⁹,

Բանակները բախվում են, սկսվում է ձեռ-
նամարաց Դրանց մեջ է և լեռնը, որը
միշտ կելով թշնամու խուճապահար շարքե-
րում՝

«ԵՇԱՐ ըգկուշ երիվարին,
Ի արշաւեցոյց ի մէջ նոցին.
Ուղեաց րգիսոց իւր նիգակին,
Ի եՇԱՐ ըզսիրտ գրլիսաւորին.
Դիաթաւալ կացոյց դաշտին»¹⁷⁰,

Գրիգոր Տղան շերմ սիրով է նկարագրում
լեռնի և հայոց բանակի քաշագործություն-
ները, որովհետև նրանք սրի ուժով պաշտ-
պանում են իրենց երկիրն ու անկախությունը՝
լընկրկելով թշնամու բազմության և հզորու-
թյան առաջ.

Թեև բանաստեղծն անկողմնակալ կերպով
պատկերել է նաև Սալահեղինի տարած հաղո-
թանակները, երբեք լազավաղելով իրական
երևութները, բայց նա այդ հաղթանակնե-
րին տալիս է տարրեր գնահատական: Սա-
լահեղինը նվաճող և արյունարու է. նա
բերում է սուզ ու արյուն, հետևարար, նա
ենթակա է նգովի ու անարգանքի: Բոլորու-
վին այլ կերպ են գնահատվել լեռնի հաղ-
թանակները: Հայերը կովում են ոչ թե նվա-
ճելու, այլ պաշտպանվելու համար. նրանք
իրենց սուրը բարձրացնում են բարբարոս-
ների և բռնականների գեմ, որոնք խախտում
են կյանքի խաղաղ ընթացքը և կատարում
ոճրագործություններ:

Երբ լեռնը դաշտային Կիլիկիայի և Ան-
տիոքի սահմաններից հակառակորդին հե-
ռոցնում է, այլևս առաջ չի շարժվում, այլ
հաշտություն է կնքում.

«Անցոյց յիւրմէ զրածակ շարին,
Արար ընդ նա խաղաղութիւն
Եւ համոզեաց ի բարութիւն»¹⁷¹:

Տղայի այս գործը կոչվում է «Ողբ», բայց
վշահի, խոր ցավերի, զայրութիւն ու վրեժի

ետևում առկայժում են դեպի կյանքը կոչող
հորդորն ու հուզաց, նորից վերականգնվելու
հավատը և կյանքի նկատմամբ ունեցած սե-
րը: Տեղինակը հավատացած է, որ չարը
պիտի ստանա իր արժանի պատիժը, պիտի
լինի արգար հատուցում: Լեռնն իր երկրի
սահմանները ապահովելու հետ միասին, շա-
րին պատմել է, անմեղ երուսաղեմացինե-
րին հասցրած ավերածությունների ու ա-
րյան համար: Նա մարդասեր է և բարյացա-
կամ, Դեպի Կիլիկիա արշավելու ժամանակ,
Սալահեղինի բանակը իր հետ շարժում էր
նաև երուսաղեմի կողոպուտը և գանձերը:
Հայերը հարձակվում են կողոպուտով ծան-
րաբեռնված հագարացիների վրա, ջախչա-
խում, ետ վերցնում ավարը և տալիս երու-
սաղեմացիներին:

Ընդհանրապես պեմբում զգալի տեղ է
բռնում շարին արժանի հատուցում տալու և
վրեժինդրության զգացումը երուսաղեմը
իր ողբի պահին չի մոռանում թշնամուն ար-
ժանի հատուցում տալու անհրաժեշտությու-
նը: Նրա սրտի խորքում ատելության հետ
միաժամանակ գլուխ է բարձրացնում նաև
վրեժինդրության զգացմունքը.

«Ըզրո գերեալս, երուսաղէմ,
Առնու բզվրէմն, երուսաղէմ,
Ի քո նեղացն, երուսաղէմ»¹⁷²,

Այսուհետև բանաստեղծը բերկրանքով է
նկարագրում, թե ինչպես հայոց բանակը
լեռնի գլխավորությամբ թշնամուն ջախչա-
խիւ հարված է տվել և գերողներին զերել...

«Սոքա զգերիշաբն զերեցին,
Եւ բզզըզուիչը լըլկեցին,
Հզհարկանողարն խիստ հարին...»¹⁷³,

Պոեմի տարբեր մասերում համոզեցուցիլ
են ներկայացված անձնավորված քաղաքի
հոգեբանական անցումները մի վիճակից դե-
պի մյուսը, դրանց գրսեռությունը, վիճելու,
հուզվելու, ողբալու, ափսոսանքի, զայրու-
թի ու վրեժինդրության ընթացքում: Անցյա-
լի փառքը պատմելու պահին ողբացողը հա-
մեմատարար խաղագ է, մաքերը մթագնված
ու խառնված լեն, մինչդեռ ողբալու և զայ-
րութի պահին նա ցնցվում է հոգեպես,
կողվում է նրա մտքի թելը, մթնում բանա-
կանությունը, գործածում է ոգիշ ոճ՝ լի ցա-
սումով ու ցավով: Սակայն երբ վրեժինդրու-
թյան գաղափարն է հառնում, հախուն
զգացումներին զուգորդվում է նաև դատո-
ղությունը, գործում է բանականությունը և

¹⁶⁹ Դյուլորին, նշված աշխատությունը, էջ 298:

¹⁷⁰ Անդ,

¹⁷¹ Անդ, էջ 303:

¹⁷² Անդ, էջ 293:

¹⁷³ Անդ, էջ 300:

նա, ողբասացը, որքան խղճալի էր ողբալու և տանջվելու պահին, նույնքան էլ զորեղանում է հոգով։ Այստեղ արդեն ողբացող Երուսաղեմի թերանով Գրիգոր Տղան թշամու հասցեին անեծքներ չի կարողամ, ինչպես իրենց ողբերգում անում են Դավթակ քերթողն ու Ներսես Շնորհալին, այլ նա գործնական կոչ է անում՝ ի զեն, ի մարտ, և ի հատուցումն։ Այս տեսակետից Գրիգոր Տղայի Ողբը ավելի աշխարհիկ և ավելի մարտական է, Բացի այդ, Դավթակի ու Ներսես Շնորհալու անեծքները ուղղված են դեպի երկինք, որ վերջինս պատժի շարագործին, հանդերձալ կյանքում։ Գրիգոր Տղայի մոտ անեծքներ չկան. մարդը ինքը պետք է անմիջապես բարձրացնի արդարադատ սուրբ, ինքը պետք է պատժի շարագործին։ Երբ դառն արցունքներ թափելուց և իր գլխին փոշի ցանելուց հետո, որոշ չափով հանգստանում է դժրախտ Երուսաղեմի խոցուցված սիրտը և մի քիչ խաղաղուում է նրա հոգեկան աշխարհը, ինչպես մթամած ամպերով ծածկված երկինքը անձրկից հետո, պարզվում, լուսավորվում է նրա բանականության երկնակամարը, ապա նա վերլուծում, կրոպատում է կատարված աղետը, վշտի ծանրության հետ մեկտեղ նրա սրտում շղում է հուսուր։ Մի պահ նրա առաջ հառնում է կենսախինդ ապագան։ Ի զեմս Երուսաղեմի, բանաստեղծը համոզված լավատես է եղեսիայի Ողբում լավատեսությունը հիմնված էր այն հուսի վրա, թե շուտով խաշակիրները նորից կդան և եղեսիան կվերցնեն Զանգի ամիրայի ձեռքից։

Գրիգոր Տղայի հուսի ու լավատեսության հիմքը այդպես չէ։ Ողբը Եղեսիոյ պեմբ գրելու ժամանակից անցել էին տասնամյակներ։ Շատ բան էր փոխվել... Կիլիկիայի և ընդհանրապես արևմուտքում ապրող Հայերին խալչակիրները պակաս բարբարոսաբար և տմարդի չէին վերաբերվել քան Զանգին, Սալահեղինը և հումերը։ Բանաստեղծը համոզված է, որ այս, շուտով Երուսաղեմը կվերականդնվի, բայց ոչ թե դրսից եկող ուրիշ ազգերի կամ պետությունների միջոցով, այլ բազակի բնակիչներն իրենց ուժերով պիտի վերականգնեն մայրաքանակը։

Երուսաղեմը կոտորելու ժամանակ կենդանի մնացածները, քաղաքից փախածները այժմ վերադառնալու են։ Երբ բոլորը գան, հավաքվեն, երկիրը աղատվի բռնակալ տիրողների ձեռքից, քաղաքը կմոռանա իր ժանրվագը։

«Ճայնժամ տեսցես, Երուսաղեմ,
Եւ ցընծասցես, Երուսաղեմ,

Եւ մոռասցես, Երուսաղեմ
Սուգ զայրութեանդ, Երուսաղեմ»¹⁷⁴,

Եվ այսպես, կործանված քաղաքը իր զավակների ձեռքերով ո՞չ միայն կվերաշինվի, այլև կպայծառանաւ Այն երկրներն ու քաղաքները, որոնք առժամանակ մոռացել էին համաշխարհային սրբազն մայրաքաղաքը, նորից զանձերով լի նավերով ու քարավաններով, ծովերով ու ցամաքներով կանցնեն և ուխտի կդան մոռացված սրբավայրերին.

«Պատիւ ծովու, Երուսաղեմ,
Եւ ցամաքի, Երուսաղեմ,
Եւ մեծութիւն, Երուսաղեմ,
Աղգաց և ազանց, Երուսաղեմ,
Զի գան առ քեզ, Երուսաղեմ...»¹⁷⁵,

Լավատեսության հետ սերտ շաղկապված է նաև Հայրենասիրությունը, լավատեսությունն ու Հայրենասիրությունը միասին կազմում են Գրիգոր Տղայի այս քերթվածի զիխավոր գաղափարը, որոնց շուրջ պտտվում են պոեմի մյուս մասերը՝ իրենց առանձին դրվագներով։

Ինքը՝ բանաստեղծը, կեռն Բ-ի ժամանակակիցն ու գործակիցն է եղել. սրանք երկուսն էլ եղել են Կիլիկիայի Հայկական հոգեոր և աշխարհիկ իշխանության Հայրենասեր ներկայացուցիլները։ Գրիգոր Տղան էլ իր ժամանակի արամագրությունները արտահայտելու համար դիմում է պատմական անցյալին, հայ ժողովրդի քաջահամբավ գործիլների օրինակներին, սակայն զիխավոր շեշտը նա զնում է ներկայի վրա։ Ի զեմս Երուսաղեմի, բանաստեղծը ողբում է ոչ միայն Պաղեստինի անկախ, իսպան անցյալը, այլև իր՝ հայ ժողովրդի ու նրա հայրենիքի կորցրած փառքը, ազատությունն ու պետականությունը։ Երուսաղեմից ոչ պակաս արշավանքներ ու ավերմունքներ է տեսել նաև հայոց աշխարհը։ Ինչպես Երուսաղեմը, այդպես էլ Հայաստանը գարեր շարունակ եղել է ասպատակությունների պոտուա, ուր միշտ բախվել են Արևմուտքի ու Արեւելի բռնակալ բանակները և այդ հոգը ներկել բյուրավոր անմեղ մարդկանց արյունով։ Իրենց անցյալով ու ներկայով Հայաստանի և Երուսաղեմի մեջ շատ նմանություններ կան։

Այժմ տեսնենք, Հայրենասիրական տրամադրություններն ինչպիսի՝ ձերով է արտահայտել բանաստեղծը՝ Կիլիկիայի Հայոց իշխանության, կեռն Բ-ի, նրա բանակի ու գործերի առնչությամբ։

¹⁷⁴ Պալարին. Նշված աշխատությունը, էջ 290.

¹⁷⁵ Անդ.

Լևոնը անձնուրաց հայրենասիրությամբ ու քաջազգործություններով նման է հայ նախնիներին, որոնք միշտ էլ խոյացել են բռնակալների դեմ և կրծքով պաշտպանել իրենց հայրենի հողը.

«Զի որպէս Հայկըն առաջին,
Եհար ըզթել նետիւ բագկին.
Եւ կամ Տըրդաա ըզթումը գետին,
Փլուցեալ ոտիւք գարշապարին.
Սա գերագոյն Արտաշիսին,
Այնմ որ յաղթեացըն Կիրոսին.
Նրման եղեւ սա Տիգրանին,
Եւ ըզկըասոս սաաակողինս¹⁷⁶,

Գրիգոր Տղան անհուն սիրով է լցված դեպի քաջ և հայրենասիր պետական դործիւրունա հպարտությամբ ու բերկրանքով է նկարագրում Լևոնի գործերը և ազոթում Արարդին, որ նրան երկար ու առողջ կյանք պարգնի:


Երուսաղեմի ողբը գրված է պարզ լեզվով և մաքուր հայկարանությամբ: Թեև տեղաւեղ նկատվում են օտար բառեր, ինչպես՝ «սենեկալ», «սլեհ», «զիան» և աշխարհաբարդի ձևեր, ինչպես՝ «ես ձայնեցի Սուրբ Յակոբին» և այլն, սակայն այսպիսի ձևերն ամենեին ստվեր չեն նեառում քերթվածի պարզ ու գեղեցիկ լեզվի վրա:

¹⁷⁶ Անդ, էջ 301.

Ներսես Շնորհալու «Ոզբ Եղեսիոյ» հոլակագոր պոեմից հետո, Գրիգոր Տղայի «Ողբ վասն առմանն երուսաղէմի» զործը մեր միջնագարյան երկրորդ պատմա-քաղաքական ծավալուն և գեղեցիկ առեմն է:

Գրիգոր Տղայի Ողբը թե՛ ձեի և թե՛ բովանդակության կողմից դրական ուշադրավ մի երևույթ էր միջնադարյան բանաստեղծության ասպարեզում: Այստեղ մի կողմից հեղում են մարդասիրական և հայրենասիրական մոտիվներ, իսկ մյուս կողմից այդ մոտիվները դրսեորչել են բնական, դեղեցիկ և իրական զույներով: Անգամ Գրիգոր Տղայից դարեր հետո հանգես եկող իտալացի հոլուկավոր բանաստեղծ Տորիկվատո Տասոյի «Ազատագրված երուսաղեմ» հանրածանոթ վիպական պոեմը շունի աշխարհիկ այն նվազներն ու ճշմարտությունը, ինչպես Գրիգոր Տղայի այս համեստ գործը, եթե վերջնիս մեջ հնչում է աշխարհիկ, իրական կյանքի ձայնը, ապա մոռա շորս ու կես դար հետո գրված «Ազատագրված երուսաղեմ» երկի մեջ իշխող են վիպական հրաշալիքները, գերբնական ուժերի ու էակների մասնակցությունը, բան թե իրականության նկարագիրը: Տղայի պոեմի մեջ գեղեցիկ և ճիշտ գծերով արտացոլվել են պատմական դեպքերը, կյանքի ու կենցաղի զանազան կողմերը:





ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՌԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ*

Սույն նամակում Ռոշքան գրում է նաև, որ ինք Գեռլայից գնալու է Եղիսաբեթուպոլիսի Պարզ է, որ նա այնտեղ, բացի եղած եղրայրությունները վերահստատելուց, ուրիշ բան չէր կարող անել, քանի որ նրա կազմած նոր տոմարը այս Հայաբաղաքում ընդունվելու դեռևս հող լուները Սակայն հետագա փաստերի քննարկումն իսկ ցուց է տալիս, որ անգամ Գեռլայում ավանդապաշտ հայերը թույլ շտվեցին, որ շարունակվի նոր տոմարը և կրկին վերադարձան հնին:

Շատ ուշագրավ է, որ Հետագայում՝ 1731 թվականին, երբ երկրից աքսորելու սպառնալիքով սկսվեց Եղիսաբեթուպոլիսի ոչ կաթոլիկ հայերի բռնի կաթոլիկացումը, այն ժամանակ նախատեսված էր նաև ընդունել տալ նոր տոմարը, սակայն այդ ես, ինչպես հայտնի է, երկար ժամանակ անհաջողության մասնվեց Եղանական 1757 թվականի դեկտեմբերի 19-ին էր, որ կրլին օրակարգի հարց է դառնում նոր տոմարի ընդունման խնդիրը, որը սակայն հատկապես Եղիսաբեթուպում մեծ վեճերի տեղիք է տալիս Ալսպիսով, վերոհիշյալ թվականին Եղիսաբեթուպոլիսի քաղաքային ժողովում

նախագահի կողմից առաջարկվեց ընդունել նոր տոմարը, պաաճառաբանելով, որ նախ նոր օրացույցը ամեն տեղ կարելի է գտնել, իսկ երկրորդ, որ օտարեները վատ աշքով են նայում իրենց վրա: Ժողովի որոշման մեջ ասված էր, որ Շամատոնցմեն կու լսինք թէ զհին գննտարն բրնելով ջղմադիգուաներ ինք (իմա՞ հերձվածող), նայ կուզինը որ այսպէս նարասդ կալածիքն վերցրվին մեր վրայէնս, «... շատ պատճառներն այ կան որնօր հօս շինք գրիլ»¹⁶⁵:

Շարունակության մեջ ասված է, որ քաղաքային հասարակությունը հաստատել է որոշել է, որ Հաջորդ կիրակի Մննդյան տոնը բոլոր միասին կատարեն: Այս գործի անցնելով, Քաղաքային ժողովի և Հարյուրոց ժողովի ներկայացոցիները Եղիսաբեթուպոլիսի ժողովրդապետ Միհնաս վրդ. Խնկանոսյանին հայտնեցին այդ մասին և առաջարկեցին աեղեկացնել լատին եպիսկոպոսին: Խնկանոսյանը սակայն ընդդիմանում է այս առաջարկին: Այդ ժամանակ է, որ 1757 թվականի դեկտեմբերի 24-ին քաղաքի մեծամեծների՝ ռադաշտանների ու քաղաքացիների 118 հոգու սառագրությամբ, գիխավորությամբ քաղաքի բիրով (քաղաքագուին և դատարանի նախագահ) Անկսենտ Ա. Մանուկի հսի-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Թ-ից և Գ-ից:

¹⁶⁵ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք Եղիսաբեթուպոլիս», Ա, էջ 232:

գուցենցի, մի գրություն է հրապարակվում, որով նրանք հայտնում են, թե ընդունում են նոր տոմարը: Նրանք առաջարկեցին ինկանույանին նոր տոմարով տոնելու Ծննդյան տոնը: Սակայն ինկանույանը ընդդիմացավ, առարկելով, որ անհրաժեշտ է վերին եկեղեցական կարգադրության դիմել Քաղաքի բիովը հասարակության կողմից բողոքեց ժողովրդապետին և պատասխանատվությունը իր վրա առնելով, սպառնաց այդ մասին հայտնել լատին եպիսկոպոսին: Նա հրամայեց նաև կտրիճների եղայրությանը (պրաստավային), վաղմի սովորության համաձայն, նոր տոմարով ավեափի քայլել և ուրիշ անգամ ավետիսի գուրս գալը արգելեց: Քահանաներին ևս կարգագրվեց տոների առթիվ տները օրհնել միայն նոր տոմարով: Ս. Սաեփանոսի ընկերությանը ևս հրամայվեց, որ ըստ հին սովորության, Ծննդյան երկրորդ օրը, այսինքն Ս. Ստեփանոսի տոնին, ողորմություն հավաքեն: Սակայն Եղիսարեթուպուսի հայերի աշխատավոր խավերը բուռն կերպով ընդդիմացան դրան: Ընդդիմության դրոշ պարզեցին նաև կտրիճների եղայրության անդամները:

Այս շարժումը, որն ուղղված էր քաղաքային վարչության որոշումների դեմ, գեկավարում է քաղաքի ժողովրդապետ Մինաս Վարդապետ ինկանույանը: Նա մերժում է ենթարկվել քաղաքային վարչության: Բիրովը և քաղաքի երեկիները սպառնում են դիմել իրենց եպիսկոպոսին և նոր տոմարը հարգող քահանա պահանջել: Նրանք ինկանույանին դիմելով, սուսմ են. «... զէրայ անիս նա բարի ու չի անիս նայ. մինք ամենեքանս կանիք, և թէ որ չուգենաս անելու, նայ մինք մէզի գերապայծառ եպիսկոպոսէն մեր գլուխարին¹⁵⁶ դօրայ քահանայ կուպինք...»¹⁵⁷: Այս բոլորից հետո համաձայնություն չգոյանալով, դեկտեմբերի 25-ին, ըստ նոր տոմարի, քաղաքի հայ մեծամեծները Հովնդարացիների եկեղեցում նշեցին Ծննդյան տոնը: Սակայն նույն օրը, ինչպես ասված է տարեգրության մեջ, հայ եկեղեցում ժողովրդապահը զգուշացրել է բոլորին հին տոմարից չհեռանալու և այն աղբյուրը, որ մինչև այժմ գործածել են, շթունքելու մասին¹⁵⁸: Փաստերը վկայում են, որ ուամիկը այսինքն ժողովրդական զանգվածները դուրս են եկել ամեն մի լատինա-

կան նորամուծության դեմ, և այս անդամ էլ որոշվել է Ծննդյան տոնը դարձյալ նշել հին տոմարով. «Բայց դերևարդելի վարդապետն ծանուցում արիլ է գասդէտրայէն ուամիլ էլին. ասելով. Քրիստոսի արեւմը զնեալ ժողովուրդ, կու յայտնիմ ձեր հրամանոցն, որ գալ չորեցարդի Ծննդեան բարեկենդան է և կու խնդրեմ օր չի հւենաք հին գնտարին քովէն և այն իզգօրէն¹⁵⁹, որն որ ինչվաս ունացիլինք...»¹⁶⁰:

Լատինամոլ հոսանքի փաստերից (որոնք միակողմանի են և լակոնական) երկում է, որ Եղիսարեթուպուլսի ժողովուրդը մեծ զժություն էր ցուցարերել, եղել են դեպքեր, երբ Ծննդյան առնը նոր տոմարով աները օրհնող քահանաներին ժողովուրդը թույլ չի ավել. այդ մասին խոսապանել է նույնիսկ Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը: Այս թե ի՞նչ է գրում 1758 թվականի ապրիլի 30-ին Գեղայից տիրացու Պետրոս Անտոնյանը Ստեփանոս Ազոնց աբբանոր (Վենետիկ):

«... Սկսեալ է խօսակցել եպիսկոպոսն զտարածայնութենէ ժողովրդեանն իպաշտալովու (իմա՝ Եղիսարեթուպուլիս), քանզի առաջնոյն նորա զնացեալ էին առ նայ ինդրել զթողութիւն, քայց ոչ միակամը և միախորհուրդը ամենեցունց հաւանութեամբն, և թէպէս նոցա ևս տուեալ էր զթողութիւն, բայց ոմանք զ[թ]այ[տ]նութիւն Տեառն ըստ հին գալէնտարին առնելով, և ոմանք ըստ նորոյն, որպէս և իսկ պատահեալ է ընդդիմութիւնս այս ի մէջ նոցա, զի ըստ նորոյն, ըստ սովորութեան Բէկպանիայի քահանալիցն երթալ և օրհնիլ զտունս ժողովրդեանն, զորս ոմանք սիրով ընդունեալ են, և ոմանք ընդէմ խօսելով, թէ ոչ զոյ այժմ մեր [թ]այտնութիւնն. այլ եկեսցուք յորժամ մերն իցէ և սիրով ընգունելոց եմք, և ոչ են թոյլ տուեալ զի օրհնեսցեն դառնու իւրեանց...»¹⁶¹:

Ավանդապահ այդ զժութեներին միացել էին նաև հայ երիտասարդների եղայրության անդամները, որոնք միասնաբար հրամարի էին քաղաքային վարչության որոշումները կատարելուց: Մտածելով վերջ տալ քաղաքի ներքին իառնակի վիճակին, քաղաքային վարչությունը որոշում է ձեռք առնել խիստ միջոցներ: Ահա թե ի՞նչ է զրկուծ այս կապակցությամբ քաղաքի տարեգրության մեջ. ոչնելով պատեմ, հասարակն որ դեր-

¹⁵⁶ Ռումիներեն նշանակում է տոմար, օրացույց:

¹⁵⁷ Հ. Գ. Գովրիլյան, «Հայր յԵղիսարեթուպուլիս», Ա, էջ 238:

¹⁵⁸ Նույն անդում, էջ 240:

¹⁵⁹ Ռումիներեն նշանակում է աղբյուր:

¹⁶⁰ Հ. Գ. Գովրիլյան, «Հայր յԵղիսարեթուպուլիս», Ա, էջ 240:

¹⁶¹ Հ. Գ. Տայան, «Մալր դիւան», էջ 192:

յարգելի վարդապետին ծանուցումին գորայ, զօր պղտութիլէ բաղին մէջ ուամիկ էլև (ընդգծումը մերն է—Ս. Պ.), և շատ աւելի պահաս կալանքի կու զորուցին, որն օր հոս շինք դրիլ, ութվեցաւ պատելի հասարակին, որ այս պղտորութեանն ճարմն անինքա¹⁰²:

Քաղաքային վարչությունը ամենիո առաջ փորձեց պատժել եղբայրությանը, նրա պանդական հին իրավունքները սահմանափակելով. Կարիքների զեկավարներին, վաղաճաներին և մարշալներին արգելվեց պաշտոնական օրերից բացի բազարում գավաղան օգտագործելը. Հակառակ գեպքում, նրանք պարուազորվում էին յուրաքանչուր գործածության համար և հոնդարական դրամ տուգանք տալու կտրիճներին որոշ ժամանակ արդելվում էր նաև Ծննդյան ավետիսի և Զատկին Հայր մերի գնալը. սակայն եթե կտրիճները չնազանդվեն և շարունակեն աները գնալ, յուրաքանչուրից և մաճար դրամ պիտի դանձվի: Արգելվում էր նաև ընկերության մեջ իրենց կամքով նոր տղաներ անգամազելը, այլ պետք է, որ երիտասարդի ծնողները զնային և խնդրեին ընկերության զեկավարությանը, որպեսզի իրենց որդին եղբայրության մեջ առնվիւ Ալսպիսով, բաղաբաւին վարչությունը իր ձեռք առած հիշյալ միջցացառումներով ցանկանում էր վերջ տալ կտրիճների ընկերության իրավունքներին: Սակայն պետք է ասել, որ ընկերության իրավունքների սահմանափակումները այսքանով չին վերջանում: Խնկանուային ուղղած դիմումում կտրիճները դրում էին, որ ուզում են իմանալ, թե արդյոք եղբայրությունը հիմնադիրներ ունի, որովհետև իրենք լսել են, թե աղաները հրաժարվում են հիմնադիր լինելուց, և աղաներից մեկը ասել է, թե ընկերությունը բանագրված է... և եթե իր որդին թողնի անգամ, նա ևս բանադրանքի տակ կարող է ընկնել: Սահմանափակվում էին նաև նրանց եկամտի միջոցները, Երիտասարդությանը հայունում էին նաև, որ իրենք լսել են, թե աղաները ցանկանում են պատելի դրամը և դիմագորներին արգելիք թաշկինակի օրենքը ևս խափանել:

Կասկածից վեր է, որ նոր տոմարի ընդունման դեմ կարենոր դեր խաղացած երիտասարդների եղբայրության նկատմամբ առնված զանագան սեղմումների գործադրման միջոցով, բաղաբային վարչությունը աշխատում էր համար աղանդի մուտքի և ելքի հաշիվները քննեն և ներկայացնեն վարչության, որպեսզի առանց հասարակության գիտության ռավելորդ ծախքեր լրւվին¹⁰³: Սակայն պետք է նշել, որ ձեռք առնված այս միջոցներով հնարավոր չէր եղել դեռևս սլարտադրել նոր տոմարը. այդ կատարիվեց զարձյալ Հոռմի միջամտությամբ և Տրանսիլվանիայի լատին ելիսապոսի գործոն մասնակցությամբ: Ինչպես զրում է Հ. Գ. Գովրիկյանը, «Եպիսկոպոսները, որ անտարակույս այս բաները Ա. Գահին ծանուցած էր, — թուղթ ու հրա-

բայրությունը այլևս գրկվում էր տոներին միասնաբար իբրև ավետող հանդես գալուց. նրա զեկավարությունը իրավունք շուներ նույնպես 15 տարեկանը լրացրած բաղարի կտրիճներին, թե՛ «խօճի և թէ՛ աղբատին, եղբայրությունից ներս առնելու ընկերությունը գրկվում էր նաև իր հին հասույթներից և նյութապես թուլանում:

Սրանից հետո էր, որ եղբայրության անդամները հատուկ գիմումով, դիմեցին Մինաս վարդապետ Խնկանուայանին՝ իրենց լույր նախկին իրավունքները վերականգնել տալու հույսով: Քաղաքային վարչությունը, սակայն, պահապանելով հիշյալ սահմանափակումները, 1758 վթականի փեարվարին նրանց հնազանդության հրավիրելով հայտնեց հետեւալը. «Նախանձն գավիկները միշտ գտած են հիմնադիրները, ուստի ասկից ետքն ալ պիտի գտնեն»¹⁰⁴: Նույնպես, բաղաքային վարչությունը հայտնեց, որ չի ցանկանում, որ Ծննդյան ու Զատկին ավետիսի բայցն վայնասունով, այլ միայն երկու հոգի ընկերության անունից ողորմություն հավաքեն: Խոստացվում էր բանադրանք ասելու սակայն գավաղան կրելու սահմանափակումը թողնվում էր. իսկ պսակի դրամի ու թաշկինակներ տալու հարցերը հետաձգվում էին: Այսպիսով, կարելի է ասել, որ բաղաքային վարչությունը կտրիճների եղբայրությանը գրեց իրանից կախման մեջ: Սրանից հետո, անհրաժեշտ էր համարվում եղբայրության ընտրված զեկավար անդամների ցուցակը ներկայացնել բաղաքային վարչության ի հաստատությունն Այս բոլորը այժմ բաղաքային վարչության կամքի համաձայն պետք է լիներ, այսինքն՝ «... հասարակին կամացն զօրայ րլայ»¹⁰⁵: Նույնպես ընկերության զեկավարները պետք է ամեն տարի մուտքի և ելքի հաշիվները քննեն և ներկայացնեն վարչության, որպեսզի առանց հասարակության գիտության ռավելորդ ծախքեր լրւվին¹⁰⁶: Սակայն պետք է նշել, որ ձեռք առնված այս միջոցներով հնարավոր չէր եղել դեռևս սլարտադրել նոր տոմարը.

¹⁰² Նույն տեղում, էջ 249:

¹⁰³ Նույն տեղում, էջ 255:

¹⁰⁴ Նույն տեղում:

ման ընդունեցավ ի Հռոմա նկատմամբ նոր տումարի դորժածության և ուրիշ հոգեոր բաներում¹⁶⁶: Այս խնդրին վերջ տալու նպատակով, լատին եպիսկոպոսը հասարակությանը հայտնեց, որ երկու պատգամավոր ուղարկեն Ալվինձ, ուր գտնվում էր իր Աթոռուր ժողովը, սակայն, երկունի տեղ յոթ հոգու դրկեց, երեք աշխարհական և չորս հոգեվորական, որոնց մեջ էր նաև Խնկանոսյան վարդապետը Գովրիկյանը գրում է, որ 1759 թվականի մայիսին ՛՛Ալվինձը ժողովելով ուրախությամբ լսեցին, թե Ս. ժողովը սիրով դրկեր և օրհնությամբ հաստատեր է նոր տումարը»¹⁶⁷:

Նոր տոմարի վերջնական ընդունումը պարզ է, որ առանց գիմադրության տեղի չունեցավ, և հճարկե հայ կաթոլիկության ներսում գոյություն ունեցող ավանդապաշտու լատինամոլ հոսանքները ընդունված տոմարի և տոնացուցի վրա թողեցին նաև իրենց հետքերը: Այդ մասին է վկայում նոր տոմարով կազմված տոնացուցը, որը թեև կատին նկեղեցու տոնացուցի վրայից կազմարված մի բան է, սակայն, բացի լատինական տոներից և սրբերից, ընդգրկում է նաև ընդհանուր Հայ նկեղեցու տոնած ազգային սրբերը—Սահակ Պարթև, Ղևոնյանը, Վարդանանք, Հոփիսիմյանք, Թարգմանիլներ, Ատոմյանք և այլն և այլն¹⁶⁸:

Հակառակ Գովրիկյանի պահած լուսությանը, փաստ է, որ նրա կողմից «Կաթողիկե հայ հաստրակության կեղծոնք»¹⁶⁹ համարվող Գեղարք հայաքաղաքում էի նոր տոմարը հեղու չեղու ընդունվել: Խնձես նախապես տեսանք, Վրզարյանի օրոք, գեռևս ժղուարի վերջից, Գեղարյում գործադրված պետք է լիներ նոր տոմարը¹⁷⁰, սակայն փաստերը վկայում են, որ Վրզարյանի մահից հետո, հայերը կրկին հին տոմարին էին վերադարձել, ապա Ստեփանոս Ռոշքայի այցարարության շրջանում (1729 թ.) նրա նախաձեռնությամբ կրկին պետք է, որ մտցված լիներ նոր տոմարը, սակայն շուտով ավանդապահ ժողովրդի կողմից դարձյալ մերժվել էր նորը և ընդունվել հինը: Հայաքաղաքից

¹⁶⁶ Հ. Գ. Գովրիկյան, «Հայր յեղիսարեթուպոլիս», Ա, էջ 256:

¹⁶⁷ Նույն տեղում:

¹⁶⁸ Ա. Փիփաս, «Հովհաննեսի պատմություն» ազգային, «Հանուն ամսօրեալ», 1899, էջ 51:

¹⁶⁹ Հ. Գ. Գովրիկյան, «Հայր յեղիսարեթուպոլիս», Բ, էջ 142:

¹⁷⁰ Նույն տեղում:

1758 թվականի ապրիլի 30-ին, Պետրոս Անտոնյանի կողմից (Վենետիկ), բնիկ շուրջովզցի Ստեփանոս Ազոնց աբբանոր գրված մենամակից երևում է, որ հազիվ 1758 թվականի Տյառնընգառաջի տոնից է, որ գեղացիները ևս սկսում են կիրառել նոր տոմարը, այսինքն այն ժամանակ, երբ Եղիսարեթուպուստ էլ բռնի կերպով ուղարկում էին ընդունել տալ նույն տոմարի: Նամակագիրը ապա հայերին ուղարկուած հայերի հատիսակցելու ժամանակ պատմել է նաև եզրաքարեթուպուլսեցի հայերի մեջ նոր տոմարի ընդունման կապակցությամբ ծագած վեճեցի մասին՝ մասին նոր տոմարի մասին¹⁷¹:

Այսպիսով, նշելով այն երկարատև, բռնւն պայքարի մասին, որը մղվեց ավանդապահ հայերի կողմից ընդդեմ նոր տոմարի ընդունման, պետք է աներկարայորեն եղարկացնել, որ բերված փաստերը միանգամայն իրավունք են տալիս հերքելու Տրանսիլվանիայի հայերի հայերի կողմից նոր տոմարի ընդունման հարցում Հ. Վ. Ըստկարյանի ստեղծած թյուր կարծիքը, ըստ որի, «Դրանսիլվանիայի ուղղափառ Հայք 1758-ին իրենց ուղղությունում մերն է—Ս. Գ.» Հովհական տոմարը ձգեցին և Գրիգորյանն սկսան գործածեցի¹⁷²:

Այս հարցում ևս, ինչպես տեսանք, ոչ թե Տրանսիլվանիայի հայերի կամքով, այլ հազար ու մի մեքենայություններով և վերևու գործադրված բռնի ուժով է, որ միայն և միայն պարտազրպվեց նոր սումարը: Տրանսիլվանայա ազգաբնակչության մեծ մասը, ի պատիվ իրեն, ոչ թե ուրի ուղելովը ընդունեց ան, այլ, ընդհակառակը, նույնիսկ կաթոլիկության բռնի հարելուց հետո, իսկ երկար տարիների համառ պայքարով, ի դին ամեն զոհողության, աշխատեց պահպանել իր պատերից մնացած հայրենի տոմարը, որը համարվում էր ազգային կենսակության աղբյուր:

Նոր տոմարի ընդունման դեմ ցուց տրված այդ բացառիկ գիմագրությունը ևս իր արժանի տեղը պետք է դրավի Մայր Հայրենիքից այնքան հեռու գտնվող Տրանսիլվանիայի հայ զադություն հանուն իր ազգային ինքնուրուցնության պահպանման մղած պայքարի պատմության մեջ:

(Շարումակելի)

¹⁷¹ Հ. Գ. Տայան, «Մայր դիւան», էջ 192:

¹⁷² Հ. Վ. Հովհական, «Եղիսարեթուպոլիս», էջ 385:



Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

(Բանախթական գիտությունների
բեկածու)

ՊՐՈՖ. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Մննդյան 75-ամյակի առիվ)

Դասական բանասիրության ներկալացուցիչներից քլերին վիճակվեց հայագիտության նոր սերնդի տևական ուղեկիցն ու լծակիցը լինել, Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը ինքնատիպ էր ոչ միայն իր անհատական բնավորությամբ, հետաքրքրությունների բազմակողմանիությամբ ու ընդգրկումներով, այլ նաև գիտական երկու սերունդների կենդանի շաղկապումով։ Նրա առաջին հոդվածներն ու ուսումնասիրությունները երևացին այն շրջանում, երբ հայագիտության ու վրացագիտության հիմնական կենտրոնները տակավին գրսում էին գտնըվում, որքան էլ ազնիվ ու նվիրական գործունեությամբ, այնուամենայնիվ գրսում։ Լեռն Մելիքսեթ-Բեկը իր կարողությունների բոլորակի նվիրաքերումով մասնակցեց հայրենական կրթօջախների ստեղծմանը և ավելի քան հիսուն տարի ստեղծագործեց կովկասագիտության երեսի ու սկսնակ ներկայացուցիչների հետ կողք-կողքի։

Լ. Մելիքսեթ-Բեկը ծնվել է 1890 թվականի սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսում։ Օրբելիանու պանսիոնում գրաճանաչություն սովորելուց հետո (1897—1899), ընդունվում է Թիֆլիսի ուսալական դպրոցը (1899—1908), իսկ ապա՝ Օդեսայի համալսարանը, իրավաբանական ֆակուլտետում սովորելուն զուգընթաց, իրբե ազատ ունկնդիր, հաճախում է նույն համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը և աշակերտում է Ա. Ալմասովին (կանոնական իրավունքի պատմություն), Ա. Թոմսոնին (լեզվաբանության նե-

րածություն), Մ. Պոպուժենկոյին (սլավոնների պատմություն), Է. Յոն-Շտերնին (հնագիտություն) և այլ գիտնականների։ Համալսարանական տարիներին երիտասարդ է Մելիքսեթ-Բեկը մասնավոր հետաքրքրություն է ցուցաբերում հնագիտության վերաբերմամբ։ Ուսումնասիրության նպատակով մի քանի անգամ նա ճամբորդում է Ռուսաստանի հայկական բնակավայրեր կամ գաղութներ ունեցող մասերում։ Ռուսականաց կամ գաղութներ ունեցող մասերում է Ռուսական ավարտում է Օդեսայի (Նովորոսիյկի) համալսարանը և նորից Թիֆլիս վերաբառնում։ Ուսանողական աարիներին գրված մեկ տասնյակից ավելի գիտական աշխատություններն ու հազորդումները արդեն գրավել էին հայագետ-կովկասագետների ուղագրությունը։ 21—23 տարեկան Մելիքսեթ-Բեկի աշխատանքների մասին գրախոսություններ են հրապարակում լ. Քալանթարը, Հ. Մովսիսյանը, Գ. Թումանովը, Ա. Խախանաշշվիլին և վերջապես ակագեմիկոս Ն. Մարուսյանը քննության առնըլով հարցերը (օրինակ՝ «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ՝ ըստ հին ազգյուրների», «Հայկական հնությունները Աքերմանում», «Ռուսիո հարավում բնտկվող հայոց պատմության նյութերից», «Հայոց Դերադույն Պատրիարքի իրավաբանական դրությունը», «Օդեսայում հայտնաբերված 15-րդ դարի Շարակնոցը» և այլն, բոլորն էլ գրված ոռուսերեն) ու հավասար գիտական լուծում են ստացել, այդ պատճառով էլ գրախոսները բավական կարևոր դիտողու-

թուններ են անում: Բայց գլխավորն այնէ, որ լ. Մելիքսեթ-Բեկը տակավին երիտասարդ հասակում ծեռնամուկն է լինում գիտական լուրջ հարցերի բննության, որոնց մի մասին նա հետագայում նորից անդրադավ: Թիֆլիսում, մինչև համալսարանում հայոց լեզվի դասախոս նշանակվելը (1918 թ.) վարում է մի շարք պաշտոններ, այդ թվում՝ Հայոց պագագրական ընկերության խմբադրական մասնաժողովի անդամքարտուղար (նախագահ՝ Ե. Լալայան), Սուկովյան հնագիտական ընկերության Կովկասիան բաժանմունքի իսկական անդամ և ապա՝ գիտական բարտուղար, վրաց լեզվի ու պատմության դասախոս Թիֆլիսի երրորդ արական գիմնազիայում և այլն:

Թիֆլիսի համալսարանի բացումը արդարն խոչըր իրագարձություն էր: Նորարաց համալսարանում կային երկու վրացագետայագետներ՝ ինքը Ի. Զավալիշվլիին և նրա ու Մառի աջակերտ Ա. Շանհեծն: Լ. Մելիքսեթ-Բեկի հրավիրումը նախ զարգացնում էր հայագիտական կադրերի պատրաստման հնարյագությունները և ապա նոր ու մեծ հեռանկարներ բացում երիտասարդ լ. Մելիքսեթ-Բեկի համար:

Հին մատենագրությամբ զրադվող մասնագետները, մի շարք հասկանալի պատճառներով, շեն կարող սահմանափակվել որևէ նեղ մասնաճյուղով: Ամենակին էլ զարմանալու չէ, որ լեզվարան Հ. Աճառյանը հայ գրականության պատմություն էր գրում, կամ բանագետ Մ. Աբեղյանը գրավոր մատենագրությանն ու լեզվին վերաբերող դաստկան աշխատություններ ժառանգում նոր սերնդին: Վերջին տասնամյակներում լեզվաբան ճանաչված ն. Մառը հնագիտության, հայ ու մերձավոր արևելքի ժողովուրդների պատմության, մասենագրության խոշորագույն մասնագետ էր: Ն. Ագոնյի պես լայն ընդգրկում ունեցող պատմաբանը նույն սիրով ու հաշողությամբ գրադվել է քերականությամբ: Ահա այս միջավայրի ու հետաքրքրությունների կրոգներից մեկն էր և լ. Մելիքսեթ-Բեկը:

Համառոտակի թվենք գիտության տյան բնագավառները, որոնցով զրադվել է նա: զրականություն պատմություն, բանահյուսություն, վիմագրադիտություն, հնագիտություն, բնտղագիտություն, լեզվարտնություն, հնագրագիտություն, արվեստագիտություն, պատմագիտություն, աղբյուրագիտություն, իրավունքի պատմություն, ազգագրագիտություն, մատենագիտություն, գեղարվեստական թարգմանություն և այլն: Այս ամենը ըստ արժանվույն դնահատելու

համար մասնավոր ուսումնասիրություն է անհրաժեշտ, ինչպիսին, հավատացած ենք, կարվի ժամանակի ընթացքում: Մենք այստեղ կներկայացնենք մի քանի աշխատություններ՝ հիմնական գծերով բնութագրելու համար պրոֆ. լ. Մելիքսեթ-Բեկի գիտական վաստակը նրա առաջին ծավալուն մենագրությունը վերաբերում է 11—13-րդ դարերի Հյուսիսային Հայաստանի կրթօջախներում զարգացած մատենագրությունը ուսումնասիրությունը՝ «Վարդապետ» հայոց Հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը իրագրով (1928 թ., Թիֆլիս, վրացերեն): Ուսումնասիրությունը գրված է ինչպես հայ մատենագիտներից շատերի գրական ժառանգությունը վեր հանելու, այնպես էլ հայվագական պատմական-մշակությաին փոխհարաբերությունները 11—13-րդ դարերում լուսարաններու շահագրգությամբ: Պատմական ճշտումներից հետո, գրքում բացայալում են տեղին կրթօջախներում ստեղծված մատենագրության բնույթն ու դրդապատճառները: Անմիջական տերիտորիալապետական աղերս ունենալով Վրաստանի հետ, 11—13-րդ դարերի Հայստանի հյուսիսային գավառներում նկատելիորեն ուժեղանում է գավանարանական հակամարտությունը, որը, ինչպես ճիշա գիտական միայն այս կամ այն ձևակերպումը մեկնելու հարց չէ: Հյուսիսային վարդապետները բանավիճում էին միաժամանակ և կիլիկյան հայ գործիչների հետ (ն. Շնորհալի, Գ. Տղա, Ն. Լամբրոնացի), և վրաց հոգկորականների: Այդ պատճառով էլ Մատթեոս Հաղպատեցու, Վարդան, Հակոբ, Անանիա Սանահինցիների, Հովհաննես Սարկավագի, Վարդան Հաղպատեցու, Դավիթ Քորայրեցու մեզ հասած երկերը լավագույն սկզբնաղբյուր են այս շրջանի ինչպես հայ մշակությի պատմության, անյափես էլ հայվագական պատմական-մշակությաին փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Երկարնակ վարդապետությունը թափանցում էր վանական որոշ կենտրոններ (Պղնձահանք, Օսկելպար, Հնեվանք, Քորայր և այլն) և լուրջ վտանգ ստեղծում ավանդական միաբնակության համար: Այդ պատճառով է, որ Տուտեղորգին և այլք ահաղանդով են խոսում հայ-բյուղանդական եկեղեցական մերձեցումների մասին, երբեմն նույնիսկ շափից ավելի մեղաղբելով:

«Վարդապետ» հայոց հյուսիսային կողմանց աշխատության մեջ որոշ հեղինակ-

ներ (Հովհաննես Սարկավագ, Մխիթար Գոշ) ներկայացված են նրանց վերաբերող աղբյուրների լիակատար հավաքումով ու քննարկմամբ, նրանցից յուրաքանչյուրի մատենադրական ժառանգությունը սահմանելու և ճշտելու համար կատարված է խոչըն ու մանրազնին բանասիրական աշխատանքներում Ավելին, հնարավորության դեպքում արված են այն ազբյուրները, որոնք շատ կամ քիչ սկզբանդրյուր են եղել տվյալ երկի համար, իսկ երբեմն էլ զուգակիր հրապարակված են ամրողական տեքստեր Մխիթար Գոշի «Գծագործիւն...» յաղաղս Վրաց թուղթը, օրինակ, առաջին անդամ է բանասիրական քննության ենթարկվում, թեև տեքստը մինչ այդ արդեն հայտնի էր («Արարատ» 1909 թ.): Այստեղ ապացուցվում է, որ.

ա) Մխիթար Գոշը հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող երկու ստեղծագործություն է ունեցել, որոնցից առաջինը, որի գոյության մասին գիտե Գանձակեցին, մեզ չի հասել.

բ) Երկրորդ թուղթը հիմնված է եղել առաջինի վրա.

գ) «Գծագործիւն...»-ը գրված է Զաքարիա և հվանե Երկայնաբազուկների պատվերով՝ ի պատասխան վրաց հոգեորականության.

դ) Թղթի նպատակը հայոց դավանանքի պաշտպանությունն է և որ կարեռն է,

ե) Տշեղինակը խնդրում է Զաքարիա և հվանե Երկայնաբազուկներին ու վրաց կաթողիկոսին, որպեսզի նրանք իրենց հեղինակավոր ծայնը բարձրացնեն բարեպաշտ թագավորներ թամարի ու Դավիթ (Սոսլանի) առաջ իրենց թագավորական իրավունքով վերջ տալու վրաց անվանարկությանը հայոց նկատմամբ և ծեռք քաշել ասալու հայոց հայածումից (էջ 242—243): Այս երկի համար նշյում են երկու հիմնական աղբյուրներ՝ Հովհան Օձնեցի և Անանիա Սանահնեցի, Այսպիսով, և. Մելիքսեթ-Բեկի առաջին մենագրությունը տեսական ու խղճամիտ աշխատանքի արդյունք է, երկուստեք կարեռությամբ (հայագիտության և վրացագիտության համար), մանավանդ իր պատմական մասով և կից բարտեղ-տախտակներով:

Հետագայում գիտնականը բազմիցս է անդրագարձել նշված գրքում քննարկված հարցերին և ոչ սակագ լրացումներ արել: Դժբախտաբար գիրքը շունեցավ երկրորդ հրապարակություն, որը, անկասկած, ավելի ամրողական ու հարուստ կլիներ ։ Աղոնցի «Պատմական ուսումնասիրություններ»-ի հրատարակիչ Ա. Խոնգկարյանը գրում է, թե «... հանգույցյալի գիտական գրեթե բոլոր

աշխատությունները կարճ մենագրությունների բնույթ են կրում: մի հանգամանք, որ ն. Աղոնցի ինքը բացաարում էր ն. Մատի ազգեցությամբ» (Փարիզ, 1948, էջ 11): Այս բնորոշումը ամբողջությամբ վերաբերում է և կոն Մելիքսեթ-Բեկին, որը թեև բառացիորեն Մատի աշակերտը չէր, բայց հետեւում էր նրան և իրեն աշակերտ համարում: ի դեպ, ակաղեմիկոս ն. Մատը մեծ ուշագրությամբ էր հետեւում Մելիքսեթ-Բեկի ուսումնասիրություններին ու հրապարակումներին: Բարեգում կարգացած իր գասախոսություններից մեկում, երբ ինքը տարված էր հաբեթական տեսությամբ, Մատը ցավում էր, որ թիֆլիսեցի իր աշակերտ և. Մելիքսեթ-Բեկը այդ ուղղությամբ արված աշխատանքները համարում է քննության կարուտ կամ թեատրանի Մելիքսեթ-Բեկը հետեւում է գասական բանասիրությամբ զբազող Մատին և, ինչպես ասվեց, նրա օրինակով ավելի նախընտրում էր հոդվածային ուսումնասիրությունը, ուսուցչի պես ինքն էլ ժամանակ չունենալով նրանք ի գերշոն ի մի բերել: 1960 թվականին լուս տեսած իիակատար մատենագիտական ամբուղյամբ պրոֆ. և. Մելիքսեթ-Բեկը 2ուրջ 600 անուն աշխատությունների հեղինակ է, որոնց մեծ մասը, համարական է, առանձին հոգիածներ ու հրապարակումներ են:

Երկրորդ ծավալուն աշխատությունը վերաբերում է վրացական աղբյուրների ուսումնասիրությանն ու թարգմանությանը: 1934 թվականին Երևանում լուս տեսավ «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին» բառահատոր աշխատության Ա. գիրքը (թ.-ը՝ 1936 թ., Գ.-ը՝ 1955 թ.): Համառոտ առաջարանում տրվում են նյութի բնութագրումը, նրա պատմական-աղբյուրագիտական արժեքավորումը: և. Մելիքսեթ-Բեկը միանգամայն ճիշտ է նկատում, որ 5—11-րդ գարերի վրացական աղբյուրների վկայությունները Հայաստանի ու հայոց մասին զավանարանական հարցերի են առնչվում, սահմանափակ նյութ պարունակելով ժողովրդի պատմության համար: Բայց նկատելու է, որ վարքարանական, վկայաբանական երկերում տեղ գտած որոշ տեղեկություններ շափականց կարեռ են Հայաստանի անցյալին վերաբերող որոշ հարցերի բննության ժամանակ: Հայերին լեզվով հիմնականում

¹ Նախատեսված շորորոր գիրքը, որտեղ ամփոփվելու էին «Վիմական տարեգիրքը, հայերենից թարգմանված երկասիրությունների վարիանտները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարեռ ցանկերը», դեռևս հրապարակված չել: Մեզ հայտնի էլ հանգույցյալ պրոֆեսորը այն ավարտել է,

պահպանվել է Հակաքաղկեդոնական գրականություն, որտեղ նույնքան միակողմանիություն կա, որքան միաբնակության դեմուզաված քաղկեդոնական երկերում: Ուստի այս ոչ երկրորդական խնդրի ուսումնասիրության համար բյուզանդական ավանդներին հետևող վրացական հոգենոր երկասիրությունները կարմոր աղբյուր են՝ համեմատության միջոցով ճշմարիտ պատկերը ներկայացնեալու համար: Լ. Մելիքսեթ-Թեկը չի սահմանափակվել միայն տեքստերի թարգմանությամբ, ներկայացվող աղբյուրին վերաբերող համառոտ տեղեկանք ու մատենագիտություն տալուց բացի, նա կցել է Հարուստ և ի ինքնուրույն ուսումնասիրության արժեք ներկայացնող ծանոթագրություններ, մեծ մասամբ տեքստարանական-աղբյուրագիտական բնույթի: Ճիշտ է, այդ աղբյուրները իրենց ընդգրկումով ու նյութով չեն չափվում հայ մատենագիրների մոտ գտնվող Վրաստանին վերաբերող տեղեկությունների հետ, այնուամենայնիվ, ինչպես վերևում նշվեց, հույժ անհրաժեշտ են ու կարևոր: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Թեկը թեև ներկայացնում է վրացերենում արդեն հրապարակված նյութեր, բայց ոչ սակավ գեպերում քաղաքածարար թարգմանությունը կատարում է իր իսկ համեմատած կամ տպագրության պատրաստած բնագրերից: Այսպես, օրինակ, Արևեն Սափարացու «Վրաց» ու Հայոց բաժնման մասին» երկասիրությունը մինչև այժմ էլ հայտնի է մի հրատարակությամբ («Քրոնիկներ», հատ. 1), մասամբ պակասվում: Լ. Մելիքսեթ-Թեկը նախ երեք ձեռագրերի համեմատությամբ վերականգնած բնագիր է կազմել, ապա թարգմանել է Հայերեն: Ի դեպ, այս երկը ամենից ավելի ամբողջական է ներկայացված, ունենալով փոքր կրածումներ: «Վրաց» աղբյուրներ...-ի երեք հատորները մինչև այժմ հայեաներին մատչելի միակ հրատարակությունն են: Բայց անհրաժեշտ է նշել, որ հատվածարար թարգմանություններից օգտըվելը կապված է որոշ գժվարությունների հետ: Ընդհանուր տեքստից կտրված հատվածը օգտագործողին կարող է ոչ լրիվ համոզիլ եղանակացության հանգեցնել: Այժմ առկա է վրաց տարեգրքի («Թարթիս ցիոնվրեբա-լի») դիտական հրատարակություն (հրատ. Մ. Ղաուկշշիշվիլի), որից պետք է թարգմանվեն ամբողջական ստեղծագործություններ, կցելով հին հայերեն խմբագրությունը: Սույն անհրաժեշտությունը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Թեկը ոչ միայն չէր ժիշտում, այլև ցավում էր, որ հայ-վրացական բանագետները պահպանվել մասնագետներ (խոս-

քը, իհարկե, հայազգի վրացագետներին է վերաբերում) քիլ ունենք: Հատկապես շատ անելիք կա միջնադարույան վրացական հրովարակների ու եկեղեցական-աշխարհիկ այլ փաստաթղթերի վկայությունները հայոց մասին ուսումնասիրելու և լուսարանելու գործում: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Թեկը նախատեսում էր վերաբարգմանել հայկական բնագրի հիմքի վրա գոյացած վրացական որոշ խմբագրություններ (օրինակ՝ նշանավոր «Պատմություններ»), բայց շատ այլ նախատեսումների հետ այս աշխատանքը ևս անվարտ մնաց:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Թեկը իր տեսական գիտական աշխատանքի ընթացքում պահանջետարրություն լի ցուցաբերել հայկական ու վրացական բնագրերն ուսումնասիրելու և հրատարակելու նկամամամբ: Դեռևս 1920 թվականին նա հրատարակում է ուկարը Ս. Դրիգոր. Պարթիկ» վրացական խմբագրությունը, որը, ուսումնասիրողի համոզմամբ, թարգմանված է 1081 թվականին, հունական մետափրասյան խմբագրությունից: Թեև որոշ ժամանակ անց ակադեմիկոս ի. Զավախիշվլիին ու պրոֆ. ի. Աբովյան առաջին առարկեցին բնագրի հարցում, բայց ամենակարեվորը տեքստի հրատարակությունը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Թեկի աներկրա վաստակն է: Ի դեպ, լեզվական-տեքստարականական հարցերում նրան օժանդակ է խոշորագույն վրացագետ-արեկելագետ ակադեմիկոս Կ. Կեկվիձեն, որին հրատարակիլ շնորհակալությամբ է հիշում: Տարիներ անց (1952 թ.) նա հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի «Պատմությին նահանդին Սիսական» երկի 86-րդ գլուխ վրացական թարգմանությունը, կատարված 18-րդ դարում: Հատկապես նշանավոր է Վախտանգ Զ-ի «Օրենսգրքի» հայկական մասի (Մխիթար Գոշի «Դատաւանագրքի») հրատարակությունը, վրացական բնագրին նախորդող առաջարանով (1927 թ.): Վրաց «Օրենսգրքի» հայերենից թարգմանված մասը հայտնի էր դեռևս թրոսսեին ու Վահան վարգապետ Թաւատայանցին. վերջինս կազմել էր նույնիսկ հոդվածների համապատասխանության աղյուսակ-տախտակ: Այնուամենայնիվ, Լ. Մելիքսեթ-Թեկի հրատարակությունը բազմաթիվ նոր հարցեր է առաջարարում: մասնավորապես այստեղ կան հոդվածներ, որոնք յուրովի են խմբագրվել թարգմանիչների (կամ համապատասխան այլ իրավասու անձանց) կողմից և վրաց իրականության կնիք են մատնանշում: Հրատարակիլը առաջարանում խոստանում է հետագայում առանձին ուսումնասիրություն նվիրել հայոց Դատաս-

տանագրքի 18-րդ դարի առաջին տասնամյակի վրացերեն թարգմանությանը: Եթե այդպիսին պահպանվել է հանգուցյալ պրոֆեսորի անտիպ աշխատությունների մեջ, ասլա նրա հրատարակության կարևորությունը կասկածից դուրս է:

Տասնամյակներ շարունակ Թիֆլիսի համալսարանում հայ գրականության (մատենագրության) պատմություն դասախոսելով, լ. Մելիքսեթ-Բեկը անհրաժեշտ է համարում վրացերեն լեզվով հայ գրականության պատմություն հրատարակել: Այս լուսա է տեսնում 1941 թվականին (240 էշ): Ի դեպ, վրաց ընթերցողը մինչ այդ ժանութ էր ակադեմիկոս հվանե Զավախիշվիլու «Հայոց հին պատմական մատենագրություն» աշխատությանը (1935 թ.), որտեղ ներկայացված է հայ մարտիրոսագրությունն ու վարքագրությունը ճ-րդ գարում, վերջինիս մեջ ներառնելով Ազաթանգեգոսի և Կորյունի աշխատությունները²: լ. Մելիքսեթ-Բեկը կազմում է ավելի ընդհանուր բնութագիր ունեցող ձեռնարկ, ինչպես մեկ ուրիշ առիթով ասել ենք, որոշակի կիրառելով ակադեմիկոս Կեկելիձեի նշանավոր երկինատորյակի պարբերացման փորձն ու եղանակը: լ. Մելիքսեթ-Բեկը հայ դրականության հասկացությունը արդարացիորեն շի սահմանափակել գեղարվեստական պայմանականությամբ: Այստեղ համառոտակի ներկայացված են բոլոր նշանավոր մատենագիրները:

լ. Մելիքսեթ-Բեկը մեծ վաստակ ունի նաև հայ և վրացի մատենագիրների գրական ժառանդության ուսումնասիրման և հրատարակման գործում: Հովհաննես Վանականի, Միխիթար Գոշի և շատ այլոց անտիպ աշխատությունների ուսումնասիրությունը, բանասիրության մեջ առաջին խոսքն ասելու պարագան նշանակալի և պարտավորեցնող ծառայություն են: Նա չէր կիսուափում և կնճռու կամ կնճռուած հարցերի քննություններից, ինպես, օրինակ, «Քորեական պատու» թե «Փորիկոս» (Փուրդեն թե Կյուրիկե), որ սկզբունքային կարևորություն ունի Կախեթ-Շերեթ-Սոմխեթի պատմության համար (1951 թ.) կամ հայոց-վրաց-աղքանների այրութենի սաեղծման խնդրի քննությունը (1957 թ.), այդպիսին է Դիոնիսիոս Արիսպագու և Պետրոս Վրացու նույնանձնության հարցադրությունը:

² Աշխատության առաջարանում կարդում ենք. «Յաւրաքանչյաց կրթած վրացու համար աներածեցա է իմանալ իր հաւաքան եղայական ծազալողի՝ հայոց քազմատանը, սակայն անշափ նետաբերական հակառագիրը» (էջ VI):

Պրոֆ. լ. Մելիքսեթ-Բեկի գիտական ժառանգության բաղկացուցիչ մասն են կազմում հնագիտական, աղքագրական և վիմագրագիտական ուսումնասիրությունները: 1938 թվականին նա հրատարակեց «Մեղամիթյան մշակությը Վրաստանում» շափաղանց արժեքավոր ուսումնասիրությունը, հետագայում լրացնելով նոր նյութերով՝ «Մեղամիթյան մշակությը Վրաստանում» և նրա վերապրուները Ուսութավելու դարաշրջանում» (1943 թ.): Նա քիչ վաստակ է ունի նաև միշնագարյան վրացական ու հայկական (նաև աղվանական) հուշարձաններն ուսումնասիրելու գործում, այդ թվում՝ Մշիմեթյայի տաճարը (նախապես Արմաղիի մասին), Թոնեղի հուշարձանները, Թիֆլիսի վանքն ու Ս. Գևորգ եկեղեցին, Սևանի վանքը, Էջմիածնի, Գարեջայի և բաղմաթիվ այլ վանքեր ու մենաստանները: լ. Մելիքսեթ-Բեկի ուսումնասիրությունների բնորոշ կողմնայն է, որ նա վարպետորեն է համագրում հնագիտական տվյալները պատմական սկզբանական ու արձանագրությունների ընձեռած վկայությունների հետ և եղրակացությունը կառուցում բացառակես փաստական նյութի վրա: Հարազատ մնալով գասական բանասիրության ավանդություններին, նա ամենայն բարեխղճությամբ ու մանրակրկիտությամբ ներկայացնում է իր ուսումնասիրած հարցի պատմությունը՝ միշտ և անխոտիր արժանին հատուցելով իրենից առաջ զբագված մասնագետներին: Եթե լ. Մելիքսեթ-Բեկի որևէ աշխատության մեջ պատահեն վկայակոչության պակասի դիպերը, ապա դա բացառակես հեղինակին անծանօթ լինելու կամ գրիպման արդյունք է: լ. Մելիքսեթ-Բեկի գիտական բարեխղճությունը ամեն մի կասկածից գուրս է: Հետեւ վերով ն. Մատի, Զ. Օրբելու, Գ. Կաթողիկոս Հովսեփյանի, Կ. Կոսաւանյանցի և ուրիշ անվանի բանասերների ավանդություններին, լ. Մելիքսեթ-Բեկը հայկական ու վրացական վիմագիր արձանագրությունները վերծանող և ուսումնասիրով լավագույն գիտականներից էր: Նա հեղինակել է տասնյակից ավելի աշխատություններ, որտեղ վիմագրական նորովյներ են առաջարկվում, իսկ երբեմն էլ ինքնատիպ լուսաբանությամբ ներկայացվում արգել գիտությանը հայտնիները: Հատկապես նշանավոր է Գարեջայի մոնղոլական շրջանի (1352 թ.) բառալեզվան արձանագրության (վրացերեն—հայերեն—պարսկերեն—ուղղութերեն) հայտնաբերումն ու վերծանումը (1940—1953 թ. թ.): Վերջինիս համագրումը 14-րդ դարի վրաց Անանունի «Ժամանակագրության» ընձեռած

տվյալների հետ, թեև ոչ տառացիորեն ժամանակակից, բանասերների ու պատմաբանների առաջ մի շարք խնդիրներ է դնում։ Չորս լեզուներով գրելու պարագան ինքնին բազմանշանակ երեսով է, մանավանդ եթե նկատի առնենք տվյալ մենաստանի որիշ արձանագրություններ ևս, այդ թվում և հայրեն։ Լ. Մելիքսեթ-Թեկը պրատելու զարմանալի կարողություն ուներ։ Հաճելի անակնկալ էր 874 թվականի Սևանի հայերեն արձանագրության հայտնարերումը, որտեղ միշնադարյան աղբյուրներում առաջին անգամ հիշաակվում է Երևան բնակավայրը։ Հանգուցյալը մասնավոր ուշագրությամբ ժողովում ու հրատարակում էր Վրաստանի սահմաններում պահպանված հայերեն արձանագրությունները (Ատեն, Դմանիսի, Գառեջա, Սավկիս-Թեկեթ և այլն)։ Նա մտադիր էր Վրաստանում պահպանված հայերեն արձանագրությունների դիվան կազմել։ Որբանով մեզ հայտնի է, այդ աշխատանքը ավարտված է, բայց թե արդյո ք պատրաստ է տպագրության՝ դժվարանում ենք ասել։

Ոչ ծավալուն մեկ հաղորդմամբ անհնար է բնութագրել գիտական այն մեծ ժառանգությունը, որ պրոֆ. Լեռն Մելիքսեթ-Թեկը թողել է կովկասագիտությանը։ Ընդհանուր նկարագիրը տալու համար նշենք, որ երախտավոր գիտական աշխատանքն այն մեծ ժառանգությունը, որ պրոֆ. Լեռն Մելիքսեթ-Թեկը թողել է կովկասագիտությանը։ Հայամբ 1930 թվականին լուս աեսավ լ. Մելիքսեթ-Թեկի «Սայաթ-Նովայով» ինքնությունը։ Վրացերեն գրույկը, որը, ինչպս մեկ ուրիշ առիթով նշել ենք, կարևոր ավանդ է սայաթնովայագիտության մեջ։ Փաստորեն առաջին անգամ նա ապացուցեց, որ Հ. Աճառյանի նկարագրած թավրիդի ձեռագրի հիշատակագրողը ինքը Սայաթ-Նովան է։ Ճինգ տարի անց նա վրացերեն է թարգմանում երգչի հայերեն խաղերը և հրապարակում մի արժեքավոր առաջարանով։ Նա կազմել է ու հրատարակել Շամշ-Մելքոյի երգերի ժողովածուն, առաջինը հրապարակ բերել Գեվորգ Գորեցու երկեղվայան բանաստեղծությունները և այլն։ Լ. Մելիքսեթ-Թեկը հաճախ դրազել է և թարգմանությամբ՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն, ոռուերենից հայերեն։

Ի վերջո, երկու խոսք էլ լ. Մելիքսեթ-Թեկի մատենագիտական աշխատությունների

մասին, 1949 թվականին թիֆլիսում լրացած նոր ու ուշագույն գիտականի պատմության դրագոր աղբյուրների հրատարակությունները քարտարանի առաջին զիրքը։ Այստեղ ներկայացված են 5—19-րդ դարի 60-ական թվականների վրացական աղբյուրները, իսկ երկրորդ բաժնում՝ հայկական աղբյուրները։ Վրաստանի մասին, «Քաբտարան»-ը սպառիչ աեղեկություններ է հաղորդում ավալ սկզբնաղբյուրի մասին, մասնավորապես՝ հեղինակի, խորագիր, գրչության ժամանակի, բովանդակություն, ծագման անգամ հաղորդում ավագան կազմակերպություններ, գիտական գրականություններ, թարգմանություններ, գիտական գրականություններուն նույն սկզբունքով։ Ներկայացված են հայկական աղբյուրները։ Ազգաթանգեղոսից մինչև Վարդան Օձնեցի։ Մրագրված հաջորդ երկու գրքերում, ինչպես հեղինակի առաջարանից ենք տեղեկանում, ներկայացվելու էին Վրաստանի մասին նյութեր պարունակող այլ աղբյուրները։ Գանական հունարեն և լատիներեն, բյուզանդական, ասորական, արաբական, պարսկական, թուրքական, սլավոնական-ուսական և արևմտաեվրոպական լեզուներով։ Որբանով անձնական դրույցներից մեզ հայտնի է աշխատության երկրորդ զիրքը ևս պատրաստ է ապագրության։

Պրոֆ. լ. Մելիքսեթ-Թեկի յուրաքանչյուր աշխատություն ինքնին նաև մասենագիտառ թյուն է։ Առանձին նա կազմել է մատենագիտություն՝ «Վագրենավորը հայ գրականության մեջ», Դրիշաշղիլու հայերեն թարգմանությունները, Խաչակրանը վրաց գրականության մեջ և շատ ուրիշ թեմաներով։

Պրոֆ. լ. Մելիքսեթ-Թեկը իր ժողովրդի ներկայից կտրված գիտնական լչու նա արձագանքել է զրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին, սրտի կակիծով բողոքել հայ և վրաց ժողովուրդների միջև խառնակություն ստեղծող խմբավորումների գեմ, հետեւ ու պահպանել հայկական հնությունները Վրաստանում, վրացականը՝ Հայաստանում, միշտ հավատալով իր ժողովրդի ապագային, սիրելով նրան և թանկ գնահատելով նրա բախտակցին՝ վրաց ժողովրդին։

լ. Մելիքսեթ-Թեկը ուղղամիտ, ուղղախոս, անկաշառ ու անմիջական անձնավորություն և գիտնական էր։ Հավասարած ենք, որ նոր սերունդը սիրով կհատկացնի լ. Մելիքսեթ-Թեկին այն տեղը, որի իրավունքը նա վաստակել է երկարամյա աշխատանքով։





ՄԱՅՐ ԳԱՅՐԵՆԻ ԳՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔԻ

Ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյամի ծննդյան 90-ամյակը. — Լրացավ ականավոր գիտնական, մեծ հայագևութ, լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյամի ծննդյան 90-ամյակը: Նշանակալի այս տարեթիվը շնորհին նշվեց Հայաստանի գիտական հասարակայնության և մտավորականության կողմից:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրաչյա Աճառյամի անվան լեզվի հիմնադրություններ մեծանուն գիտական նատարջան, որի ընթացքում կարդացվեցին դասախոսություններ մեծանուն գիտական գործունեության մասին, նշելով նրա մեծ ծառայությունը ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային լեզվաբանության բնագավառում:

Բազմամարդ հավաքութ տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի մեջ դահլիճում: Համայսարանի ունետոր պրոֆ. Հ. Բատիկյանը և այլ գիտականներ նշեցին Հ. Աճառյամի քեղմնավոր գործունեությունը հայագիտության և ընդհանուր լեզվաբանության ասպարեզում: Դասախոսներից մի քանիսը պատմեցին հուշեր Հ. Աճառյամի մասին:

Հուզիչ հանդես տեղի ունեցավ Հ. Աճառյամի անոնք կրող միջնակարգ դպրոցում: Հանդեսին հրավիրված էին հանգույցայ հորելյարի կինը՝ տիկին Սոփիա Աճառյամի և դուստր՝ Քնարիկ Աճառյամի: Լեզվի և գրականության ինստիտուտներից հրավիրված գիտական աշխատողները և Քնարիկ Աճառյամը հիշողություններ պատմեցին գիտականի կյանքից: Վերջում, դպրոցի աշակերտության ուժերով, կայացավ մեծ համերգ:

Հ. Աճառյամի ծննդյան 90-ամյակին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան նաև Երևանի այլ գիտական-մշակութային հաստատություններում, ինչպես նաև Լենինականում, Կիրովականում, Ալավերդում և այլ լայներում:

«Դիվան հայ վիմագրության». — Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան ձեռնամուխ է եղել հայ վիմագիր արձանագրությունների հրատարակությանը, որը լինելու է բազմահատոր:

Հայաստանի գիտականները մինչև այժմ հայտնաբերել են ավելի քան 10 000 վիմագիր արձանագրություններ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում մեր ծողովրդի անցյալ պատմության վերաբերյալ: Բոլոր այդ արձանագրությունները հրատարակվելու են:

Արդեն լուս է տեսել «Դիվան հայ վիմագրության» ժողովածորի առաջին հատորը, որի մեջ գետեղված են 250 արձանագրություններ, հայտնարերված ակադեմիկոս Հովհեփ Օրբելու կողմից 1910—1915 թվականներին Անիի պեղումների մամանակ, երբ Հ. Օրբելին պաշտոնավարում էր Նիկոլա Մատի արշավամբում իրեն արձանագրուց: Արժեքավոր այդ վիմագրությունները պարունակում են տեղեկություններ Անիի տաճարների, պալատների, կամորշների, քաղաքի պարիսպների, ջրանցքների կառուցման վերաբերյալ: Դրանք լույսովի արհիվային փաստաթյուններ են Բագրատումյաց մայրաքաղաքի սննդամական և մշակութային կյանքի վերաբերյալ:

Նոր աշխատություն Մովսես Խորենացու մասին. — Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լուս է տեսել նրանու մասին պատմաբան Հ. Սարգսյանի աշխատությունները, որը կոչվում է «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» խոնողոգիական սիստեմը»:

Ուսումնասիրելով պատմանոր աշխատության խրոնոգիան (ժամանակագրությունը), հեղինակը առնում է, որ Խորենացու խրոնոլոգիան խիստ արժեքավոր է: Ուսումնասիրության շնորհիլի հեղինակին հաջողվել է Խորենացու խրոնոլոգիական սովորմերու վերածել պատմական լուարժեք աղբյունների:

Եղիսաբեդի գիտնականը, Բայտնարերելով՝ «Հայոց պատմության» խորհուրդի կամ սխառեմի ատենաման սկզբունքները, փորձում է պարագնել, որ Խորենացու աշխատությունը կարող էր լինել միմիան և դարի Հայաստանի պատմական զարգացման աղբյուր և որ Խորենացին եղել է նոյն դարի համապատականության փակուն ներկայացուցիչներից մեկը:

Արժեքավոր աշխատություն է Լեհաստանի հայ գաղութի պատմության մասին. — Լյուրինին համապատանք Բրատարակությամբ լուս է տեսել լիներեց լեզվով հայութի Սիրուպակա Զարքչևսկա-Դուրաստվայի մի հետաքրքրական աշխատությունը, որի վերագիրն է «Հայերը Զամոսդիայում և նրանց դերը Լեհաստանի և Արևելքի միջև առևտրական և մշակութային կապերի մեջ»:

Գիրքը արժեքավոր աշխատություն է Լեհաստանում հայ գաղութի կազմակորման և կյանքի մասին: Այն ընդգրկում է ԺՈ դարի վերջերու մինչև ԺՈ դարի ակիզիրի ժամանակաշրջանը: Աշխատության մեջ հայօքանանին տրված է Լեհաստանի հայկական գաղութի, հատկապես Զամոսդիա քաղաքի հայերի հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի պատուելու Շաթեկան են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հայերի կատարած դերին՝ Լեհաստանի և Արևելքի մշակութային փոխհարաբերությունների մեջ:

Իր աշխատությունը գրելիս թեզին անդիմակը լայնորեն օգտվել է Կորակովի, Վարշավյանի և այլ քաղաքների արխիվներից:

«Հայաստան» տարեգիրք. — Երևանի հանրային գրադարանի և գիտությունների ակադեմիայի գրադարանները ձեռնամուս են եղել պարբերական տարեգրի հրատապակության: Տարեգրը կրցվելու է «Հայաստան»: Այն պարունակելու է Հայաստանի և հայերի մասին ամեն տարի տարեր լեզուներով հրատարակվող գրականության ցանկը և առավել արժեքավոր հրատարակությունների կամ հոդվածների համառուտակի բոլոր հայություններում:

Արդեն լուս է տեսել տարեգրի առաջին գիրքը, որն ընդգրկում է 1988 թվականի նյութերը: Հաստո՞ր ունի 10 գլուխ, որ տրված են բիբլիոգրաֆիական տեղեկություններ Հայաստանի ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության, հասարակական կյանքի վերաբերյալ պատմի բան 8 000 գրքերի և ամսագրին հոդվածների մասին, որոնք լուս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ Սովորական Սիրության մյուս համբաւառություններում:

Նկարիչ Մինե Աքեղյանի ցուցահանդեսը. — Նկարիչ Մինե Աքեղյանի տանը բացվել է Հայաստանի ժողովրդական նկարիչ Մինե Աքեղյանի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացված են Շվեյցարի 80 տարվա աշխատանքների լավագույն գրաֆիկական գործերը, որոնցում վարպետությամբ պատեհված են հայութի բնաշխարհը, մեր երկու մարդիկ, բրամ առօրյան: Մի շարք գործեր նվիրված են պատեհազմին և խաղաղության:

Ցուցահանդեսը մեծ նետաքրորոշյամբ է հիմնվում Երևանի արվեստուսեր նախարակույթային կողմից:

Հայկական գորգեր. — Տարեցարի լայն ճամաչում են գտնում հայկական գորգերը, ինչ Մվեսուական Սիրության և թէ՛ արտասանման երկրներուն: Վերջին տարիներու հայկական գորգերը ցուցադրվել են Բամամիտութեական և Միջազգային բոլոր արյունաբերական ցուցահանդեսներու ամեստիր:

«Հայգորդ» փիրման ներկայական պատրաստվում է մի նոր միջազգային ցուցահանդեսի, որը տեղի է ունենալու կանույանում: Ֆիրման ցուցահանդեսին կմերկայացնի «Կիլիկիա», «Նորութիվ» և այլ առունեարով նոր գորգեր, որոնց միագծնը պատրաստել են հայ մասնագետ գորգագործ Ալարիշները:

Բարեկամության թատրոն. — Հայաստանի թատերական ընկերությամբ նախանձեանությամբ Երևանում կազմակերպվել է մի նոր թատրոն, որը կոչվում է «Բարեկամություն»: Այս նախաւակի համար հատկացված է Սուլդուկյանի անվան թատրոնի շենքը:

Ապրիլի կեսերին տեղի ունեցավ թատրոնի բացումը: Երկու օր շարունակ իններս եկան Սուլկիայի Փոքր թատրոնի (որը հենագույն դրամատիկ թատրոնն է Շուտաստանում) մի խումբ ականավոր դերասաններ և դերասանութիւններ: Նրանք խաղացին հասկանածներ Գրիգորեոսի և Նուլիքի պատուաս, Օստրովսկու «Գալեր» և ոչխարհներ», Լեհմոնտովի «Դիմականանդես» և ժամանակակի ոռու հեղինակների գործերից: Լեհի-լեցուն դամբիթը բացառիկ շերմությամբ ընդունեց ոռու բեմի վարպետների և լույսերը:

Սուակիային հանդես են գալու Սուլկիայի, Լեհինագրադի, Ուկրաինայի, Մեծքարայի և երկրաների և Անդրեյովիլլայի հարեւան համբաւառությունների լավագույն թատրոնների մերկացուցիչները:

Երիտասարդության տուն. — Այս տարի Երևանու մելքներու է երիտասարդության տաճ կառուցումը: Դա լինելու է մի նոր, հոյակերտ շենք, մայրաքաղաքի տեսարժան վայրերից մեկը: Տունը կառուցվելու է ուսանողական թադամաստում, հանաբերի սարաւանքի:

Ծենքը կներկայացնի երիտասարդական ակումբ, ժամանցի վայրը Այն կունենա երածշտական, գուկան, լուսամշարչական սպոնսեր, բազմաթիվ խաղասեմանկներ, ժամանակի սրաբերեց: Հանդիսասրահը, որը կունենա 1 000 տեղ, կծառացի ժողովների, Աերկացացուների, համերգների ու կինոց ցանցումների համար: Ծենքը կունենա մեծ լոյսավազան իր պահարանով (սոլյարի), բասկետբոլի, վոլեյբոլի և թեմիսի հրապարակներ:

Երիտասարդության տաճ բաղկացուցիչ մասն է կազմելու 14 հարկամի մյուսանցոցը, 500 նոդու համար: Այն կունենա իր սրճարանը, ուստորածը և համարդակները:

Ծենքի դահլիճներից մեկը, որն ամենից շքեղ ու գեղեցիկ է լինելու, ծառայելու և իրուն պամական դրսության դամբիթ:

Քիմիական հակազդիչների գործարան.— Երևանի նարավարներան ծայրամասաւում վեր են բարձրացել քիմիական հակազդիչների (ունակտիվների) խոշոր գործարանի շենքերը: Արտադրամասերից մի քանից արդեն գործում են, մյուսները կաթավորվում են, իսկ մեծ մասը դեռ կառուցման ընթացքի մեջ է: Պատրաստի արտադրամասերը աշքի են ընկնում իրենց բացառիկ մաքրությամբ. կարծեք գործարան չէ, այլ պալատ:

Այս գործարանն իր տեսակի մեջ խոշորագույններից մեկն է լինելու Սովորական Միության մեջ: Այց արտադրելու է մի քանի հարյուր տեսակ օրգանական քիմիական հակազդիչներ, որոնք գործ են աճվում արդյունաբերական ամենատարրեր ճյուղերի մեջ և տիեզիլական կարիքների համար: Գործարանն արդեն մի քանի տեսակի արտադրանք է տայիս, որոնց թվում գինեթրու:

Գործարանն իր ամբողջ կարուղությամբ կակսի աշխատել 1987 թվականին:

Երևանի քաղաքային տնտեսությունը 1988 թվականը.— Ընթացիկ տարում Երևանն ավելի կրաքելարգվի ու կծառավայովի: Կառուցվելու և օգտագործման է հանձնվելու 284 000 քառակուսի մետր քամական, 8 դպրոցական նոր շենքեր, ավարտվելու է համալսարանի նոր շենքերի կառուցմուն:

Մինչև աշուն կառուցվելու են «Արմենիա» հյուրանոցի երրորդ մասը, նորքի ճոպանութին, քաղաքային ճմենային լողավազանը, Երևանյան լճի առաջին հատվածը: Բացվելու են 8 նոր բանուկ փոլտուներ և բարեկարգվելու է 15 փողոց: Ասֆալտապատվելու է 1 000 000 քառակուսի մետր տարածություն:

Բարեկավելու է ջրամատակարարման գործը: Զքուրույն ցանցը կընդարձակվի 25 կիլոմետրով: Մինչև Բումին կավարտվի Կապույտ լճից սկիզբ առնող ջրատարի կառուցումը, որով քաղաքին տրվող ջրի քանակությունը կավելանա վայրկանում 1 500 լիտրով: Կյուրին կընդարձակվի 25 կիլոմետրով:

Գազամատակարարման գործը ևս լայն մտահոգության առարկա կլիմի: Գազամույթի ցանցը կընդարձակվի 25 կիլոմետրով: 19 000 բնակչության և 45 խոշոր կաթսայատեր կատանա գազ:

Երևանյան լիճը.— Տարունակվում են Երևանյան լիճ կառուցման աշխատանքները: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Հրազդանի ձորով փակող հողապատճեղի կառուցման վրա: Այդ պատճեղը կունենա 450 մետր երկարություն, 80 մետր բարձրություն: Պատճեղի ստորին մասի լայնը է 150 մետր, իսկ վերի մասին՝ 80 մետր, որը և լինելու է պատճեղի վրայով անցնող ապագա փոլտունի լայնը:

Պատճեղի կառուցումը այս տարի կավարտվի, որով բնական հուկա փոտորակը կացվի ջրով և կգոյանա

լիճ, որը կունենա մեկ կիլոմետր երկարություն, 750 մետր լայնություն և կգրավի 85 մետր տարածություն: Լճի միջին խորությունը կլիմի 18 մետր, տարությունը կազմում է 6 000 000 խորամարդ մետր ջուր:

Փոստակում ընկած նոր Կոդը գյուղը այս տարի տեղափոխվելու է դեպի Շամույման, որ գյուղացիների համար կառուցվում են բազմաթիվ շենքեր:

Լճի ափերին հետագայում կատեղծվեն լողավարքը, գրուագիները և հանգստավայրեր:

Հողայատնեցի մետ զոգընթաց կառուցվում է ապագա նոր փողոցը, որն անցնելով պատճեղի վրայով, իրար կկատի քաղաքի կենտրոնական և Շամույման շոշանական մեջքը:

Դիլիջանի գարգացման հեռանկարները.— Տարեցտարի բարեկարգվում ու մեծանում է Դիլիջանը, Հայատամանի այդ գեղեցիկ ամառանոցալին քաղաքը, որը մինևոյն ժամանակ հիմնայի բուժավայր է: Զով ամառը, մեղմ ձմեռը և հանքային բուժիչ ջրերը հետարապետում են ընձեռում, որ առաջիկայում Դիլիջանը դառնա Սովորական Միության նշանակոր բուժավայրերից մեկը:

Քաղաքում լայն թափով կատարվում են շինարարական աշխատանքներ: Տայրամասերին առաջացել են նոր թաղամասեր: Վերակառուցվում է քաղաքի կենտրոնը: Բացվում են նոր, լայն ու բարեկարգ փողոցներ, կառուցվում են նոր հանգստան տներ, հյուրանոց-պանսիոնատներ, հասարակական-մշակութային շենքեր, մարզական հրապարակներ: Հունիսից կակսի գործել մի նոր խոշոր սանատորիա:

Նախատեսված է հետագայում սանատորիաներն ու բուժական շենքերը կենտրոնացնել մի տեղ, քաղաքի հինգու, որի համար անտառների խորքում հատկացված է հատուկ մի շենադ վայր:

Հնեացիկ տարում Դիլիջանի գարգացման ու բարեկարգման վրա ծախսվելու է 5 անգամ ավելի գումար, քան 1958 թվականին և 20 տոկոսով ավելի քան անցյալ տարի:

Քար մշակող նոր մեքենան:— Քար կտրու և հղլու շատ մեքենաներ կան Հայաստանի տարեկ կառուցման վայրություն: Այդ մեքենաները նախագծվել են մեր ինքնեներների կողմից ու պատրաստվել Լենինականի հաստոցաշխական գործարանում: Վերջերս նոյն գործարանը թողարկեց գրանիտ ու մարմար կտրու մի մեքենա, որը հաջողությամբ փորձարկվեց թե՛ մեզ մոտ և թե՛ Մոսկվայում ու արձանացավ շենիանուր հավանության: Կտրելու գործողությունը կատարվում է ոչ թե այլ նայատակի համար մինչև այժմ գործածվող աղոցի, այլ պամատի սկավառակի միջոցով, որով գործողությունը վեց անգամ ավելի արագ է կատարվում, քան սովորական ձևով:

Այս մեքենայի օգնությամբ նարմարն և գրամիտն սալինեներ են կտրատվելու շինարարության համար:

